ZCMC

ԶԱՆԳԵԶՈՒՐ
ՊԱՀՊԱՆԵԼՈՎ
ԱՐԺԵՔՆԵՐԸ



20

ԿԱՅՈՒՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ԿԱՅՈՒՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈՒԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հակիրճ **04**
Գլխավոր տնօրենի ուղերձը **06**
Կայուն զարգացման գծով տնօրենի ուղերձը **08**

01. ԶՊՄԿ-ի մասին **10**
Ներգրավվածություն. Ոլորտի նկատմամբ բարձր մակարդակի պարտավորությունների ստանձնում 13
Բիզնես մոդել և արժեշղթա. պատասխանատու և հաշվետու գործելաոճի ապահովում 14
Պատասխանատվություն մատակարարման շղթայում. մեր բիզնեսի բոլոր ոլորտներում կայուն մոտեցման կիրառման նպատակ 16

02. Տնտեսական ազդեցություն **18**
Ազդեցությունը ներպետական մակարդակով. պատասխանատու ներդրում տնտեսության մեջ և համայնքներում 20
Տնտեսական ազդեցությունը թվերով 22
Անուղղակի տնտեսական ազդեցություն 24
Գնումներ. տարածաշրջանի տնտեսության զարգացման խթանում՝ խրախուսելով տեղական մատակարարումները 26
Հարկային պարտավորությունների կառավարում. հարկային օրենսդրության համապատասխանության ինտեգրումը մեր ռազմավարությունում 30
Շահագրգիռ կողմերի ներգրավում. հարկային հարցերի հետ կապված մտահոգությունների կառավարում 32

03. Կորպորատիվ կառավարում. ղեկավարության բարեվարքության պահպանում **34**
Կորպորատիվ կառավարման մեր սկզբունքները 36
Կառավարման և ղեկավար մարմիններ. կորպորատիվ կառավարման պատշաճ կառուցված և թափանցիկ մեթոդների կիրառում 37
Թեկնածուների առաջադրման և ընտրության գործընթաց. ներքին և արտաքին կանոնակարգերի պահանջների կատարման մոնիտորինգ 40
Ազդեցությունների կառավարման պարտականությունների պատվիրակում. կայուն զարգացման համար բարձր մակարդակի պատասխանատվության թիրախավորում 40
Վարձատրություն. վերջինիս համապատասխանեցում ռազմավարական նպատակներին և գործառնական խնդիրներին 41
Կոռուպցիայի դեմ պայքար. միջազգային և տեղական օրենքների, ստանդարտների և քաղաքականությունների պահանջների խստիվ պահպանում 44
Բողոքների դիտարկման ընթացակարգ. խնդիրների լուծում համակարգված գործընթացի միջոցով 46
Նորարարություններ. համապատասխանություն համաշխարհային միտումներին 47

04. Կայուն զարգացման ապահովման մոտեցում **48**
Կայուն զարգացման կառավարման համակարգ. կայուն զարգացման քաղաքականության ներառումը մեր հիմնական ռազմավարության մեջ 50
Գործունեության համապատասխանեցումը ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին 51
Շահագրգիռ կողմերի ներգրավում 58

05. Մարդկային կապիտալ. հանդիսանում է ԶՊՄԿ կայուն զարգացման հաջողության գրավականը **60**
Կանոնակարգեր և անձնակազմի կառավարում. համապատասխանեցում համաշխարհային ստանդարտներին 62
Փոփոխությունների կառավարում. արդյունավետ հաղորդակցություն և թվային փոխակերպում 63
Անձնակազմի կառուցվածք և հոսունություն. տեղական, կայուն աշխատուժի ձևավորում 64
Արտաքին փորձի կիրառում. Ընկերության աշխատող չհանդիսացող անձանց ներգրավում 65
Աշխատանքի ընդունում. տեղական զբաղվածության խթանում 66

Բազմազանություն և ներառականություն. ոչ խտրական աշխատանքային միջավայր 68
Վերապատրաստում և զարգացում. ներդրումներ մեր աշխատուժում 69
Վարձատրություն և արտոնություններ. աջակցություն աշխատողների բարեկեցությանը 71
Աշխատողների ձայնը. աշխատուժի ներգրավում և վերջինիս իրավունքների ու հնարավորությունների ընդլայնում 73

06. Առողջություն և անվտանգություն **74**
Առողջություն և աշխատանքի անվտանգություն. Ընկերության աշխատակիցների և համայնքների անվտանգության ու բարեկեցության առաջնահերթություն 76
Կրիտիկական միջադեպերի կառավարում. կրիտիկական ազդեցությունների և շահագրգիռ կողմերի շահերի արդյունավետ կառավարում 83
Աշխատանքի անվտանգության վերաբերյալ դասընթացներ և արտակարգ իրավիճակների կանխարգելում. աշխատողների իրազեկվածության ապահովում 84

07. Տեղական համայնքներ **86**
Սոցիալական ծրագրեր և ենթակառուցվածքների զարգացում. տեղական համայնքներում կյանքի որակը բարելավելու հանձնառություն 88
Համայնքների ներգրավում, բողոքների ներկայացման գործընթաց և մարդու իրավունքներ. համայնքի կարիքների և խնդիրների արդյունավետ լուծում 93
Մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների ստեղծում՝ համայնքի իրավունքները պաշտպանելու նպատակով 96
Անչափահասների աշխատանքի նկատմամբ անհանդուրժողականության քաղաքականության կիրառում 98
Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի դեմ խիստ քաղաքականության կիրառում 98
Ոչ տեխնիկական պատճառներով պայմանավորված ընդհատումների բացառում կանոնավոր գնահատումների միջոցով 99

08. Շրջակա միջավայրի և կլիմայի կայունություն **100**
Շրջակա միջավայրի պաշտպանություն. շրջակա միջավայրի վրա մեր ազդեցությունը նվազագույնի հասցնելու պարտավորություն 102
Կլիմայի փոփոխության հարմարվողականություն և դիմակայունություն. բնապահպանական կառավարման ոլորտում թափանցիկության և հաշվետվողականության ապահովման հանձնառություն 103
Կլիմայի փոփոխության ռիսկերի կառավարում. ածխածնի հետքի նվազեցում և կլիմայի փոփոխության ռիսկերին դիմակայելու հնարավորությունների խթանում 104
Ջերմոցային գազերի արտանետումներ. արտադրության արդյունավետության բարելավում 107
Էներգիայի սպառում և վերականգնվող ռեսուրսներ. շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու համար էներգիայի օգտագործման օպտիմալացման նպատակաուղղվածություն 112
Պատասխանատու մոտեցում ջրային ռեսուրսների օգտագործման հարցում. ջրի արդյունավետ օգտագործումը գործունեության ընթացքում 114
Թափոնների կառավարում. թափոնների պատասխանատու կառավարման, վերամշակման և հեռացման նկատմամբ հատուկ ուշադրություն 118
Օդի որակ և արտանետումների նվազեցում. առողջ և անվտանգ աշխատանքային միջավայրի ստեղծում 122
Պոչամբարային տնտեսություն. անվտանգության բարձր չափանիշների պահպանում 124
Կենսաբազմազանության պահպանում. պատասխանատու գործելակերպ՝ կարևորագույն էկոհամակարգերի վնասումից խուսափելու համար 126
Հանքի փակում, հողերի վերականգնում և ռեկուլտիվացիա. շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու հանձնառություն 128

09. Հավելվածներ **130**
Հավելված 1: Այս հաշվետվության մասին 130
Հավելված 2: Էականության գնահատում 131
Հավելված 3: Բնապահպանական թեմաներ; Սոցիալական թեմաներ; Այլ թեմաներ 133
Հավելված 4: Հապավումների ցանկ 139
Հավելված 5: Գլոբալ հաշվետվողականության նախաձեռնության (ԳՀՆ, GRI) բովանդակության ցուցիչ 142
Հավելված 6: SASB բովանդակային ցուցիչ; Գործունեության ցուցանիշներ 158
Հավելված 7: Տեղեկություններ իրավաբանական անձի մասին 162

ՀԱԿԻՐՃ

Եկամուտ՝

$795.8 մլն

Խտանյութի արտադրության ընդհանուր ծավալները՝

225,042 տոննա (խոնավ)

2023 թվականի տարեվերջին՝

4,666

Իգական սեռի աշխատակիցների թիվը՝

1,026



Արական սեռի աշխատակիցների թիվը՝

3,640



Աշխատողներ տեղական համայնքներից՝

4,134

աշխատող

Ընդունվել է

335

նոր աշխատող

Աշխատողների հոսունության ցուցանիշը՝

5.5%

Աշխատողների

99% -ը

հանդիսանում է արհմիության անդամ

Յուրաքանչյուր աշխատող միջինում անցել է

2.5

ժամ տևողությամբ ուսուցում



Ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումների ընդհանուր ծավալը՝

1,070,988 տոննա CO_2-ին համարժեք

Ջերմոցային գազերի (ՋԳ) Շրջանակ 1-ի արտանետումներ՝

76,218

Ջերմոցային գազերի (ՋԳ) Շրջանակ 2-ի արտանետումներ՝

226,913

Ջերմոցային գազերի (ՋԳ) Շրջանակ 3-ի արտանետումներ՝

767,857

Կլանված CO_2 -ի ընդհանուր ծավալը՝

3,503

կգ

Էներգիայի ընդհանուր սպառումը՝

3,022,836

գիգաջոուլ

Ջրառի ընդհանուր ծավալը՝

47,164

մեգալիտր

Գոյացած թափոնների ընդհանուր ծավալը՝

36,384,525

տոննա

Վերականգնվել է

40

հեկտար տարածք

Ջրահեռացման ընդհանուր ծավալը՝

36,692

մեգալիտր

Տեղական համայնքներում ներդրումների ընդհանուր ծավալը կազմել է

20.2

մլն ԱՄՆ դոլար



ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ

GRI 2-22



Ռոման Խուդոլի

Գլխավոր տնօրեն

ՈՒՐԱԽ ԵՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԶՊՄԿ-Ի 2023 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՈՎ ՆՇԱՆԱՎՈՐՎՈՒՄ Է ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ: ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ, ՄԵՆՔ ՊԱՐՏԱՎՈՐՎԵԼ ԵՆՔ ԱՊԱՀՈՎԵԼ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ԴՐԱՆՈՎ ԻՍԿ ԱՊԱՑՈՒՑԵԼՈՎ ԶՊՄԿ-Ի ՁԳՏՈՒՄԸ ԴԱՍՎԵԼՈՒ ԱՅՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔԻՆ, ՈՐՈՆՔ ԲՍԿ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՈՒ ԹԱՓԱՆՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:

Մենք աշխատում ենք տարեցտարի բարելավել Ընկերության հաշվետվողականության որակը՝ համապատասխանեցնելով բնագավառում առկա լավագույն չափանիշներին ու մեթոդներին: Այս տարվա հաշվետվությունը համապատասխանում է ոչ միայն Գլոբալ հաշվետվողականության նախաձեռնության (GRI), այլ նաև Կայուն զարգացման ոլորտում հաշվապահական հաշվառման չափանիշների խորհրդի (SASB) չափանիշներին, և ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս ներառում է Կլիմային առնչվող ֆինանսական հաշվետվողականության աշխատանքային խմբի հանձնարարականներով կազմված ածխածնի հետքի վերաբերյալ զեկույցը: Նման մակարդակի հաշվետվողականությունն առանձնակի նշանակություն ունի ինչպես մեր տարածաշրջանի, այնպես էլ մեր բնագավառի համար: Թեև այս ամենը մեզ հպարտանալու առիթ է տալիս, միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ սա ինքնանպատակ չէ:

Ընկերության կայուն զարգացման ռազմավարության հիմքում ընկած է առկա լավագույն չափորոշիչները բնապահպանական, սոցիալական և կառավարման բոլոր բաղադրիչներում աստիճանաբար և մտածված ձևով ներդնելու անհրաժեշտությունը: Ստանձնելով առաջատար միջազգային չափանիշներին լիարժեք համապատասխանելու հանձնառությունը՝ մենք գիտակցում ենք, որ սա տևական գործընթաց է, և որ նման հավակնությունը ենթադրում է համառություն ու ջանասիրություն, հետևաբար որդեգրել ենք չափավոր և աստիճանական քայլերի մոտեցում, որն առանձնահատուկ նշանակություն ունի մեր Ընկերության համար՝ հաշվի առնելով վերջինիս ավելի քան 70 տարվա պատմությունը: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ այս ողջ գործընթացն անհրաժեշտ է համապատասխանեցնել Ընկերության ավելի լայն զարգացման ռազմավարությանը:

Օրեցօր ավելացող տարատեսակ մարտահրավերները պահանջում են նորարարական մոտեցումներ, մասնավորապես՝ առաջատար տեխնոլոգիաների կիրառում: Թվայնացումը, մեքենայացումը, ավտոմատ կառավարվող գործընթացներն ու արհեստական բանականությունն այլևս հեռու ապագայի հայեցակարգեր չեն, այլ արդեն այսօրվա մրցունակությունն ապահովող տարրեր են:

Իմ կարծիքով, կայուն զարգացում ապահովելու համար ուղղակի անհրաժեշտ է Ընկերության գործընթացներում ներդնել բարձր տեխնոլոգիաներ և որդեգրել ժամանակակից կառավարման մեթոդներ՝ դրանով իսկ ստեղծելով վերջինիս տեխնոլոգիական հնարավորությունների զարգացման, արդյունավետության բարձրացման և ռիսկերի պատշաճ կառավարման ամբողջական ռազմավարական հիմք: Ընկերությունը հանձնառու է իրականացնելու այս տեսլականը կայուն կառավարմանն ուղղված մեր ճանապարհին:

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ

GRI 2-22



Շարունակաբար բարելավելով գործադրվող ջանքերի որակը՝ մենք բարձր ենք գնահատում բոլոր շահառուների հետ ունեցած փոխադարձ կապը և կառուցողական երկխոսությունը, քանի որ Ձեր ներդրումն անչափ կարևոր է Ընկերության առաջընթացն ու շարունակական բարելավումն ապահովելու գործում:

Այս տարին առանցքային նշանակություն ունի մեզ համար: Շնորհիվ 2022 թ-ին Հայաստանում առաջին անգամ իրականացված TCFD-ի ուղեցույցներով ուսումնասիրության, մենք հպարտությամբ արձանագրում ենք այն փաստը, որ Ընկերության 2023 թ-ի հաշվետվությունն ամբողջովին համապատասխանում է Գլոբալ հաշվետվողականության նախաձեռնության (GRI) չափանիշներին, և այն համադրվել և համապատասխանեցվել է Կայուն զարգացման ոլորտում

Արմեն Ստեփանյան

Կայուն զարգացման գծով տնօրեն

ԻՆՁ ՀԱՄԱՐ ՄԵԾ ՊԱՏԻՎ Է ԱՐՁԱՆԱԳՐԵԼ ԶՊՄԿ-Ի ԿՈՂՄԻՑ, ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻՆ ԱՆԸՆԴՄԵՋ, ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՓԱՍՏԸ, ՈՐԸ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՔԱՅԼ Է ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ:

հաշվապահական հաշվառման չափանիշների խորհրդի (SASB) պահանջներին: Այս կարևորագույն նշաձողը ապացուցում է Ընկերության հանձնառությունն ու ձգտումը՝ դառնալու կայուն զարգացման վերաբերյալ հաշվետվողականություն ապահովող առաջատար ընկերություն ինչպես տարածաշրջանում, այնպես էլ մեր ոլորտում:

Սակայն պետք է նշեմ, որ մեր հանձնառությունները չեն սահմանափակվում միայն հաշվետվողականությամբ: Մենք ջանում ենք ներդնել կայուն զարգացման հիմնական կատարողական ցուցանիշները /KPI/ Ընկերության բոլոր ոլորտներում՝ դրանով իսկ նպաստելով կազմակերպության ներսում ընդհանուր կոլեկտիվ պատասխանատվության մշակույթի ձևավորմանը: Կայուն զարգացումը միայն տվյալների հավաքագրում և զեկուցում չէ, այն ենթադրում է շոշափելի արդյունքներ և զգալի փոփոխություններ:

Սույն Հաշվետվության միջոցով մենք փորձել ենք անկեղծորեն ներկայացել մեր հաջողություններն ու սպասվող մարտահրավերները: Չնայած 2023 թ-ին ունեցած որոշ խոչընդոտների՝ մենք, այնուամենայնիվ, նախաձեռնել ենք մի քանի նախագիծ, որոնց նպատակն է բարելավել Ընկերության բնապահպանական, սոցիալական և կառավարման (ESG) ուղղությամբ բոլոր ոլորտների արդյունավետությունը: Ընկերության բոլոր նախաձեռնությունները՝ փոշու վերահսկման և ջրի արդյունավետ օգտագործման միջոցառումներից մինչև քաղաքականությունների խստացումը, խոսում են Ընկերության վճռականության մասին՝ միևնույն ժամանակ փաստելով բացթողումների առկայությունն ու դրանց վերացման հրատապությունը:

2024 թ-ի համար, որպես հիմնական առաջնահերթություն, մենք սահմանել ենք հստակ և հավակնոտ նպատակներ, որոնք վերաբերում են արտանետումների նվազեցմանն ու թափոնների համալիր կառավարմանը: Առողջությունն ու աշխատանքի անվտանգությունը շարունակում են հանդիսանալ Ընկերության ռազմավարության անկյունաքարերը: Նոր քաղաքականություններ իրագործելու հետ մեկտեղ՝ մենք փորձում ենք ձևավորել անվտանգության ապահովման մշակույթ, որը ենթադրում է ակտիվ և նախաձեռնողական մոտեցում և բարձր պատասխանատվություն Ընկերության ամենօրյա գործողություններում, և ոչ միայն պատասխանատվության պարտադրում ուղղիչ միջոցառումների միջոցով:

Շատ մեծ ցավով ստիպված եմ արձանագրել 2024 թ-ի ամռանը տեղի ունեցած դժբախտ պատահարը՝ Ընկերության տարածքում մահվան ելքով ավարտված աղետալի դեպքը, որը հերթական անգամ հիշեցնում է անվտանգության մշակույթը խթանելու անհրաժեշտության մասին: Մենք վճռական ենք այս հարցում և նախատեսում ենք իրականացնել հրատապ առաջնային միջոցառումներ մոտակա տարիների ընթացքում՝ գիտակցելով, որ առանց մարդկանց պատշաճ անվտանգությունն ապահովելու մենք չենք հաջողի կայուն զարգացման հարցում:

ԶՊՄԿ-ն շարունակում է լինել Հայաստանի արդյունաբերական ոլորտի կարևորագույն ընկերություններից մեկը, և կայուն զարգացմանն ուղղված մեր ջանքերը նպատակ ունեն համապատասխանեցնելու Ընկերության գործունեությունը լավագույն միջազգային փորձին ու չափորոշիչներին: Հպարտությամբ արձանագրելով Ընկերության հաջողությունները՝ մենք միևնույն ժամանակ գիտակցում ենք, որ դեպի կայուն զարգացում տանող ճանապարհը շարունակական է, և մենք պարտավորվում ենք անընդհատ բարելավել մեր գործունեությունը՝ ստեղծելով երկարաժամկետ արժեքներ մեր շահառուների և ազդակիր համայնքների համար:

Մենք առավել վճռական ենք լինելու մեր հետագա քայլերում՝ ակնկալելով մեր բոլոր շահառուների շարունակական աջակցությունը: Այս Հաշվետվությունը պարզապես փաստաթուղթ չէ, այլ մեզ միավորելու միջոց է և կայուն զարգացման մեր ընդհանուր հավակնոտ նպատակների իրագործման ճանապարհային քարտեզ:





01

ԶՊՄԿ-Ի ՄԱՍԻՆ

GRI 2-1

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԶՊՄԿ ԿԱՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ Է, ՈՐԸ 1951 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԻՑ Ի ՎԵՐ ԿԵՐՏԵԼ Է ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ՔԱՆ 70 ՏԱՐՎԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ:

2023թ-ին արտադրված պղնձի խտանյութ

201,332

տոննա (խոնավ)

2023թ-ին արտադրված մոլիբդենի խտանյութ

23,710

տոննա (խոնավ)


ԶՊՄԿ-ն գործունեություն է ծավալում Հայաստանի հարավ-արևելյան մասում՝ Ողջի գետի հովտում, երկրի մեծությամբ երկրորդ մարզի՝ Սյունիքի, Քաջարան և Կապան համայնքների տարածքում: Ընկերության կողմից կառավարվող ակտիվները պարունակում են մոլիբդենի և պղնձի հաստատված և հաշվարկված երկարաժամկետ պաշարներ:

Ընկերությունն ունի մինչև 2041 թվականը տարեկան

22

միլիոն տոննա հանքաքարի արդյունահանման և վերամշակման լիցենզիա:

2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԵՏԵՎՅԱԼՆ ԷՐ՝



ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ. ՈԼՈՐՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆՁՆՈՒՄ

GRI 2-28

Հայաստանում կայուն զարգացող հանքարդյունաբերական ոլորտ ձևավորելու համար, մենք փորձում ենք ապահովել ոլորտի զարգացումը ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներով: Ի ապացույց թափանցիկություն, էթիկական գործելաոճ և կայուն զարգացում ապահովելու իր հանձնառությունների, Ընկերությունը անդամակցում է տարբեր հայտնի մասնագիտական ասոցիացիաներին ու կազմակերպություններին: Տարբեր կազմակերպությունների միջոցով մենք փորձում ենք գտնել երկարատև լուծումներ, բարձրացնել իրազեկվածությունն ու շահառուների հետ նախաձեռնել հանքարդյունաբերական ու ԲՍԿ հարցերի վերաբերյալ բովանդակալից երկխոսություն:

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՆԵՐԻՆ

«Հայաստանի հանքագործների և մետալուրգների միություն» (ՀՀՄՄ)՝ մասնագիտական միավորում է, որը ծառայում է որպես հանքարդյունաբերական ոլորտի խնդիրների քննարկման հարթակ:

Ընկերության անդամակցությունը նշված կազմակեպությանը գործընկերների հետ շփվելու և ոլորտի զարգացմանն ուղղված համապատասխան ռազմավարությունների և նորմատիվ ակտերի մշակմանը մասնակցելու հնարավորություն է ընձեռում: Տարատեսակ քննարկումներին և օրենսդրական նախագծերի ու նախաձեռնությունների ուսումնասիրությանը մասնակցելու, ինչպես նաև մեր համատեղ դիրքորոշումը Կառավարությանն ու համապատասխան մարմիններին ներկայացնելու միջոցով՝ մենք փորձում ենք բարելավել օրենսդրական դաշտը և խթանել պատասխանատու ու կայուն հանքարդյունաբերություն: ԶՊՄԿ-ի Գլխավոր տնօրենի առաջին տեղակալը հանդիսանում է ՀՀՄՄ-ի նախագահ:


«Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն», որի համաձայն երկրներն ու կազմակերպությունները պարտավորվում են հրապարակել արդյունահանող ոլորտի արժեշղթային վերաբերող տեղեկություններ:


Ընկերության կողմից ԱՃԹՆ սկզբունքների ու չափորոշիչների որդեգրումը, ինչպես նաև ԱՃԹՆ-ին անդամակցությունը փաստում են հանքարդյունաբերական ոլորտի թափանցիկությանը և հաշվետվողականությանն ողղված ԶՊՄԿ-ի ջանքերը, քանի որ վերջինս պատրաստակամ է լիարժեք մասնակցելու ԱՃԹՆ իրականացման, գնահատման ու որոշումների կայացման գործընթացներին, ինչպես նաև նպաստել արդյունահանող ճյուղերի վերաբերյալ հանրային քննարկումներին: Այս համագործակցությունն օգնում է ԶՊՄԿ-ին ապահովել իր ֆինանսական գործընթացների թափանցիկությունն ու մասնակցել եկամուտների պատասխանատու կառավարմանը՝ ի օգուտ Հայաստանի բնակչության: ԶՊՄԿ-ն ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբում ներկայացնում է Կայուն զարգացման գծով տնօրենը:

2023 թ-ին, ԶՊՄԿ-ի Գլխավոր տնօրենի առաջին տեղակալը, ով նաև հանդիսանում է ՀՀՄՄ նախագահ, ՀԿ-երի և Հայաստանի հիմնական խոշոր հանքարդյունաբերական ընկերությունների համար կազմակերպել էր բաց քննարկում՝ կայուն զարգացմանն ուղղված լուծումների, նորարարությունների, բնապահպանական խնդիրների և հաղորդակցության վերաբերյալ:

ԲԻԶՆԵՍ ՄՈԴԵԼ ԵՎ ԱՐԺԵՇՂԹԱ. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԳՈՐԾԵԼԱՈՃԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

GRI 2-6





Մեր Ընկերությունը շահագործում է Կովկասի խոշորագույն հանքավայրը, որը գտնվում է Սյունիքի մարզի Քաջարան համայնքում: Հանքաքարի և դատարկ ապարների արդյունահանման համար կիրառվում է հորատապայթեցման մեթոդը: Հորատապայթեցման աշխատանքներին հաջորդում են ինքնաթափերով և բեռնատարներով իրականացվող բեռնման աշխատանքները: Անչափ կարևորվում է ճանապարհների սպասարկումը, հանքաստիճանների տեխնիկական վիճակն ու փոշու վերահսկումը, քանի որ հանքի արդյունավետությունը մեծապես կախված է հանքաքարի և դատարկ ապարների տեղակայման հստակ սահմաններից, ինչն օգնում է նվազեցնել կորուստներն ու աղքատացման մակարդակը:

ԶՊՄԿ-ն զբաղվում է պղնձի և մոլիբդենային հանքաքարի արդյունահանմամբ, որի վերամշակման արդյունքում ստացվում է երկու առանձին խտանյութ՝ պղինձ և մոլիբդեն: Մեր հարստացուցիչ գործարանն անդադար գործող կառույց է, որի արտադրողականությունը կայուն կերպով ավելացել է վերջին մի քանի տարիների ընթացքում: Պղնձի և մոլիբդենի առանձին խտանյութեր ստանալու համար գործարանում կիրառվում են ավանդական մեթոդներ, այն է՝ ջարդում, մանրացում և փրփրային ֆլոտացում: Այս խտանյութերի ջրազրկումն իրականացվում է երկու տարբեր կառույցներում: Բացի այդ, գործարանում առկա են որակի վերահսկման ընթացակարգեր, այդ թվում՝ լաբորատորիաներ, որտեղ իրականացվում են հանքաքարերի նմուշների ու ֆլոտացման վերլուծություններ և արտադրանքի վերջնական որակն ապահովող ուսումնասիրություններ ու ստուգումներ:

Պոչամբար





Հարստացման արդյունքում առաջացող պոչանքները տեղափոխվում են Արծվանիկի պոչամբար, որը տեղակայված է Կապան համայնքում: Վերընթաց կառուցված պոչամբարը հանդիսանում է նաև պատվար հարակից ջրի կառավարման համար և նախատեսված է հանքաքարի արդյունահանման ու վերամշակման արդյունքում առաջացող թափոնների տեղադրման համար: Հարստացուցիչ ֆաբրիկան և պոչամբարը միացված են միմյանց Ողջի գետի ձախ ափի երկայնքով տեղակայված խողովակաշարերով ու վաքերով:

Ըստ երկրաբանական հետազոտությունների՝ Քաջարանի հանքավազանում առկա է մոտ 2.1 միլիարդ տոննա հաստատված հանքաքարի պաշար, որը ներառում է 5.8 միլիոն տոննա պղինձ և 0.826 միլիոն տոննա մոլիբդեն:


ՀԱՆՔԱՔԱՐԻ ՊԱՇԱՐՆԵՐ ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՆՔԱՎԱՁԱՆՈՒՄ

29 Cu Cuprum	42 Mo Molybdenum
5.8 միլիոն տոննա	**0.826** միլիոն տոննա

Պղինձը համարվում է ամենատարածված և կիրառելի մետաղներից մեկը: Այն արդյունաբերական պողպատագործության հիմնաքարն է, որը նաև դարձել է անփոխարինելի նյութ վերականգնվող էներգետիկայի համար, քանի որ աշխարհի մակարդակով ստացված զտված պղնձի մինչև 60% կիրառվում է էլեկտրահաղորդիչների արդյունաբերությունում տարատեսակ մալուխների և լարերի արտադրության համար:

Մոլիբդենը կատալիզատոր նյութ է, որը լայնորեն կիրառվում է նավթային արդյունաբերությունում և համաձուլվածքների, օրինակ՝ պողպատի, արտադրության համար: Պողպատագործության մեջ մոլիբդենից ստացված մոլիբդենի օքսիդն ու ֆերոմոլիբդենը հիմնականում կիրառվում են կոռոզիայից պաշտպանելու, նյութական հատկանիշները ուժեղացնելու և ջերմամիմացկունություն ապահովելու համար:

ՎԱՃԱՌՔԻ ԾԱՎԱԼՆԵՐՆ ԸՍՏ ԽՏԱՆՅՈՒԹԻ ՏԵՍԱԿԻ (ՏՈՆՆԱ (ՉՈՐ ՄԱՍՍԱ)



ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇՂԹԱՅՈՒՄ. ՄԵՐ ԲԻԶՆԵՍԻ ԲՈԼՈՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԿԱՅՈՒՆ ՄՈՏԵՑՄԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿ

GRI 3-3

ԶՊՄԿ-ում մատակարարման շղթայի կառավարումն իրականացվում է բոլոր մակարդակներում՝ ապահովելով հանքանյութերի անդադար արդյունահանումը և վերամշակումը խտանյութեր ստանալու նպատակով: Մատակարարման շղթան ենթադրում է սարքավորումների մատակարարում, հումքի փոխադրում և նյութատեխնիկական / լոգիստիկ/ կառավարում: Այնուհետ պղնձի և մոլիբդենի խտանյութերը մատակարարվում են հաճախորդներին՝ վերամշակման ու տարատեսակ արտադրություններում օգտագործման նպատակով: Այդ խտանյութերը արտահանվում են Չինաստան, Կորեա, Ռուսաստան, Բուլղարիա, Բելգիա, Նիդեռլանդներ և այլն:

Գործադիր տնօրենն իրականացնում է Կոմերցիոն տնօրինության վերահսկողություն, որն ընդգրկում է նաև Կոմերցիոն տնօրենի տեղակալի ղեկավարությամբ գործող Նյութամատակարարումների և գնումների բաժինը: Գնման հանձնաժողովը ևս իրականացնում է Ընկերության գնումների վերահսկողություն և պատասխանատու է որոշ ապրանքների ու ծառայությունների քննարկման և հաստատման համար, կախված դրանց չափից, նախագծի կարևորությունից և Հանձնաժողովի մասնակցությունը պահանջող այլ գործոններից: Հանձնաժողովի առկայությունն ապահովում է նշված ապրանքների կամ ծառայությունների արդարացի, թափանցիկ և

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի գնումների քաղաքականություն (Գնումների քաղաքականություն)

Գնումների քաղաքականությունը սահմանում է Ընկերության կողմից իրականացվող գնման գործընթացների հիմնարար սկզբունքներն ու ուղղությունները, մասնավորապես՝ առանձնացնում է գնման պատվերները հաստատող անձանց շրջանակը, սահմանում է մրցույթների հրապարակման կանոնները, հաստատում է մատակարարների կամ կապալառուների ընտրության չափորոշիչներն ու պայմանագրային պարտավորությունների կատարման և հարաբերությունների իրականացման սկզբունքները: Բացի այդ, վերջինիս շրջանակում նախատեսված են նաև գնման գործընթացի համար նախատեսված պարտադիր հանձնարարականներ:

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների անցկացման կարգի մասին կանոնակարգ» (Կանոնակարգ)

Կանոնակարգն անդրադառնում է Ընկերության կարիքների համար անհրաժեշտ աշխատանքների, ծառայությունների և ապրանքների գնման տարբեր ընթացակարգային կողմերին և սահմանում է գնումների իրականացման հիմնական սկզբունքները, ձևերը և տեսակները, ինչպես նաև պայմանագրերի կնքման և կատարման ընթացակարգերը, մանրամասնում է բողոքների ուսումնասիրության գործընթացը ու անդրադառնում այլ ընթացակարգային հարցերին:

արդյունավետ գնման գործընթացը: Անհրաժեշտ է նշել, որ Հանձնաժողովի անդամների, այդ թվում՝ Կայուն զարգացման գծով տնօրենի, մասնակցությունն ուղղված է բարելավելու և խստացնելու կայուն գնումների գործընթացը: 2023 թ-ի ընթացքում մատակարարման շղթայի կառավարման համակարգը մնացել է անփոփոխ. Ընկերությունում ներդրվել են միայն գնումներին վերաբերող նոր փաստաթղթեր:

2023 թ-ի ընթացքում, անկախ խորհրդատվական ընկերության հետ համագործակցության արդյունքում ԶՊՄԿ-ում մշակվել է գնումների ոլորտի բացերի վերլուծության պլան: Մենք փորձում ենք բացահայտել բարելավման ենթակա ոլորտները, իրականացնել կարիքների հստակ գնահատում և ներդնել միջազգային չափանիշներ՝ ծախսերի կրճատմանը զուգահեռ ընդհանուր արդյունավետությունը, կայունությունը, նյութերի որակն ու առաքման գործընթացները բարելավելու նպատակով: Վերլուծության ընթացքում որպես կայուն գնումների հիմնական չափանիշ կկիրառվի ISO 20400:2017-ն: Այլ չափանիշները, որոնցից են օրինակ՝ ISO 9001/9004, ISO 10845 և ISO 31000-ը, նույնպես հաշվի կառնվեն՝ ելնելով Ընկերության հստակ կարիքներից ու նպատակներից:

Ընկերությունը, իր գործունեության ողջ ընթացքում կարևորում է ապրանքների և ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությանը և մակնշմանը առնչվող բոլոր օրենքների և իրավական ակտերի պահանջների կատարումը, ինչն ապահովում է ապրանքների անվտանգ կիրառումն ու արտադրությունը, ինչպես նաև ծառայությունների պատշաճ տրամադրումը:

Մատակարարի կողմից համապատասխան արձագանք ստանալուց հետո մենք պահանջում ենք ապրանքի կամ ծառայության տեխնիկական բնութագիրը, որը գնահատվում է մասնագետների կողմից մինչ մատակարարի առաջարկն ընդունելը: Սա ապահովում է բաղադրիչների ձեռքբերման թափանցիկ գործընթաց: Առանձին տեսակի ապրանքների, մասնավորապես նրանց, որոնք կարող են բնապահպանական կամ սոցիալական ռիսկեր պարունակել, դեպքում մենք պահանջում ենք նյութերի անվտանգության անձնագիր: Օրինակ՝ մեզ համար անչափ կարևոր է սնդիկի լիակատար բացակայության հանգամանքը:

Ընկերության կողմից գնահատման գործընթացները ներառում են հիմնական կատեգորիաների բոլոր ապրանքներն ու ծառայությունները՝ վերահսկելով դրանց համապատասխանությունը գործող նորմատիվային ու Ընկերության չափորոշիչներին:

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակահատվածում Ընկերության առաջնային արտադրանքի (հումքի) արտադրության և փաթեթավորման համար օգտագործված նյութերի ցանկը:

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ և ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ

GRI 301-1

ԱՆՎԱՆՈՒՄ	2022թ.	2023թ.
Յուղ Nigrol, լիտր	4,654	3,513
Քսանյութեր, լիտր	101,469	98,587
Գնդեր, տոննա	15,275	14,982
Կիր, տոննա	14,225	16,803
Սոճու յուղ, տոննա	77	89
Փրփրագոյացնող ռեագենտ տոննա	232	250
Քսանտոգենատ 90%, տոննա	348	473
Նատրիումի հիդրոսուլֆատ 70%, տոննա	11,003	11,750





01
02
03

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆ ՈՒՆԻ ԻՆՉՊԵՍ ՏԵՂԱԿԱՆ, ԱՅՆՊԵՍ ԷԼ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ, ՈՐԸ ՆՊԱՍՏՈՒՄ Է ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆԸ: ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ԵՆ ՄԻ ՇԱՐՔ ՆԵՐՔԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՇԱՀԱԳՐԳԻՒ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ԱՅԼ ԱՌՆՉՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

2023թ-ին ԶՊՄԿ-ի ընդհանուր եկամուտը կազմել է

$795.8

միլիոն

2023թ-ին ԶՊՄԿ-ի ընդհանուր վճարումները պետական բյուջե կազմել են

$192.3

միլիոն

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆԵՐԴՐՈՒՄ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

GRI 3-3

ԱՅՍ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ, ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՊԱՀՈՎԵԼՈՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՐ ԻՍԿ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ:

Գլխավոր տնօրենը, Ֆինանսական տնօրենը և Կայուն զարգացման գծով տնօրենը առանցքային դեր ունեն երկրի տնտեսության վրա Ընկերության ազդեցությանն առնչվող ռազմավարական որոշումների կայացման և քաղաքականության հաստատման գործում: Ֆինանսական տնօրենը մասնավորապես պատասխանատու է տնտեսական քաղաքականության իրականացման, ֆինանսական գործառնությունների կառավարման և գործառնական մակարդակում տնտեսական ազդեցության ռազմավարությունների համապատասխանության վերահսկման համար:



Ընկերության տնտեսական ազդեցության կառավարման արդյունավետությունը մենք գնահատում ենք կանոնավոր աուդիտների, շահագրգիռ կողմերի արձագանքների և կատարողական ցուցանիշների միջոցով, ինչպիսիք են օրինակ՝ տեղական գնումներում Ընկերության մասնաբաժինը և համայնքային ենթակառուցվածքներում վերջինիս ներդրումները: Այս գնահատումները օգնում են ապահովել, որ Ընկերության տնտեսական ներդրումը համապատասխանի իր ռազմավարական նպատակներին և շահագրգիռ կողմերի ակնկալիքներին: Շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ տեղական համայնքների, պետական կառույցների և հասարակական կազմակերպությունների ներգրավվածությունը նպաստում են Ընկերության տնտեսական ազդեցության ռազմավարությունների վերաբերյալ տեղեկատվության տարածմանը: Կանոնավոր խորհրդակցությունների և արձագանքների մեխանիզմներն ապահովում են, որ Ընկերության գործողությունները համահունչ լինեն շահագրգիռ կողմերի կարիքներին և մտահոգություններին՝ այդպիսով բարձրացնելով տնտեսական ներդրումների արդյունավետությունը:

Մեր միջնաժամկետ նպատակն է տեղական գնումների ավելացման և համայնքային ենթակառուցվածքներում ներդրումների շնորհիվ բարձրացնել տնտեսական կայունությունը և կայուն զարգացումը: Սա նպատակ ունի մեծացնել տարածաշրջանային մատակարարների մասնաբաժինը, բարձրացնել ֆինանսական հաշվետվությունների թափանցիկությունը և ընդլայնել համայնքների ներգրավման նախաձեռնությունները: Այս նպատակին հասնելու համար մենք նախատեսում ենք ընդլայնել տեղական համայնքների կարիքների գնահատման շրջանակը և խթանել ներդրումները տեղական ենթակառուցվածքների ծրագրերում: Ներկայումս մշակվում է Տեղական գնումների պլանը՝ 2023 թվականի աշնանը մշակված Տեղական գնումների քաղաքականության նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԵՐՈՎ

GRI 201-1, SASB EM-MM-000.A


ԶՊՄԿ-Ն ՄՈԼԻԲԴԵՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻՑ ՄԵԿՆ Է ԱՇԽԱՐՀՈՒՄ: 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԽՏԱՆՅՈՒԹԻ (ՊՂԻՆՁ ԵՎ ՄՈԼԻԲԴԵՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵԼ Է 225,042 ՏՈՆՆԱ, ԻՆՉԸ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ՝ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՑՈՒՑԱՆԻՇԻՑ ՄՈՏԱՎՈՐԱՊԵՍ 15%-ՈՎ ՊԱԿԱՍ Է:

ԽՏԱՆՅՈՒԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ, ՏՈՆՆԱ (ԽՈՆԱՎ)

■ Պղինձ (Cu) ■ Մոլիբդեն (Mo)

265,655


Արտադրության ընդհանուր ծավալները



2022 թ.

225,042 ▼ 15.3%

Արտադրության ընդհանուր ծավալները



2023 թ.

2023 թվականին ԶՊՄԿ-ի ընդհանուր եկամուտը կազմել է

$795.8 միլիոն ▼ 3.2%

Մեր Ընկերությունը 2023 թվականին պահպանել է Հայաստանի ամենախոշոր հարկատուի կարգավիճակը: 2023 թվականի ընթացքում ԶՊՄԿ-ի ընդհանուր վճարումները պետական բյուջե կազմել են

$192.3 միլիոն, որը ներառում է՝ ▼ 6.5%

Ընկերության եկամտային հարկ՝
$56.7 միլիոն

Ռոյալթի՝
$135.6 միլիոն

ԶՊՄԿ-ն հանդիսանում է Հայաստանի խոշորագույն գործատուներից մեկը: 2023 թվականին աշխատակիցների թիվը հասել է

4,666-ի ▲ 1.7%



Աշխատավարձերն ու նպաստները 2023 թվականին կազմել են

$117.1 միլիոն ▲ 17.3%

ԶՊՄԿ-ի սոցիալական ներդրումները համայնքներում կազմել են

$20.2 միլիոն ▲ 36.5%

2023 թվականին Ընկերության գործառնական ծախսերը կազմել են

$290 միլիոն (նույնքան՝ որքան 2022 թվականին:)

2023 թվականի ընթացքում շահաբաժիններ չեն վճարվել:

ՍՏԵՂԾՎԱԾ ԵՎ ԲԱՇԽՎԱԾ ՈՒՂՂԱԿԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ, ՄԼՆ. ԱՄՆ ԴՈԼԱՐ[1]

Ցուցանիշ	2022 թ.	2023 թ.
1. Ստեղծված ուղղակի տնտեսական արժեք	**822.1**	**795.8**
Եկամուտ	822.1	795.8
2. Բաշխված տնտեսական արժեք	**610.3**	**619.5**
Գործառնական ծախսեր	290.0	289.9
Աշխատավարձեր, այլ վճարումներ և լրավճարներ	99.8[2]	117.1
Վճարումներ կապիտալ ներդրողներին	0	0
Վճարումներ պետությանը, այդ թվում՝	220.5	212.5
Հարկեր	128.9	56.7
Ռոյալթիներ	76.8	135.6
Ներդրումներ տեղական համայնքներում	14.8	20.2
3. Պահպանված տնտեսական արժեք	**211.8**	**176.3**

[1] 2023 թվականի ֆինանսական տվյալները ներկայացված են հաշվեգրման սկզբունքով, ինչպես ներկայացված է աուդիտի ենթարկված տարեկան ֆինանսական հաշվետվություններում:

[2] «Աշխատավարձեր, այլ վճարումներ և լրավճարներ» ցուցանիշը, որը 2022 թ. Կայուն զարգացման հաշվետվությունում ի սկզբանե ներկայացված էր 80.2 մլն ԱՄՆ դոլարով, չէր ներառում բոլոր բաղադրիչները: Տվյալ ցուցանիշի ամբողջական արժեքը կազմում է 99.8 մլն ԱՄՆ դոլար:

ԱՆՈՒՂՂԱԿԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

GRI 203-2

ԶՊՄԿ-Ն, ՈՐՊԵՍ ԱՌԱՋԱՏԱՐ ՀԱՐԿԱՏՈՒ ԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇՂԹԱՅՈՒՄ ԼԱՅՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, ԶԳԱԼԻ ԴԵՐ ՈՒՆԻ ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ: ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄՈՒԼՏԻՊԼԻԿԱՏՈՐԸ ԳՆԱՀԱՏՈՒՄ Է 3-5 ՄԻՋԱԿԱՅՔՈՒՄ:

Ըստ զբաղվածության գնահատման, Ընկերության գործունեության արդյունքում անուղղակի կերպով ստեղծվում է 15 000 աշխատատեղ: Այս նշանակալի ցուցանիշը ներառում է տարածաշրջանում և ընդհանուր առմամբ տնտեսությունում տարբեր ուղիներով ստեղծված աշխատատեղերը, մասնավորապես.

- Ներգրավվածությունը մատակարարման շղթայում՝ աշխատատեղերը ստեղծվում են ԶՊՄԿ-ին ապրանքներ և ծառայություններ տրամադրող մատակարարների կողմից: Կախված Ընկերության կարիքներից՝ այս մատակարարներն ավելացնում են իրենց աշխատուժը՝ հավաքագրելով լրացուցիչ աշխատակազմ ավելացող պահանջարկը բավարարելու համար:
- Աշխատակիցների ծախսերը՝ ԶՊՄԿ-ի աշխատակիցների կողմից տեղական տնտեսություններում կատարված ծախսերի կառուցվածքը խթանում է տնտեսական գործունեությունը՝ սատարելով տեղական ձեռնարկություններին և ծառայություններ մատուցողներին:
- Ընկերության ծախսերը՝ տեղական ենթակառուցվածքներում և ծառայություններում ԶՊՄԿ-ի ներդրումներն ու ծախսերը, ինչը հանգեցնում է աշխատատեղերի ստեղծմանը այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են շինարարությունը, տրանսպորտը և մանրածախ առևտուրը:



ԶՊՄԿ-ի անուղղակի տնտեսական ազդեցությունը դրական ներգործություն ունի թե՛ տեղական և թե՛ ներպետական մակարդակով զբաղվածության վրա: Աշխատատեղերի ստեղծման մուլտիպլիկատիվ էֆեկտը համահունչ է երկրի զարգացման օրակարգին, որն ուղղված է տնտեսական աճի խթանմանը և գործազրկության մակարդակի իջեցմանը: Շահագրգիռ կողմերի տեսանկյունից զբաղվածության ստեղծման անուղղակի օգուտները կապված են կայուն աշխատատեղերի, տեղական ծառայությունների բարելավման և ընդհանուր տնտեսական զարգացման վերաբերյալ համայնքի առաջնահերթությունների հետ: ԶՊՄԿ-ի գործունեությունն ուղղված է ավելի լայն սոցիալական նպատակների իրականացմանը, քան պարզապես հանքարդյունաբերական և արտադրական գործունեության իրականացումն է:

Ընկերության անուղղակի ազդեցությունների մաս են կազմում աշխատակիցների կրթական և հմտությունների զարգացման ծրագրերը: Աշխատուժի, այդ թվում՝ ժամանակավոր և պայմանագրային աշխատողների, հմտությունների խթանմամբ ԶՊՄԿ-ն բարելավում է աշխատանքի հնարավորություններն անհատների համար և բարձրացնում է աշխատուժի ընդհանուր որակն իր գործունեության շրջանակներում:

Ըստ զբաղվածության գնահատման՝ անուղղակի կերպով ստեղծվել է մինչև

15,000

աշխատատեղ

ԳՆՈՒՄՆԵՐ. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ՝ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՎ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄՆԵՐԸ

GRI 204-1

Մենք ձգտում ենք հզորացնել անկախ և տնտեսապես կենսունակ համայնքները ԶՊՄԿ-ի շուրջ: 2023 թ-ին Ընկերությունը մշակել է Տեղական գնումների քաղաքականություն (ՏԳՔ), և սոցիալական հարցերով թիմն համալրվել է ևս երկու աշխատակցով՝ ՏԳՔ նպատակների իրականացումն ապահովելու համար:

2023 թ-ից ի վեր մենք ջանասիրաբար մշակում և վերլուծում ենք ԶՊՄԿ-ի ապրանքների և ծառայությունների գնումների մանրամասն տվյալների բազան: Այս վերլուծությունը, որն ընդգրկում է աշխարհագրական բաշխվածությունը, ծախսերը և 2018-2023 թթ-ն ընկած ժամանակահատվածում գնված ապրանքների և ծառայությունների բնույթը, ավելին է քան պարզապես տվյալների բազա: Այն բացահայտում է նոր միտումները, օրինաչափությունները և պոտենցիալ հնարավորությունները, որոնք կարող են զգալիորեն խթանել Ընկերության մատակարարման տեղական աղբյուրներ փնտրելու ջանքերը: Մենք նաև կենտրոնացել ենք երկու-երեք հատուկ ոլորտների վրա, որտեղ տեղական գնումներն ավելացնելու ուղղությամբ զգալի ներուժ ենք տեսնում 2024 և 2025 թթ-ին:

Բացի այդ, մեր Ընկերությունը կենտրոնացել է տարածաշրջանային գնումների վրա՝ ձգտելով ավելացնել գնումների մասնաբաժինն իր գործունեության տարածաշրջանում՝ մայրաքաղաք Երևանում կատարվող գնումների համեմատ: Այս նպատակին հասնելու համար մենք ուսումնասիրում ենք տեղական մանրածախ առևտրի և այնպիսի ապրանքների արտադրողների հետ համագործակցության ներուժը, ինչպիսիք են թղթե արտադրանքը և հագուստը: Այս ռազմավարական մոտեցումը թույլ կտա բարելավել մեր տեղական գնումները և ամրացնել տեղական ձեռնարկատիրական համայնքի հետ կապերը:


Ապրանքների և ծառայությունների գնումների ընդհանուր գումարը 2023 թ-ին կազմել է 316 միլիոն ԱՄՆ դոլար: Ձեռք բերված ապրանքների ընդհանուր մասնաբաժինը կազմել է 47%, իսկ ծառայություններինը՝ 53%: 2023 թ. գնումների (ապրանքներ և ծառայություններ) բյուջեի 75%-ը ծախսվել է Հայաստանի Հանրապետությունում (237 միլիոն ԱՄՆ դոլար):

Ընդհանուր առմամբ, ԶՊՄԿ-ի գնումների մեջ ներգրավված են եղել 1,254 ընկերություններ և մատակարարներ տարբեր երկրներից՝ 2022 թվականի 1,139 ընկերությունների համեմատ: Երկու տարիների ընթացքում էլ առավել զգալի մասը բաժին է ընկել տեղական ընկերություններին (864 ձեռնարկություն կամ 69% 2023 թվականին՝ 2022 թվականի 839 ձեռնարկության կամ 74%-ի համեմատ): Տեղական ընկերություններին հաջորդել է Ռուսաստանը (187 կազմակերպություն կամ 15% 2023 թվականին՝ 2022 թվականի 154 կազմակերպության կամ 14%-ի համեմատ):

Տեղական գնումների զգալի տոկոսն արտացոլում է ԶՊՄԿ-ի հստակ հանձնառությունը սատարել տեղական տնտեսության զարգացմանը՝ ներգրավելով Ընկերության գործունեության տարածաշրջանում գործող մատակարարներին:

2023 թ-ին ապրանքների գնման համար ծախսվել է 148 միլիոն ԱՄՆ դոլար: Այս ծավալում Հայաստանի մասնաբաժինը կազմում է 52%, իսկ այլ երկրների ընդհանուր մասնաբաժինը՝ 48%:


ԶՊՄԿ-ի ապրանքների և ծառայությունների գնումների շնորհիվ 2023 թ-ին տեղական ընկերություններում ստեղծվել է 1,234 աշխատատեղ (այդ ընկերությունների աշխատուժի միջինում 34%-ը):




2023 Թ. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԾԱՎԱԼԻ[3]

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՎԻ 2023 Թ.

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԾԱՎԱԼԻ 2023 Թ.[3]




ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՎԻ 2023 Թ.




Հաշվետու ժամանակահատվածում հինգ կատեգորիաներում ներառված մի քանի երկրներում ծառայությունների ձեռքբերման համար ծախսվել է 168 մլն ԱՄՆ դոլար: Ծառայությունների ամենամեծ մասնաբաժինը (96%) ձեռք է բերվել Հայաստանում, որին հաջորդում է Ռուսաստանը (3%):

2023 Թ. ԳՆՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ




2023 Թ. ԳՆՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ




[3] «Այլ» երկրների թվում են ԱՄԷ-ն, Հարավային Աֆրիկան, Կանադան, Քենիան, ԱՄՆ, Շվեյցարիան և այլն:

2023 Թ. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ[4]




2023 Թ. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ[4]




2023 թվականին տեղական մատակարարների զգալի մասը կազմել են Երևանի ընկերությունները, այն է՝ 574 ձեռնարկություն կամ 66%-ը[5]: Կապանը և Քաջարանը ներկայացված են եղել համապատասխանաբար 121 (14%) և 24 (3%) ընկերությունների կողմից[6]: Հայաստանի մյուս մարզերին բաժին է ընկել 145 ընկերություն, որը կազմել է 17%[7]:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2023 Թ.:



ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2023 Թ.:



[4] «Այլ»-ը ներառում է Կոտայքի, Արմավիրի, Լոռու, Վայոց Ձորի, Արարատի և մյուս մարզերը:
[5] 2022 թվականի 565 կազմակերպության կամ 67%-ի համեմատ:
[6] 2022 թվականին Կապանը և Քաջարանը ներկայացված են եղել համապատասխանաբար 113 (14%) և 26 (3%) ընկերությունների կողմից:
[7] 2022 թվականին այլ մարզերը ներկայացվել են 135 ընկերությունների կողմից, որոնց մասնաբաժինը կազմել է 16%:

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ. ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՄԵՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

GRI 3-3, GRI 207-1, GRI 207-2

Ընկերությունն ապահովում է իր գործունեության համապատասխանությունը ՀՀ հարկային օրենսդրության պահանջներին՝ ժամանակին և ճշգրիտ ներկայացնելով հարկային հայտարարագրերը, վճարելով հարկերը և կատարելով օրենքով սահմանված բոլոր պարտավորությունները: Մեր Ընկերությունը պրոակտիվ մոտեցում է ցուցաբերում հարկային պարտավորությունների կառավարման հարցում՝ ապահովելով հարկային օրենսդրության փոփոխություններին իր տեղեկացված լինելը և կիրառում է հուսալի ներքին վերահսկողություն՝ հարկային օրենսդրության պահանջներին համապատասխանությանն առնչվող ցանկացած ռիսկ մեղմելու համար:


Հարկային օրենսդրության համապատասխանության նկատմամբ մեր մոտեցումը, կիրառվում է Ընկերության բոլոր ենթակառուցվածքներում՝ ինտեգրելով այն ԶՊՄԿ-ի ֆինանսական և գործառնական ընթացակարգերում: Սա ներառում է պարբերական դասընթացներ համապատասխան աշխատակազմի համար, ներքին աուդիտներ և մշտական թարմացումներ հարկային օրենսդրության փոփոխություններին համընթաց:

Ներքին աուդիտների և երրորդ կողմի ամենամյա ստուգումների միջոցով գնահատվում են Ընկերության հարկային պարտավորությունների կատարման և վերահսկողության համակարգը: Ստուգումները թույլ են տալիս գնահատել հարկային հսկողության արդյունավետությունը և համոզվել, որ մեր Ընկերության հարկային գործունեությունը հուսալի է և համապատասխանում է գործող օրենսդրությանը: Այս գնահատումների արդյունքները հնարավորություն են տալիս կատարելագործել հարկային պարտավորությունների կառավարման համակարգը՝ երաշխավորելով հայտնաբերված ցանկացած խնդրի արագ լուծում:

Մեր Ընկերությունն, իր հարկային գործունեության ստուգման նպատակով, ամեն տարի ներգրավում է անկախ, երրորդ կողմ հանդիսացող աուդիտոր՝ այդպիսով ապահովելով հրապարակվող հարկային տվյալների ճշգրտությունն ու լիարժեքությունը: Արտաքին ստուգումն օգնում է համոզվել, որ Ընկերության հարկային հաշվետվությունները թափանցիկ են, ճշգրիտ և համապատասխանում են օրենսդրության պահանջներին:

Մենք պրոակտիվ մոտեցում ենք ցուցաբերում հարկային ռիսկերի կառավարմանը և նվազեցմանը, այն է՝ հարկային հաշվետվության հստակ ընթացակարգերի սահմանում, հարկային մարմինների

2014-2023ԹԹ. ՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԵՐ,
ՄԻԼԻԱՐԴ ՀՀ ԴՐԱՄ



հետ մշտական երկխոսության վարում, և ըստ անհրաժեշտության արտաքին փորձագետների ներգրավում:

Հարկային ռազմավարությունը համահունչ է Ընկերության ընդհանուր նպատակներին և վերահսկվում է ամենաբարձր կառավարչական, մակարդակով: Գլխավոր տնօրենը սահմանում է Հարկային ռազմավարության վերանայման պարբերականությունը՝ ապահովելով դրա արդիականությունը նորմատիվ-իրավական կամ գործարար միջավայրի ցանկացած փոփոխության դեպքում: ԶՊՄԿ-ի Հարկային ռազմավարությունն ընդգրկված է Ընկերության առավել ընդարձակ գործարար ռազմավարության մեջ՝ պահպանելով վերջինիս ֆինանսական կայունությունը և գործառնական արդյունավետությունը: Հարկային պարտավորությունների արդյունավետ կառավարումը թույլ է տալիս ԶՊՄԿ-ին վերաներդնել միջոցներն իր բիզնեսում և ապահովել երկարաժամկետ աճ: Ֆինանսական տնօրենը վերահսկում է համապատասխանությունը Հարկային ռազմավարությանը, ինչպես նաև դրա իրականացումը՝ ապահովելով հարկային գործունեության համապատասխանությունը օրենսդրական պահանջներին և կառավարելով հարկերի հետ առնչվող ցանկացած ռիսկ:

ԶՊՄԿ-ը հպարտ է այն փաստով, որ հանդիսանում է երկրի թիվ մեկ հարկատուն: Պետք է նշել, որ սեփականաշնորհումից հետո Ընկերությունը երեք տարի անընդմեջ առաջին տեղն է զբաղեցնում հարկատուների ցանկում: Ստորև ներկայացված աղյուսակն արտացոլում է ԶՊՄԿ-ի տեղը երկրի առաջատար հարկատուների ցանկում վերջին տասը տարիների ընթացքում:

ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ. ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

GRI 207-3

ՄԵՆՔ ՆԵՐԴՐԵԼ ԵՆՔ ՄԵՐ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ, ԲՈՂՈՔՆԵՐՆ ՈՒ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՎԱՔԱԳՐԵԼՈՒ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ: ԱՅՍՊԻՍՈՎ, ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ, ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԵՆՔ ՀԱՎԱՔՈՒՄ ԵՆՔ ՀԱՐԿՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

Ընկերությունը հաղորդակցման թափանցիկ ուղիների միջոցով տեղեկացնում է շահագրգիռ կողմերին իր հարկային ռազմավարությունների և քաղաքականությունների մասին: Շահագրգիռ կողմերի կողմից ներկայացված ցանկացած մտահոգությանը Ընկերությունը ցուցաբերում է պատասխանատու մոտեցում և արագ արձագանք տալիս՝ վստահությունն ու հաշվետվողականությունը պահպանելու նպատակով: Սա ներառում է նաև Ազդարարման քաղաքականություն, որը հնարավորություն է տալիս գաղտնի կերպով հայտնել հարկային գործունեության հետ կապված ցանկացած կասկածելի ոչ էթիկական կամ անօրինական վարքագծի մասին: Ընկերությունը նաև հարթակներ է տրամադրում աշխատակիցներին և շահագրգիռ կողմերին՝ մտահոգությունները ներկայացնելու համար (օրինակ՝ Բողոքների դիտարկման ընթացակարգ)՝ ապահովելով, որ բոլոր հաղորդումները մանրակրկիտ հետաքննվեն և պատշաճ կերպով լուծվեն:

Մենք կանոնավոր և պրոակտիվ կապ ենք պահպանում հարկային մարմինների հետ՝ համապատասխան հարկային բոլոր նորմատիվ ակտերի պահանջների կատարումն ապահովելու համար: Սա ներառում է մասնակցություն խորհրդակցություններին և արագ արձագանքում հարկային մարմինների կողմից իրականացվող հարցումներին կամ աուդիտներին: Հարկային մարմինների հետ համագործակցային հարաբերություններ զարգացնելով՝ ԶՊՄԿ-ն նպատակ ունի ապահովել թափանցիկություն և փոխըմբռնում հարկային հարցերի շուրջ, ինչն օգնում է արդյունավետ կերպով լուծել խնդիրները և պահպանել օրենսդրության պահանջների կատարումը:

Մեր Ընկերությունը ներգրավվում է հանրային քաղաքականության քարոզչությանը՝ մասնակցելով ոլորտում ձևավորված ընկերակցությունների հանդիպումներին և համաժողովներին՝ քննարկելու

և մշակելու հարկային քաղաքականություն: Այս մասնակցությունը հնարավորություն է տալիս ԶՊՄԿ-ին ձևավորել ոլորտում կիրառվող առաջատար գործելակարգին համապատասխանող և կայուն տնտեսական աճը խթանող արդար և գործուն հարկային քաղաքականություն: ԶՊՄԿ-ն հանդես է գալիս արդար հարկային քաղաքականության օգտին, որը նպաստում է հանքարդյունաբերական ոլորտի երկարաժամկետ կայունությանը: Ընկերությունը համագործակցում է այլ շահագրգիռ կողմերի հետ՝ ապահովելու, որ հարկային օրենսդրության մեջ հաշվի առնվեն ոլորտի յուրահատուկ մարտահրավերներն ու հնարավորությունները:

GRI 207-4

Ընկերության աուդիտի ենթարկված միասնական ֆինանսական հաշվետվություններում ընդգրկված իրավաբանական անձինք հանդիսանում են Հայաստանի Հանրապետության հարկային ռեզիդենտներ:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՀԱՋԱՐ ԱՄՆ ԴՈԼԱՐ

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ		«Լեռ-Էքս» ՍՊԸ	
Ցուցանիշներ	**Ռեզիդենտ իրավաբանական անձի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն**	**Ցուցանիշներ**	**Ռեզիդենտ իրավաբանական անձի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն**
Կազմակերպության հիմնական գործունեությունը	Հանքարդյունաբերություն	Կազմակերպության հիմնական գործունեությունը	Հանքարդյունաբերություն
Աշխատակիցների թիվը (31.12.2023թ. դրությամբ)	4,666	Աշխատակիցների թիվը (31.12.2023թ. դրությամբ)	114
Երրորդ անձանց վաճառքից ստացված եկամուտներ	795,787	Երրորդ անձանց վաճառքից ստացված եկամուտներ	3,104
Օտարերկրյա հարկային տարածաշրջանում գործող խմբի այլ ընկերությունների հետ ներխմբային գործարքներից ստացված եկամուտ	0	Օտարերկրյա հարկային տարածաշրջանում գործող խմբի այլ ընկերությունների հետ ներխմբային գործարքներից ստացված եկամուտ	0
Շահույթ/վնաս մինչև հարկումը	363,308	Շահույթ/վնաս մինչև հարկումը	(103,153)
Նյութական միջոցներ, բացի դրամական միջոցներից և դրանց համարժեքներից	Հիմնական միջոցներ — 547,932 Ապրանքային պաշարներ — 96,670	Նյութական միջոցներ, բացի դրամական միջոցներից և դրանց համարժեքներից	Հիմնական միջոցներ — 2,046 Ապրանքային պաշարներ — 150
Ընկերության՝ կանխիկ եղանակով վճարված եկամտահարկ	29,263	Ընկերության եկամտահարկ	0
Շահույթի/վնասի դիմաց հաշվեգրված եկամտահարկ	56,671		



03

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ. ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

ԶՊՄԿ-Ն ՁԳՏՈՒՄ Է ՊԱՀՊԱՆԵԼ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐՁՐ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ: ՄԵՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿՆ Է ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՊԱՀՊԱՆԵԼ ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆԸ, ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՍՏԵԼ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ ԵՎ ՄԵՐ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ:

2023թ-ին չի արձանագրվել Ընկերությանը կամ Ընկերության աշխատողներին առնչվող որևէ հաստատված կոռուպցիոն դեպք:

0

կոռուպցիոն դեպք

2023թ-ին կանայք կազմում էին Տնօրենների խորհրդի կազմի

14%

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Մենք գիտակցում ենք կորպորատիվ կառուցվածքի շարունակական բարելավման անհրաժեշտությունը և հանձն ենք առել շարունակել այդ ուղղությամբ մեր ջանքերը: Մեր հիմնարար սկզբունքները հետևյալն են՝

Թափանցիկություն ԵՎ հաշվետվողականություն

Մենք առաջնահերթ ենք համարում թափանցիկությունն ու հաշվետվողականությունը կորպորատիվ կառավարման բոլոր ասպեկտներում: Հստակ, ճշգրիտ և ժամանակին տրամադրվող տեղեկատվությունը չափազանց կարևոր է շահագրգիռ կողմերի վստահությունը պահպանելու համար: Այդ իսկ պատճառով մենք՝

- Հրապարակում ենք ֆինանսական հաշվետվություններ և փաստաթղթեր՝ կայուն զարգացման մասով թարմացումների վերաբերյալ շահագրգիռ կողմերին տեղյակ պահելու համար:
- Պարբերաբար հանդիպումներ ենք կազմակերպում շահագրգիռ կողմերի հետ Ընկերության ղեկավարության և Տնօրենների Խորհրդի անդամների հետ անմիջական շփման համար:
- Իրականացնում ենք ներքին վերահսկողություն և աուդիտի գործընթացներ՝ մեր ֆինանսական և գործառնական տվյալների հուսալիությունն ապահովելու համար:

Կառավարման մեր մեթոդները միտված չեն պարզապես կանոնակարգերի պահանջներին համապատասխանելուն: Մենք ձգտում ենք խթանել ազնվության և վստահության մշակույթը: Պահպանում ենք Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ)՝ հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքները: Ավելին, մենք պարտավորվել ենք հետևել Գլոբալ հաշվետվողականության նախաձեռնության (GRI)՝ կայուն զարգացման գծով հաշվետվողականության վերաբերյալ առաջարկություններին, որոնք համահունչ ե Կլիմայիկ առնչվող ֆինանսական հաշվետվողականության աշխատանքային խմբի (TCFD) սկզբունքներին և Կայուն զարգացման ոլորտում հաշվապահական հաշվառման չափանիշների խորհրդի (SASB) չափանիշներին:

Պատասխանատվություն

Պատասխանատվությունը մեր գործունեության անբաժանելի մասն է: Մեր որոշումներն ազդում են բազմաթիվ շահագրգիռ կողմերի, ներառյալ աշխատակիցների, հաճախորդների, մատակարարների, համայնքների և շրջակա միջավայրի վրա: Մեր պարտավորությունները ներառում են՝

- Գործարար էթիկա և ազնվություն:
- Աշխատանքային արդար նորմերի և աշխատանքային անվտանգ պայմանների պահպանում մեր մատակարարման ամբողջ շղթայում:
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցում՝ բնապահպանական առումով անվտանգ գործունեության միջոցով:
- Մեր գործունեության համայնքներում սոցիալական և տնտեսական նախաձեռնությունների իրականացում:

Մեր մոտեցումը դուրս է գալիս գործարար շահերի սահմաններից և ուղղված է ավելի լայն սոցիալ և բնապահպանական խնդիրների լուծմանը:

Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումը չափազանց կարևոր է մեր նպատակների իրականացման և շահագրգիռ կողմերի շահերի պաշտպանության համար: ԶՊՄԿ-ի ռիսկերի կառավարման համակարգը օգնում է բացահայտել, գնահատել և մեղմել մեր բիզնեսի վրա ազդող ռիսկերը: Մեր մոտեցումը ներառում է՝

- Ռիսկերի գնահատում առաջացող սպառնալիքները բացահայտելու նպատակով:
- Ռիսկերի մեղմման ռազմավարությունների, այն է՝ ֆինանսական վերահսկման մեթոդների, անվտանգության մեխանիզմների և ճգնաժամերի կառավարման պլանների կիրառում:
- Ռիսկերի մասին իրազեկվածության մշակույթի ձևավորում, որը թույլ է տալիս աշխատակիցներին արդյունավետ կառավարել ռիսկերը:

Ռիսկերի կառավարման այս պրոակտիվ մեթոդը թույլ է տալիս կողմնորոշվել անորոշ իրավիճակներում և ապահովել կայուն զարգացում:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐ. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՏՇԱՃ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

GRI 2-17, GRI 2-9

Բաժնետերերի Ընդհանուր ժողով

Ընկերության կառավարման բարձրագույն մարմին, որը որոշում է կայացնում Ընկերության գործունեության ամենակարևոր հարցերի վերաբերյալ

→

Տնօրենների Խորհուրդ

Ապահովում է Ընկերության ռազմավարությունը և երկարաժամկետ կայուն զարգացումը

→

Գլխավոր տնօրեն

Միանձնյա գործադիր մարմին, որը պատասխանատու է Ընկերության առօրյա գործունեության կառավարման համար

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

GRI 2-12

Տնօրենների Խորհուրդը (ՏԽ), Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի գլխավորությամբ, ընկերության երկրորդ ամենակարևոր կառավարման մարմինն է:

ՏԽ-ը պարբերաբար ստուգում է կառավարման և ղեկավարման բոլոր գործընթացների արդյունավետությունը՝ ապահովելու դրանց հուսալիությունն ու արձագանքելիությունը: Նման ստուգումները ենթադրում են Ընկերության ներսում ռազմավարությունների և քաղաքականությունների իրականացման և դրանց վերջնարդյունքների ուսումնասիրություն, ինչը թույլ է տալիս ապահովել շարունակական կառավարում և ազդեցությունների կառավարման բարելավում:


Ստուգումների ժամանակացույցը սահմանված է ԶՊՄԿ-ի Կանոնադրությամբ, Տնօրենների Խորհրդի՝ նորմատիվ-իրավական բազայի վրա հիմնված Կանոնակարգով և «Բաժնետիրական ընկերությունների» մասին ՀՀ օրենքով:

Իր պատասխանատվության շրջանակներում Ընկերության քաղաքականություններն ու ռազմավարությունները ևս ենթակա են ՏԽ-ի կողմից հաստատման:

ՏԽ-ն բաղկացած է երկու գործադիր և հինգ ոչ-գործադիր անդամներից. ՏԽ անդամներից մեկը կին է, իսկ մնացած վեցը՝ տղամարդ:


ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՆ ԸՍՏ ԱՆԴԱՄՆԵՐԻ

■ Գործադիր անդամներ ■ Ոչ գործադիր անդամներ




ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՆ ԸՍՏ ՍԵՌԻ

■ Արական ■ Իգական



ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ

■ Մինչև 30 տ. ■ 30-50 տ. ■ 50 տ. բարձր



ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

GRI 2-11

Տնօրենների Խորհրդի նախագահը գործադիր մարմնից առանձնացված է. նման կառուցվածքն ապահովում է կառավարման համակարգ, որի շրջանակում ռազմավարական վերահսկողությունն ու կառավարումը մնում են առանձին գործառույթներ: Սա ընդգծում է մեր հստակ պարտավորությունը՝ կառավարման և գործադիր մարմինները տարանջատելու գործում: Այս պարտավորությունը չափազանց կարևոր է շահերի բախումը կանխելու և Ընկերության հանձնառությունը բարձր չափանիշներին և արդյունավետ կորպորատիվ կառավարման մեթոդներին խթանելու համար՝ դրանով իսկ վստահություն և ապահովություն ներշնչելով մեր շահագրգիռ կողմերին:

Տնօրենների Խորհրդի ժողովներն (նիստերն) անց են կացվում ՏԽ անդամների համատեղ մասնակցությամբ (այդ թվում հեռախոսակապով, տվյալների հեռահար փոխանցման կամ կապի այլ միջոցներով, որոնք ապահովում են իրական ժամանակում մասնակիցների միջև հաղորդակցությունը) կամ հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով), բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերության Կանոնադրությամբ այլ բան նախատեսված

է: Ժողովների ձևաչափի նման ճկունությունը մասնավորապես արդյունավետ էր 2023 թ.-ին, որի ընթացքում տեղի է ունեցել Տնօրենների Խորհրդի երկու ժողով:

ՏԽ ժողովները նախաձեռնվում են ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս քան վեց ամիսը մեկ: Ժողովը նախաձեռնում է ՏԽ նախագահը, սակայն նիստի իրականացման պահանջով կարող է հանդես գալ ՏԽ ցանկացած անդամ, Վերստուգիչ հանձնաժողովը, գործադիր մարմինը, աուդիտորը, կամ քվեարկող բաժնետոմսերի տասը և ավելի տոկոսը տնօրինող բաժնետերերը: Այս գործընթացն ապահովում է բոլոր հիմնական շահագրգիռ կողմերի ձայնի իրավունքը որոշումների կայացման գործընթացում:

Տնօրենների Խորհրդի նախագահը նախագահում է ժողովները: Նրա բացակայության պարագայում, Խորհրդի որոշմամբ, ՏԽ անդամներից որևէ մեկը կարող է կատարել ՏԽ նախագահի պարտականությունները:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

GRI 2-12

ԶՊՄԿ-ի Գլխավոր տնօրենը, որպես միանձնյա գործադիր մարմին, գլխավորապես պատասխանատու է Ընկերության ամենօրյա գործունեության կառավարման համար: Դա ենթադրում է Ընկերության՝ հատկապես կայուն զարգացման հետ կապված նպատակների, արժեքների կամ առաքելության, ռազմավարությունների, քաղաքականության և նպատակների մշակում (թարմացում) և հաստատում: Գլխավոր տնօրենը գործում է ԶՊՄԿ Կանոնադրության, Գլխավոր տնօրենի մասին Կանոնակարգի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հիման վրա:

Գլխավոր տնօրենն իրականացնում է Ընկերության ամենօրյա կառավարում, մինչդեռ ռազմավարական և կայուն զարգացման ավելի լայն նպատակները վերահսկվում են Տնօրենների Խորհրդի հետ սերտ համագործակցության և Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի անմիջական վերահսկողության շրջանակներում:

Գլխավոր տնօրենի լիազորությունները ներառում են Ընկերության ամենօրյա գործունեության բոլոր ասպեկտները, բացառությամբ այն հարցերից, որոնք վերաբերում են Ընդհանուր Ժողովի և Տնօրենների Խորհրդի բացառիկ իրավասությանը: Ավելին, Գլխավոր տնօրենի տեղակալը, ով նաև Ընկերության Իրավաբանական դեպարտամենտի ղեկավարն է, պաշտոն է զբաղեցնում ՏԽ-ում և պատասխանատու է Ընկերությանը իրավաբանական աջակցության տրամադրման վերահսկման համար:

Ընկերությունում անցկացվում են շաբաթական ժողովներ Գործադիր տնօրենի գլխավորությամբ և Գլխավոր տնօրենի մասնակցությամբ՝ ապահովելով այլ տնօրենների և դեպարտամենտների ղեկավարների մասնակցությունը: Այս հանդիպումներն անչափ կարևոր են գործառնական առաջընթացների և հրատապ խնդիրների վերաբերյալ տեղեկատվության անմիջական փոխանակման համար: Ժողովների ընթացքում յուրաքանչյուր ստորաբաժանման ղեկավար հաշվետվություն է ներկայացնում նախորդ շաբաթվա ընթացքում իրականացված գործունեության վերաբերյալ և քննարկում է հաջորդ շաբաթվա ծրագրերը: Ընկերության կառավարման կառուցվածքում ստեղծվել է Տեխնիկական կոմիտե, որը հանդիպում է հրավիրում գրեթե ամեն շաբաթ և վերահսկվում է Գործադիր տնօրենի կողմից:

GRI 2-16

Համապատասխան ստորաբաժանումների գործունեության հետ կապված խնդրահարույց հարցերն ուղղակիորեն զեկուցվում են Գլխավոր տնօրենին վերոնշյալ շաբաթական կամ պլանավորված այլ ժողովների ժամանակ: Անհրաժեշտության դեպքում լրացուցիչ անհատական հանդիպումներ են կազմակերպվում Գլխավոր տնօրենի և վերջինիս տեղակալների կամ դեպարտամենտների ղեկավարների միջև՝ կոնկրետ հարցերի առավել խորը քննարկման նպատակով: Հաշվետու ժամանակահատվածում լուրջ մտահոգությունների մասին բարձրաձայնվել է Գլխավոր տնօրենի մակարդակով, որոնք մանրամասն ուսումնասիրվել և զեկուցվել են համապատասխան կերպով: Կարևոր է նշել, որ նման պրոակտիվ մոտեցումն՝ առկա մտահոգությունների արձագանքմանն, արտացոլում է արդյունավետ կառավարման Ընկերության պարտավորությունը: Նման հարցերը որպես կանոն վերաբերում են գործառնական մարտահրավերներին, ռազմավարական որոշումներին կամ ռիսկերի կառավարման հետ կապված հարցերին:

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ և ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ. ՆԵՐՔԻՆ և ԱՐՏԱՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

GRI 2-10

ԶՊՄԿ-ի Տնօրենների Խորհրդի անդամներն ընտրվում են Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի կողմից: Ընտրության գործընթացը կարգավորվում է Ընկերության Կանոնադրությամբ, Տնօրենների Խորհրդի կանոնակարգով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով: Նման կառուցվածքային մոտեցումն ապահովում է ՏԽ-ի ընտրությունը պատշաճ ընթացակարգերի կիրառմամբ՝ շահագրգիռ կողմերի շահերն արդյունավետ կերպով ներկայացնելու համար:

ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒՄ. ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԹԻՐԱԽԱՎՈՐՈՒՄ

GRI 2-13

Գլխավոր տնօրենը և ՏԽ-ն համատեղ կառավարում են ազդեցությունները, մինչդեռ Կայուն զարգացման գծով տնօրենը պատասխանատու է կայուն զարգացման կառավարման համար: Այս մոտեցումը թույլ է տալիս էական ազդեցությունների վերաբերյալ որոշումները կայացնել կառավարման ամենաբարձր մակարդակով՝ հաշվի առնելով մեր ռազմավարական նպատակներին համահունչ ընդհանուր հեռանկարը:

Որևէ այլ աշխատակից լիազորված չէ՝ կատարելու ազդեցությունների կառավարման հատուկ գործառույթ: Գլխավոր տնօրենը, ով գործում է ՏԽ-ի ղեկավարության և վերահսկողության ներքո, հրամաններ և հրահանգներ է արձակում, որոնք պարտադիր են բոլոր աշխատակիցների համար: Նման կառուցվածքը թույլ է տալիս իրականացնել կենտրոնացված վերահսկում և քաղաքականությունների հետևողական իրականացում Ընկերության բոլոր օղակներում:

Կառավարման ներկայիս համակարգը պետք է նախատեսի բարձրաստիճան ղեկավարների կամ այլ աշխատակիցների կողմից կայուն զարգացման վերաբերյալ Տնօրենների Խորհրդին հաշվետվություններ ներկայացնելու ֆորմալացված գործընթաց կամ պարբերականություն: Այնուամենայնիվ, ՏԽ-ն ունի բացառիկ լիազորություն հաստատել ներքին քաղաքականությունները, ներառյալ փոփոխությունները, ինչը թույլ կտա մշտապես տեղեկացված և ներգրավված լինել բարձր մակարդակով կայացված որոշումներում, որոնք վերաբերում են տնտեսության, շրջակա միջավայրի և մարդկանց վրա ԶՊՄԿ-ի ազդեցությանը: Գլխավոր տնօրենն ապահովում է այդ քաղաքականությունների իրականացումը և կանոնավոր կերպով հետևում է դրանց վերահսկողության մեխանիզմների միջոցով:

ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ. ՎԵՐՋԻՆԻՍ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ և ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ

GRI 2-19

Տնօրենների խորհրդի և ղեկավար կազմի վարձատրության կառուցվածքը մշակված է այնպես, որ ապահովի համապատասխանությունը մեր ռազմավարական և գործառնական նպատակներին: Մենք խթանում ենք մեր մրցակցային առավելության ռազմավարությունը՝ անձնակազմ ընտրելիս պարբերաբար պարզևատրելով աշխատանքի ընդունված մասնագետներին և կիրառելով խրախուսման միջոցներ՝ լավագույն մասնագետներին ներգրավելու նպատակով: Նշյալ միջոցառումները համապատասխանում են Ընկերության երկարաժամկետ նպատակներին և անձնակազմի հավաքագրման գործընթացից ակնկալվող արդյունքներին:

Պայմանագրերի լուծման քաղաքականությունը և համապատասխան փոխհատուցման կարգը մշակվել են՝ աշխատակիցների նկատմամբ արդար վերաբերմունքի ապահովման համար: Սույն հարցերը կարգավորվում են նախապես սահմանված պայմանագրային դրույթներով և ՀՀ աշխատանքային օրենսգրքով: Հատկանշական է, որ Ընկերությունը չի տրամադրում լրացուցիչ կենսաթոշակային արտոնություններ: Նման արտոնություններ նախատեսվում են միայն ՀՀ Աշխատանքային օրենսգրքով:

Ղեկավար կազմի և կառավարման մարմինների անդամների վարձատրության մեր քաղաքականությունները սերտորեն կապված են տնտեսության, շրջակա միջավայրի և սոցիալական փոխգործակցության վրա ազդեցությունների կառավարման իրենց պարտականությունների հետ: Վարձատրության քաղաքականությունների մեջ ներառված կատարողական ցուցանիշներն ընդգծում են կայուն զարգացման աճը, պատասխանատու վերաբերմունքը շրջակա միջավայրի պաշտպանությանը, և դրական ազդեցությունը համայնքների վրա: Կատարողական ցուցանիշները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝ ֆինանսական ցուցանիշներ, բնապահպանական նորմերի պահպանում և սոցիալական նախաձեռնությունների իրականացման նպաստում:

GRI 2-20

Վարձատրության քաղաքականությունները սահմանվում են Գործադիր մարմնի կողմից: Ընկերությունն ունի նաև գործող Արհմիություն: Առկա է Կոլեկտիվ պայմանագիր:

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Փետրվարից մինչև հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում Ընկերությունը հրավիրում է տարեկան Ընդհանուր Ժողով, որը պաշտոնական հարթակ է Ընկերության աշխատանքի արդյունավետությունն ու ռազմավարական ուղղությունը քննարկելու համար: Տարեկան Ընդհանուր Ժողովը և ցանկացած արտահերթ ժողով հնարավորություն են տալիս քննարկել և որոշումներ կայացնել ԶՊՄԿ-ի Կանոնադրությամբ սահմանված լիազորությունների շրջանակում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Արդյունավետ կորպորատիվ կառավարում և թափանցիկություն ապահովելու նպատակով՝ Ընդհանուր Ժողովը հիմնել է երկու՝ Վերստուգիչ և Հաշվիչ հանձնաժողովներ: Մենք, այնուամենայնիվ, դիտարկում ենք հանձնաժողովների թվի ավելացումը՝ կայուն զարգացման և այլ հարցերի արդյունավետ կառավարման համար:

Վերստուգիչ հանձնաժողով
(ընտրվում է Ընդհանուր Ժողովի կողմից)

Պարտականություններ

- Ֆինանսական և տնտեսական գործունեության վերահսկում,
- Ընկերության ղեկավար մարմինների որոշումների իրականացման մշտադիտարկում,
- Ընկերության փաստաթղթերի համապատասխանության ստուգում օրենքին, նորմատիվ իրավական ակտերին և Կանոնադրությանը:

Իրավունքներ

- Ընկերության ֆինանսական և տնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգում,
- Ընկերության ֆինանսական և տնտեսական գործունեության ստուգում Ընկերության նախաձեռնությամբ, Ընդհանուր Ժողովի կամ ՏԽ-ի որոշմամբ, կամ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի տիրապետող բաժնետերերի պահանջով:

Հաշվիչ հանձնաժողով
(ընտրվում է Ընդհանուր Ժողովի կողմից)

Պոտենցիալ անդամների ցանկ. Հաշվիչ հանձնաժողովի կազմում ներառված չեն Տնօրենների Խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Գլխավոր տնօրենը և նշված պաշտոնների համար որպես թեկնածուներ առաջադրված անձինք:

Պարտականություններ

- Քվեարկության համար նախատեսված ընթացակարգի, ինչպես նաև քվեարկությանը մասնակցելու բաժնետիրոջ իրավունքի ապահովում,
- Քվեների հաշվարկի իրականացում, քվեարկության արդյունքների ամփոփում, արձանագրության կազմում և քվեաթերթիկների հանձնում ԶԿՄԿ-ի արխիվ:

Իրավունքներ

- Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի քվորումի վերաբերյալ որոշման ընդունում:

Հանձնաժողովի ձևավորված չլինելու դեպքում համապատասխան գործառույթներն իրականացնում է Ընկերության Տնօրենների Խորհրդի քարտուղարը (Կորպորատիվ քարտուղար):

ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

GRI 2-27, GRI 206-1

Հաշվետու ժամանակահատվածում գրանցվել են օրենքների և կանոնակարգերի պահանջներին չհետևելու ոչ էական դեպքեր: Մանրամասները ներկայացված են Հավելված 3-ում:

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՅՑԵՐԻ ՔԱՆԱԿՆ ՈՒ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՀԱԿԱՄԱՐՑԱԿՑԱՅԻՆ ՎԱՐՔԱԳԾԻ, ԱՆԲԱՐԵԽԻՂՁ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ և ՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՐԵՎԷ ԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՉԻ ՍԿՍՎԵԼ ԿԱՄ ԱՎԱՐՏՎԵԼ: ՍԱ ՎԿԱՅՈՒՄ Է ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏՆՈՒՄ Է ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ և ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ:

GRI 417-3

Մարքեթինգի կամ հաղորդակցության մասին կանոնակարգերի պահանջները չկատարելու որևէ հիշատակման արժանի միջադեպ չի արձանագրվել: Այնուամենայնիվ, մենք ունեցել ենք մարքեթինգային/հաղորդակցության թիմի արձագանք կառավարման հետ կապված հնարավոր խնդիրների մասին հարցերին, ինչին հաջորդել են մեր անմիջական արձագանքը և բարձրացված բոլոր մտահոգությունների վերաբերյալ պարզաբանումները:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ և ՏԵՂԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ, ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ և ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽՍՏԻՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ

GRI 3-3, GRI 205-1, SASB EM-MM-510A.1

Հակակոռուպցիոն կառավարմանը մեր մոտեցման հիմքում միջազգային և տեղական օրենքների, էթիկայի ստանդարտների և ներքին քաղաքականությունների խստիվ պահպանումն է: Ընկերությունը առաջնահերթություն է համարում ազնվությունը գործարար հարաբերություններում և կոռուպցիոն երևույթների նկատմամբ լիակատար անհանդուրժողական քաղաքականություն է վարում:

Հաշվետու ժամանակահատվածում մշակել ենք տարբեր միջոցառումներ գործարար էթիկայի բարձր չափանիշները և հակակոռուպցիոն հստակ դիրքորոշումը խթանելու համար: Այդ միջոցառումները ներառում են աշխատակիցների հրահանգավորման դասընթացներ՝ կոռուպցիայի դեմ պայքարի և Ընկերության քաղաքականությունների մասին իրազեկվածության մակարդակը բարձրացնելու, ինչպես նաև կասկածելի դեպքերի վերաբերյալ զեկուցման մեխանիզմները կատարելագործելու նպատակով: Ընկերությունը որդեգրել է կոռուպցիայի ցանկացած դրսևորման նկատմամբ բացարձակ անհանդուրժողականության քաղաքականություն:

Կախված խնդրի բնույթից՝ Ընկերությունում Հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման պատասխանատուն Կայուն զարգացման գծով տնօրենն է, ինչպես նաև Անվտանգության դեպարտամենտի ղեկավարը: Նրանց պարտականությունները ներառում են Հակակոռուպցիոն քաղաքականության պահանջներին համապատասխանությունը վերահսկելը, ենթադրյալ խախտումների վերաբերյալ հետաքննություն վարելը և աշխատակիցներին գործարար էթիկայի վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելը:

Մենք մեր աշխատակիցներին տրամադրում ենք կոռուպցիայի դեմ պայքարի բազմաթիվ գործիքներ և մեխանիզմներ, թեժ գիծ ազդարարման համար, պարբերական աուդիտներ և դեպքերի հաշվառման խիստ պահանջներ: Նախքան երրորդ կողմի հետ աշխատելն Ընկերությունը նաև իրականացնում է համապարփակ ստուգում և համոզվում, որ պայմանագրերի բոլոր կետերը համապատասխանում են ԶՊՄԿ-ի հակակոռուպցիոն ստանդարտներին:

Ներկայումս մշակվում է Ընկերության Հակակոռուպցիոն նոր քաղաքականությունը, որը կհաստատվի մինչև 2024 թվականի ավարտը: Մենք նախատեսում ենք միջնաժամկետ հեռանկարում անցում կատարել այդ Քաղաքականությանը:

Թեև Ընկերության Հակակոռուպցիոն քաղաքականությունը և կանոնակարգը դեռևս մշակման և հաստատման փուլում են, մենք պարբերաբար գնահատում ենք մեր բոլոր գործունեությունները՝ կոռուպցիայի հետ կապված հավանական ռիսկերը բացահայտելու համար: Սա թույլ է տալիս Ընկերությանը զգոն լինել կոռուպցիայի դեմ, նույնիսկ մինչև համապատասխան քաղաքականության վերջնական մշակումն ու պաշտոնապես հաստատումը: Սա արտացոլում է մեր պարտավորությունը՝ գործունեության բոլոր մակարդակներում ազնվություն և թափանցիկություն պահպանելու գործում:

Հաշվի առնելով, որ Հակակոռուպցիոն քաղաքականությունն ու համապատասխան կանոնակարգը ներկայումս մշակման փուլում են, բացահայտված էական ռիսկերի կոնկրետ մանրամասները հիմնված են նախնական գնահատականների վրա: Այս ռիսկերը բացահայտվում են Ընկերության գործունեության մոնիտորինգի և գնահատման շարունակական գործընթացների միջոցով, որոնք մենք իրականացնում ենք գնումների գործընթացներում հնարավոր խոցելի հարցերը կառավարելու և նվազագույնի հասցնելու, պետական պաշտոնյաների հետ փոխգործակցելու և պայմանագրերի կառավարման նպատակով: Այնուամենայնիվ, նշվում է, որ Ընկերության ներքին հսկողության հուսալի համակարգի և օրենքների պահանջների պահպանման

մեխանիզների շնորհիվ ոչ մի կոնկրետ միջադեպ կամ գործողություն չի դասակարգվել որպես բարձր ռիսկային: Ռիսկերի գնահատման գործընթացում ընդգծվել է հսկողության մեթոդների շարունակական մոնիտորինգի և բարելավման կարևորությունը կոռուպցիայի հետ կապված հավանական խնդիրներից խուսափելու համար:

Բացերի լրացուցիչ վերլուծության հիման վրա որոշում է կայացվել մշակել Գնումների ընթացակարգ բոլոր հնարավոր ռիսկերը կառավարելու համար և ակնկալում ենք փաստաթղթի մշակման գործընթացն ավարտին հասցնել 2024 թ-ին:

ԶՊՄԿ-ն ակտիվորեն աշխատում է հակակոռուպցիոն միջոցառումների համակարգ ստեղծելու ուղղությամբ: Իսկ մինչ այդ Ընկերությունը կիրառում է առաջադեմ փորձն ու ստանդարտները և իրականացնում է օրենքների պահանջներին համապատասխանության ստուգումներ՝ բացահայտված ռիսկերը մեղմելու համար:

Տարբեր ընթացակարգերի գնահատման նպատակով՝ Ընկերությունը ներգրավում է արտաքին աուդիտորների, ովքեր այդ գնահատումների շրջանակներում ուսումնասիրում են հակակոռուպցիոն միջոցառումները՝ տրամադրելով դրանց արդյունավետության անկախ գնահատական:

Մենք գիտակցում ենք կոռուպցիայի և կաշառակերության կանխարգելման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերի պահանջներին համապատասխանելու կարևորությունը և հետևում ենք կիրառելի միջազգային իրավական չափանիշներին: ԶՊՄԿ-ի քաղաքականությունների և կանոնակարգերի, այդ թվում հակակոռուպցիոն միջոցառումների մշակումը կամրապնդի այդ համապատասխանությունը՝ ապահովելով իրավական և էթիկայի նորմերի խստիվ պահպանումը:

Հակակոռուպցիոն քաղաքականության ամբողջական ներդրումը և կառավարման մարմնի անդամների և աշխատակիցների վերապատրաստումը նախատեսված է 2024-2025 թթ.-ին: Այս ժամանակացույցն արտացոլում է Ընկերության ռազմավարական մոտեցումը, որը ներառում է խելամիտ պլանավորում, ռեսուրսների բաշխում և շարունակական մոնիտորինգ՝ այս չափազանց կարևոր քաղաքականությունների մանրամասն մշակման ու արդյունավետ իրականացման նպատակով:

GRI 205-2

Վերջնական մշակումից և հաստատումից հետո այս քաղաքականություններն ու ընթացակարգերը կներկայացվեն Ընկերությունում, ապահովելով դրանց կիրառումը անձնակազմի կողմից: Ներկայացման ընթացակարգը կներառի մանրամասն քննարկումներ, ինչը թույլ կտա վերահսկել կառավարման մարմնի անդամների կողմից լիարժեք ըմբռնումն ու համապատասխանությունը ներկայացված պահանջներին: Առանձին քննարկումներ կկազմակերպվեն ըստ աշխատակիցների տարբեր կատեգորիաների և տարածաշրջանների՝ քաղաքականությունների և ընթացակարգերի նպատակը և կարևորությունը պատշաճ կերպով ներկայացնելու համար: Մենք նաև նախատեսում ենք Ընկերության Հակակոռուպցիոն քաղաքականությունը ներկայացնել ավելի լայն շրջանակների, մասնավորապես մեր բոլոր գործընկերներին, ըստ նրանց գործունեության տեսակի և ոլորտի՝ հնարավորություն տալով նրանց համապատասխանել Ընկերության հակակոռուպցիոն ստանդարտներին:

Քննարկումների շրջանակներում հիմնական ուշադրության կարժանանան կոռուպցիայի դեմ պայքարի կարևորագույն ոլորտները՝ հաշվի առնելով տարբեր տարածաշրջաններում բացահայտված կարիքներն ու ռիսկերը: Վերապատրաստման դասընթացը կմշակվի աշխատողների առանձին կատեգորիաների և աշխատանքի ոլորտների համար՝ ապահովելով Հակակոռուպցիոն ընթացակարգերի լիարժեք ներկայացումն ու ընկալումը Ընկերության ողջ մակարդակով:

GRI 205-3

Հաշվետու ժամանակահատվածում չի արձանագրվել Ընկերությանը կամ Ընկերության աշխատողներին առնչվող որևէ հաստատված կոռուպցիոն դեպք: Հետևաբար, չեն եղել կոռուպցիոն միջադեպերով պայմանավորված աշխատողների աշխատանքից ազատման, կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքեր: Չեն եղել նաև կոռուպցիայի հետ կապված օրինախախտումների պատճառով գործընկերների հետ պայմանագրերի լուծման կամ վերջիններիս գործունեության ժամկետը չերկարաձգելու հաստատված դեպքեր: Հաշվետու ժամանակահատվածում մեր Ընկերության կամ նրա որևէ աշխատողի նկատմամբ կոռուպցիայի վերաբերյալ որևէ հրապարակային իրավական գործ չի հարուցվել:

Մեր Ընկերությունը Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱԶԹՆ) մաս է կազմում: Մենք պարբերաբար ներկայացնում ենք թարմացված ֆինանսական և այլ տվյալներ՝ ԱԶԹՆ պահանջներին համապատասխան: Դրանք հրապարակվում են Հայաստանի ԱԶԹՆ կողմից՝ ապահովելով ԶՊՄԿ-ի ֆինանսական և այլ գործունեության թափանցիկությունը:

Ընկերությունը հավատարիմ է Միջազգային առևտրի պալատի (ՄԱՊ) Վարքագծի կանոնագրքին և Դրամաշորթության և կաշառակերության դեմ պայքարի ուղեցույցներին: Կազմակերպական տարբեր ուղեցույցների իրականացումը ԶՊՄԿ կողմից կարգավորվում է ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագրի 10-րդ սկզբունքով: Մեր Ընկերությունը նաև պետք է հետևի «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

ԲՈՂՈՔՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԻՋՈՑՈՎ


GRI 2-25, GRI 2-26

2022 թվականի չորրորդ եռամսյակում Ընկերությունը ներդրել է Բողոքների դիտարկման ընթացակարգը՝ տվյալների հաշվառման էլեկտրոնային համակարգով: Բողոքների դիտարկման ընթացակարգը պաշտոնական փաստաթուղթ է՝ մշակված որպես Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանի (ՇԿՆՊ) մաս: Այն հանդիսանում է Ընկերության կարևոր մասնիկը և շահագրգիռ կողմերի ներգրավման արդյունավետության հիմնական ցուցանիշը: Բողոքների դիտարկման ընթացակարգը պաշտոնական գործընթաց է և սոցիալական կառավարման համակարգի բաղկացուցիչ մաս: Այն նախագծված է խնդիրների վաղաժամ հայտնաբերման և լուծման նպատակով՝ կանխելով դրանց վերածվելը լուրջ խնդրի կամ հանգեցնելը անդառնալի ազդեցության: Նշյալ ընթացակարգը միտված է օպերատիվ կերպով լուծելու ծագող խնդիրները՝ կիրառելով հստակ և թափանցիկ խորհրդատվական գործընթաց, որը համապատասխանում է մշակութային առանձնահատկություններին և հեշտ հասանելի է: Ընկերության համապատասխան աշխատանքային թիմը զբաղվում է Բողոքների դիտարկման ընթացակարգով, այդ թվում՝ էլեկտրոնային գրանցամատյաններով և բողոքների մասին պարբերական զեկույցներով, կատարում է տեղամասային այցեր ստացված տեղեկատվությունը ստուգելու համար, ուսումնասիրում է բողոքների մանրամասները և այլն: Սույն Ընթացակարգը չպետք է խոչընդոտի վարչահրավական պաշտպանության միջոցների հասանելիությանը. այն արտացոլում է համայնքի բողոքներն անաչառ քննելու մեր անսասան հանձնառությունը: Այն նաև նպաստում է ԶՊՄԿ-ի և ազդակիր ու ավելի լայն համայնքների՝ որպես համակարգի անմիջական մասնակիցների, միջև վստահության ամրապնդմանը: Մենք ազդակիր համայնքներին տեղեկացնում ենք Ընթացակարգի մասին շահագրգիռ կողմերի ներգրավման գործընթացի և տարբեր հարցումների ու համայնքային այցելությունների ընթացքում:

ՀԱՄԱՁԱՅՆ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ՝ ՄԵՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՒՄ ԵՆ, ՍԱԿԱՅՆ ՉԵՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎՈՒՄ ՀԵՏԵՅԱԼՈՎ՝

- **ապահովել, որ Ընկերության գործունեությունը համապատասխանում է ՀՀ և միջազգային կիրառելի օրենսդրությանը,**
- **ձգտել կիրառել միջազգային լավագույն փորձը, այդ թվում Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) Կատարողական ստանդարտները և Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհրդի (ՀՄՄԽ/ICMM) սկզբունքները,**
- **բողոքները կառավարել հասանելի, կանխատեսելի, անկողմնակալ և թափանցիկ կերպով,**
- **պահպանել բողոքների գաղտնիությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ բողոքները ներկայացվում են հրապարակայնորեն,**
- **իրականացնել ստացված բողոքների մանրակրկիտ քննություն,**
- **Ընկերության բոլոր աշխատակիցների համար անցկացնել Բողոքների դիտարկման ընթացակարգի վերաբերյալ վերապատրաստում,**
- **իրականացնել բողոքների կառավարման ցուցանիշների մոնիտորինգ և պարբերաբար վերանայել և թարմացնել բողոքների դիտարկմանը վերաբերող նպատակներն ու խնդիրները՝ հիմնվելով կատարողական տվյալների և շահագրգիռ կողմերի հետադարձ կապի վրա:**

ԲՈՂՈՔՆԵՐԸ 2023Թ-ԻՆ



Քանի որ Բողոքների դիտարկման ընթացակարգն ստեղծվել և ներդրվել է 2022 թ. աշնանը, առաջին ամբողջական հաշվետու տարին 2023 թ. է հանդիսացել: 2023 թ-ին ներկայացվել է 23 բողոք, որից միայն երկուսն են ներկայացվել բանավոր և գրանցվել, մնացածը՝ գրավոր կերպով: Մոնիտորինգային մի քանի այց է կատարվել՝ որոշելու և/կամ գնահատելու բողոքի հիմնավորվածությունը: Ընթացքը ցույց է տալիս, որ մարդիկ վստահում են համակարգին և չեն խուսափում բողոք ներկայացնելուց, քանի որ գիտեն, որ Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ գործողություններ: Բոլոր 23 բողոքները վերաբերում են ԶՊՄԿ-ի գործունեության հետևանքով հողին կամ գույքին հասցված վնասին, դեպքերից մի քանիսը տեղի են ունեցել 2019 թ-ին կամ ավելի վաղ: 2023 թ-ին ներկայացված 23 բողոքներից երեքը հողամասերի սեփականատերերի կողմից է, իսկ մնացած 20-ը՝ հողօգտագործողների:

Բավարարվել է 20 բողոք (87%), և մոտ 23,000 ԱՄՆ դոլար բավարար փոխհատուցում է վճարվել հողամասերին, այգիներին կամ այլ գույքին պատճառված վնասի համար: Մնացած 3 բողոքները (13%) ներկայումս դիտարկվում են:

ՄԵԿ ԲՈՂՈՔԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ և ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԻՋԻՆՈՒՄ ԾԱԽՍՎՈՒՄ Է 2-6+ ԱՄԻՍ:

2023թ.-ին չեն գրանցվել առողջական խնդիրների հետ կապված բողոքներ: Համայնքային այցերի ընթացքում մարդիկ ընդհանուր մտահոգություններ են հայտնում հանրային առողջության վերաբերյալ, որոնք սովորաբար կապված են ԶՊՄԿ-ից ստացվող ամսական վճարումների հետ: Նրանք այդ վճարներն ընկալում են որպես ազդեցության, այդ թվում՝ առողջության վրա ազդեցության «փոխհատուցում», մինչդեռ այն ուղղված է համայնքի անդամների հողի օգտագործման դիմաց փոխհատուցմանը:

Տարածաշրջանում և երկրում կա տարածված կարծիք, որ հանքարդյունաբերությունը ուղղակիորեն կապված է հանքարդյունաբերական համայքներում քաղցկեղի ենթադրյալ բարձր ցուցանիշի հետ: Սակայն, առկա տվյալները չեն հաստատում այդ կարծիքը: Ընկերությունն ակտիվորեն աշխատում է համապատասխան լսարանին տրամադրել ճշգրիտ տեղեկատվություն՝ ապահովելով նրանց պատշաճ իրազեկվածությունը: 2023 թ. սեպտեմբերին տպագրված «Այունիքում քաղցկեղի ամենաքիչ դեպքերն են» վերնագրով հոդվածը հղում է անում ՀՀ Առողջապահության նախարարության տվյալներին՝ նշելով, որ Սյունիքում քաղցկեղով հիվանդների թիվն ամենափոքրն է այլ մարզերի, հատկապես Լոռու և Երևանի համեմատ, որտեղ քաղցկեղի դեպքերն ամենաշատն են:

2023 թ. գարնանը ԶՊՄԿ-ը ֆինանսավորել է «Կարիքների գնահատման և ընկալման ուսումնասիրություն» Սյունիքի մարզի հինգը գյուղում, որի ընթացքում հայտնաբերվել են բնակչության առաջնային և երկրորդական կարիքները: Հատկանշական է, որ համայնքային առողջության թեման տեղ չի գտել երկու կատեգորիաներից և ոչ մեկում, ինչը վերահաստատում է առողջության հետ կապված հատուկ կարիքների բացակայությունը:

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻՆ

Մենք ձգտում ենք մնալ ոլորտի նորարարությունների առաջնագծում՝ գիտակցելով դրանց կարևորությունը մրցունակության պահպանման և ռեսուրսների կառավարման բարելավման համար, հատկապես ջրի պահպանման և պղնձի ու մոլիբդենի արդյունահանման համար կարևոր այլ բնական ռեսուրսների ոլորտում: Մենք ներդնում ենք խտացման համակարգ՝ առանցքային տեխնոլոգիա, որը լայնորեն կիրառվում է հանքարդյունաբերության ոլորտում պինդ նյութերը հեղուկներից առանձնացնելու համար: Այս համակարգը թույլ կտա Ընկերությանը վերամշակել և կրկնակի օգտագործել ջուրն արտադրական գործընթացներում: Սա որոշիչ դեր կարող է խաղալ ջրի սպառումը նվազեցնելու հարցում, ինչը տարածված խնդիր է պղնձի և մոլիբդենի արդյունահանման ոլորտում:



04

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ

03
04
05

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ, ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ և ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆԸ:



Ընկերությունն առանձնացրել է 12 առաջնահերթ նպատակ, որոնց իրականացման գործում ԶՊՄԿ-ն առավել նշանակալի ներդրում ունի



ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ. ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԱՌՈՒՄԸ ՄԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

GRI 2-23, GRI 2-24

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԾՈՎ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԸ ՄԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻՑ Է, ՀԵՏԱՀՈՂԱԿԱՆՈՐԵՆ և ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՀԵՏԱՄՈՒՏ Է ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆԸ:

Տնօրենների խորհուրդը և բարձրաստիճան ղեկավարները նույնպես կարևոր դեր են խաղում ռազմավարական վերահսկողության և որոշումների կայացման գործում: Կայուն զարգացմանն ուղղված իր գործունեության ընթացքում ԶՊՄԿ-ն առաջնորդվում է այնպիսի փաստաթղթերով, ինչպիսիք են Վարքագծի կանոնագիրքը և Շրջակա միջավայրի պահպանության, Սոցիալական կառավարման, Առողջության և աշխատանքի անվտանգության կառավարման համակարգը: Այս փաստաթղթերում արտացոլված են Ընկերության պարտավորություններն ու չափանիշները: Ընկերությունը նաև թարմացրել է Կայուն զարգացման իր քաղաքականությունն այս մոտեցումն էլ ավելի ամրապնդելու համար:

Ընկերությունը հավատարիմ է ռիսկերի կառավարման համակարգի միջոցով կայուն զարգացմանը, ինչը ներառում է առողջությունն ու աշխատանքի անվտանգությունը, շրջակա միջավայրի պահպանությունը, շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը և կորպորատիվ կառավարումը: Շարունակական կատարելագործումը և ռազմավարական վերահսկողությունը թույլ է տալիս մեր գործունեությունը համապատասխանեցնել մեր կորպորատիվ պարտականություններին և համայնքի կարիքներին: Սույն հաշվետվությունում ներկայացված է ամենաէական և մանրամասն տեղեկատվությունը, ինչպես նաև կայուն զարգացման ոլորտում Ընկերության ունեցած ներդրումը, ինչի մասին նշվում է հաշվետվության էական թեմաներին նվիրված համապատասխան բաժիններում:

Հաշվետու ժամանակահատվածում կատարված փոփոխություններն ուղղված են եղել շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ տեղական համայնքների, պետական մարմինների և ՀԿ-ների հետ հարաբերությունների ամրապնդմանը:

Բացի այդ, բնապահպանական, սոցիալական և կառավարչական (ESG) ոլորտում մեր առջև դրել ենք ռազմավարական նպատակներ, ներառյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցումը, առողջության և աշխատանքի անվտանգության բարելավումը և համայնքների ներգրավվածության խթանումը:

2024 թ-ի ընթացքում Ընկերությունը մտադրված է կայուն զարգացումը ներառել իր գործունեության մեջ՝ կոնկրետ նպատակներ սահմանելու միջոցով, որոնք են՝ բնապահպանական կառավարման միջոցառումների ներդնումը, առողջության և աշխատանքի անվտանգության ցուցանիշների բարելավումը և համայնքների ներգրավվման ուղղությամբ ներդրվող ջանքերի ընդլայնումը: Նախատեսված միջոցառումները ներառում են նաև վերականգնվող էներգիայի աղբյուրների ավելի լայն կիրառումը, համայնքների զարգացման ծրագրերի ռազմավարության մշակումը, ինչպես նաև կայուն զարգացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման գործընթացի կատարելագործումը:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄԸ ՄԱԿ-Ի ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ

ԶՊՄԿ-ն գիտակցում է ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների կարևորությունը և դրանք էական է համարում կայուն զարգացման իր հայեցակարգի իրականացման և ամենօրյա գործունեության համար: Իր գործունեության առանձնահատկություններից ելնելով՝ Ընկերությունն առանձնացրել է 12 առաջնահերթ նպատակ, որոնց իրականացման գործում ԶՊՄԿ-ն առավել նշանակալի ներդրում ունի:

3 ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ

Ընկերության ներդրումը

ԶՊՄԿ-ն առաջնահերթ կարևորություն է տալիս իր աշխատուժի՝ ներառյալ Ընկերության և կապալառուների աշխատակիցների առողջությանն ու աշխատանքի անվտանգությանը: Ընկերությունը ձգտում է ստեղծել անվտանգ և բարենպաստ աշխատանքային միջավայր իր աշխատակիցների, հյուրերի և իր գործունեությանն առնչվող բոլոր անձանց համար: Այս պարտավորությունը համապատասխանում է Ընկերության՝ «զրոյական վնասի» հասնելու և աշխատավայրում միջադեպերը բացառելու նպատակին:

Ընդհանուր առմամբ

3,001

աշխատող անցել է բուժզննում, որոնցից 496-ը՝ կանայք:

2023 թ. հիմնական արդյունքները

Մշակվել է բացահանքում և պոչամբարային տնտեսությունում հնարավոր արտակարգ իրավիճակների դեպքում գործողությունների ընդարձակ ծրագիր: Արտակարգ իրավիճակների նախարարության հետ համատեղ անցկացվել է կարևոր վարժանք՝ պատահարների արձագանքման արդյունավետությունը գնահատելու համար: Պոչատարի տարածքում իրականացված այս վարժանքը արդյունավետ էր, և ձեռք բերված գիտելիքներն օգտագործվել են միջադեպերի կառավարման համակարգերի շարունակական բարելավման գործում:

Առողջության և աշխատանքի անվտանգության հետ կապված միջադեպերի արձանագրումն ու վերլուծությունը կատարելագործելու նպատակով ներդրվել է «Մազապուրծ դեպքերի, պատահարների և արտադրական դժբախտ դեպքերի մասին հաղորդման, դրանց հետաքննության և հաշվառման» նոր ուղեցույց: Այս միջոցառումը նախատեսված է բացահայտելու հնարավոր ռիսկերն ու միջադեպերի կրկնման միտումները՝ դրանով իսկ նպաստելով կանխարգելիչ միջոցառումների ընդունմանը և աշխատանքի անվտանգության մակարդակի բարձրացմանը:

Բացի այդ,

4,409

աշխատող անցել է առաջին բուժօգնության դասընթաց:

Ընկերության ներդրումը

ԶՊՄԿ-ն շարունակական մասնագիտական զարգացման և կարողությունների զարգացման հնարավորություններ է ստեղծում իր աշխատակիցների համար: Վերապատրաստման ծրագրերն այս հանձնառության կարևոր բաղադրիչն են հանդիսանում: Դրանք հնարավորություն են տալիս բոլոր մակարդակի աշխատակիցներին ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ՝ իրենց աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու և իրենց արդյունավետ ներդրումն ունենալու Ընկերության նպատակների իրականացման գործում:

Առաջարկվող վերապատրաստման ծրագրերը համապարփակ են և ներառում են անհրաժեշտ ուսուցում՝ երաշխավորելով, որ բոլոր աշխատակիցները տեղեկացված լինեն ոլորտի ամենավերջին չափորոշիչների և աշխատանքի անվտանգության ուղեցույցների մասին: Բացի այդ, ԶՊՄԿ-ն անցկացնում է տեղեկատվական և ճանաչողական հանդիպումներ, որպեսզի աշխատակիցները տեղեկացված լինեն ոլորտում տեխնոլոգիական և ընթացակարգային վերջին զարգացումների մասին:

2023 թ. հիմնական արդյունքները

Ստեղծվել է ժամանակակից սարքավորումներով հագեցած ուսումնական կենտրոն, որն առաջարկում է կրթական և վերապատրաստման լայնածավալ ծրագրեր, մասնավորապես առողջության և աշխատանքի անվտանգության ոլորտում: Անցկացված մասնագիտական դասընթացները ներառել են ՝

Աշխատանք բարձրության վրա՝

379 մասնակից

Առասանողներ՝

418 մասնակից

Աշխատանք փակ տարածքներում՝

195 մասնակից

Հրդեհաշիջման աշխատանքներ՝

161 մասնակից

Բացի այդ, կապալառու ընկերությունների 325 աշխատակից մասնակցել է վերապատրաստման տարբեր դասընթացների՝ կատարելագործելով իրենց հմտությունները՝ իրենց զբաղեցրած պաշտոնների համար ներկայացվող պահանջներն անվտանգ կատարելու համար:

Ընկերության ներդրումը

ԶՊՄԿ-ն գիտակցում է ջրի կարևորությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության հանքարդյունաբերական գործունեությունը զգալիորեն կախված է ջրի բավարար պաշարների առկայությունից: Ջուրն օգտագործվում է արտադրական, տեխնիկական և կենցաղային նպատակներով: Ջրի օգտագործման արդյունավետության բարձրացումը շարունակում է մնալ մեր Ընկերության հիմնական խնդիրը:

Այս նպատակով ԶՊՄԿ-ն մշակել է Ջրային ռեսուրսների կառավարման պլան, որը համապատասխանում է ինչպես տեղական կանոնակարգերին, այնպես էլ միջազգային չափանիշներին և ներառում է ջրի օգտագործման և դրա սպառման հետ կապված գործընթացների մոնիտորինգ:

ԶՊՄԿ-ն, առաջին հերթին, հետևում է ոլորտի տեղական չափանիշներին՝ միաժամանակ առաջնորդվելով ՄՖԿ-ի ստանդարտներով: Վերոնշյալ Պլանի շրջանակներում ջրային ռեսուրսների կառավարումն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության կողմից տրված Ջրօգտագործման թույլտվության համաձայն:

2023 թ. հիմնական արդյունքները

Միջազգային մասնագիտացված ընկերության հետ համատեղ մշակվել է խտացուցիչի տեղադրման նախագիծ: Վերջինիս նպատակն է խտացնել պոչանքային խյուսը և հնարավորություն տալ վերամշակել հարստացման գործընթացում օգտագործվող տեխնիկական ջրի մոտ 25%-ը: Շինարարությունը նախատեսվում է սկսել 2024 թվականին, իսկ շահագործումը՝ 2025 թվականին: Նախագծի հաջողության դեպքում նախատեսվում է ավելացնել կրկնակի օգտագործման ենթակա ջրի ծավալը:

Բացի այդ, Քաջարանի համայնքի հետ համատեղ նախաձեռնվել է համայնքի կեղտաջրերի մաքրման ծրագիր: Համապատասխան մաքրման կայանի գնումը նախատեսվում է 2024 թվականին, իսկ շինարարությունը նախատեսվում է սկսել 2025 թվականին:

ISO 14001-2015 ստանդարտների համաձայն՝ 5x5 մատրիցի կիրառմամբ իրականացվել է ջրօգտագործման կետերի ռիսկերի գնահատում:

Մշակվել է նաև մոնիտորինգի ռազմավարություն՝ ՄՖԿ-ի և ISO ուղեցույցներին համապատասխան, որը ներառում է նաև միջազգային լավագույն փորձը:

2024 թվականին մենք նախատեսում ենք սկսել ջրային հաշվեկշռի համապարփակ ուսումնասիրություն, որը կներառվի Ջրային ռեսուրսների կառավարման պլանում:

Ընկերության ներդրումը

ԶՊՄԿ-ի էներգիայի կառավարման ռազմավարությունը նպատակաուղղված է էներգիայի սպառման օպտիմալացմանը՝ ինչպես ծախսերը, այնպես էլ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար: Սա ենթադրում է էներգիայի օգտագործման մոնիտորինգ և կառավարում Ընկերության գործունեության ողջ ընթացքում:

Ընկերությունը շարունակում է հավատարիմ մնալ իր կողմից սպառվող էներգիայի վերահսկմանը՝ շեշտը դնելով էներգաարդյունավետության բարձրացման վրա: ԶՊՄԿ-ն հանձն է առել ընդունել և իրականացնել էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված նախաձեռնություններ:

2023 թ. հիմնական արդյունքները

Իրականացվել են էներգաարդյունավետության և էներգախնայողության միջոցառումներ, այդ թվում՝ էներգաարդյունավետ սարքավորումների արդիականացում, գործընթացների օպտիմալացում՝ էներգասպառման նվազեցման նպատակով, Էներգիայի կառավարման համակարգի ներդրում՝ էներգասպառման առավել արդյունավետ մոնիտորինգի և վերահսկման նպատակով, ինչպես նաև էներգիայի սպառման մոնիտորինգի առաջադեմ տեխնոլոգիաների ներդրում՝ տվյալների ճշգրտության բարձրացման և էներգիայի ավելի արդյունավետ կառավարման նպատակով:

Ձեռնարկվել են էներգաարդյունավետության բարձրացման և էներգախնայողության բարելավման միջոցառումներ, ներառյալ գոյություն ունեցող սարքավորումներն ավելի էներգաարդյունավետ տարբերակներով փոխարինելը, էներգասպառումը նվազեցնելու նպատակով շահագործման գործընթացների կատարելագործումը:

Մեր Ընկերությունն իր ներդրումն է ունեցել նաև Քաջարանում իրականացվող ՄԱԿ-ի ծրագրում՝ համաձայն որի քաղաքի շենքերը ծածկվել են այնպիսի նյութերով, որոնք թույլ են տալիս նվազեցնել էլեկտրաէներգիայի սպառումը ձմռան ընթացքում:

2023 թվականին ԶՊՄԿ-ն նաև նախաձեռնել և իրականացրել է Սյունիք համայնքի կարիքների գնահատման ծրագիրը: Ընկերությունը պարտավորություն է ստանձնել սկսել անհատական արևային պանելների և ջրի բաքերի տեղադրումը:

Ընկերության ներդրումը

ԶՊՄԿ-ն ձևավորում է բարենպաստ աշխատանքային միջավայր, որի շրջանակում յուրաքանչյուր աշխատող հարգված է: Մենք պարտավորվում ենք ապահովել կարիերայի աճի հավասար հնարավորություններ և իրականացնել մեր աշխատակիցների հմտությունների զարգացմանն ու կատարելագործմանն ուղղված ծրագրեր: Աշխատավայրում անվտանգ պայմանների ստեղծումը և խտրականությունից զերծ հանդուրժող մթնոլորտի պահպանումը մեր գլխավոր առաջնահերթություններից են:

2023 թ. հիմնական արդյունքները

ԶՊՄԿ-ում աշխատանքի է ընդունել

335 նոր աշխատող

որոնցից 256-ը Քաջարան և Կապան համայնքներից են:

Աշխատողների հոսունության ցուցանիշը կազմել է

5.5%

ինչը 2022 թվականին արձանագրված ցուցանիշից ցածր է:

Բացի այդ, ներդրվել է աշխատողների գնահատման համակարգ:

Ընկերության ներդրումը

ԶՊՄԿ-ն մշտապես փնտրում է նորարարական մոտեցումներ՝ աշխատողների առաջնորդական որակները բարելավելու, ռեսուրսների կառավարումն օպտիմալացնելու և իր գործունեության կայունությունն ապահովելու համար: Այս նպատակին հասնելու համար Ընկերությունը ոչ միայն զարգացնում է սեփական գաղափարները, այլև ընդունում և իրականացնում է արտաքին աղբյուրներից փոխառած հայեցակարգերը, այդ թվում՝ ներառելով ոլորտային նորարարությունները մեր գործունեության մեջ:

2023 թ. հիմնական արդյունքները

Թվայնացման նախաձեռնությունն իրագործվել է ERP (Ձեռնարկության ռեսուրսների պլանավորման) համակարգի ներդրման միջոցով:

Ընկերության ներդրումը

ԶՊՄԿ-ն նպատակ ունի բարելավել տեղական համայնքներում կյանքի որակը՝ ներդրումներ կատարելով առողջապահական, կրթական և մշակութային նախաձեռնություններում, ինչպես նաև տնտեսական աճին և շրջակա միջավայրի պահպանությանը նպաստող ծրագրերում: Ընկերությունն առաջնահերթություն է տալիս տեղական ենթակառուցվածքների և գյուղատնտեսական նշանակության հողերի պահպանմանն ու զարգացմանը, որոնք կենսական նշանակություն ունեն այս համայնքների տնտեսական կայունության համար:

Բացի այդ, ԶՊՄԿ-ն ձգտում է խթանել տեղական գնումների պրակտիկան՝ տեղական տնտեսության զարգացմանը նպաստելու, ԶՊՄԿ-ից կախվածությունը և աշխատանքի ակնկալիքները նվազեցնելու և ԶՊՄԿ-ի հարևանությամբ գտնվող տնտեսապես ավելի ինքնաբավ համայնքների զարգացումը խրախուսելու նպատակով:

2023 թ. հիմնական արդյունքները

2023 թվականին Ընկերությունը մշակել է Տեղական գնումների քաղաքականություն (ՏԳՔ), ՏԳՔ-ի նպատակներին հասնելու նպատակով Ընկերության սոցիալական աշխատողների թիմը համալրվել է երկու նոր անդամներով:

Ապրանքների ձեռքբերման վրա ծախսվել է ընդհանուր

$148 մլն

որից Հայաստանում գնված ապրանքների մասնաբաժինը կազմել է 52%:

Ծառայությունների գնման վրա ծախսվել է ընդհանուր առմամբ

$168 մլն

որից Հայաստանի մասնաբաժինը կազմել է 96%:

Ընկերության ներդրումը

ԶՊՄԿ-ի տնտեսական ազդեցությունը տարածվում է ինչպես տեղական, այնպես էլ ներպետական մակարդակներում, ինչը վկայում է տնտեսական աճի և տարբեր մակարդակներում համայնքների բարեկեցության վրա Ընկերության խորը ազդեցության մասին:

Ապրանքների և ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության և դրանց մակնշմանը վերաբերող համապատասխան բոլոր նորմատիվ ակտերի պահանջների կատարումը կարևոր նշանակություն ունի ապրանքների և ծառայությունների անվտանգ օգտագործումն ապահովելու համար:

Լինելով հանքարդյունաբերության և մետալուրգիական արդյունաբերության ոլորտում գործող Ընկերություն՝ ԶՊՄԿ-ն մասնագիտացված է պղինձ և մոլիբդեն պարունակող հանքաքարի արդյունահանման վրա, որը հետագայում վերամշակվում է՝ դառնալով պղնձի և մոլիբդենի խտանյութ: Վերջիններս կարևոր նշանակություն ունեն տարբեր կենցաղային ապրանքների արտադրության համար և էական դեր են խաղում կենսամակարդակի բարձրացման և համաշխարհային «կանաչ տնտեսության անցմանը» նպաստելու գործում: Մենք ձգտում ենք ապահովել այս նյութերի անվտանգ, պատասխանատու և արդյունավետ արտադրությունն ու մատակարարումը:

2023 թ. հիմնական արդյունքները

Մատակարարից պատասխան ստանալուց հետո մեր առաջին քայլը տվյալ ապրանքի կամ ծառայության տեխնիկական նկարագրության ստացումն է: Մեր փորձագետների թիմը մանրակրկիտ ուսումնասիրում է տեխնիկական բնութագրերը՝ նախքան մատակարարի հետ համագործակցությունը սկսելը: Ապրանքների որոշակի կատեգորիաների համար կարևոր է ներկայացնել Ապրանքների/նյութերի անվտանգության անձնագրեր (MSDS), հատկապես այն նյութերի համար, որոնք կարող են բնապահպանական կամ սոցիալական վտանգներ պարունակել: Օրինակ՝ մեզ համար առաջնային խնդիր է սնդիկի պարունակության բացակայության ապահովումը:

Մենք համագործակցում ենք այնպիսի ընկերությունների հետ, որոնք լավ տիրապետում են բնապահպանական կանոնակարգերին: Տեղական մատակարարներին Ընկերության կողմից ներկայացվում են հանգամանալից առաջարկություններ՝ ընդգծելով կանոնակարգող նորմերի պահպանման կարևորությունը:

ԶՊՄԿ-ում մատակարարման շղթայի կառավարումը ներառում է մեր գործունեության բոլոր ուղղությունները՝ երաշխավորելով օգտակար հանածոների անխափան արդյունահանումն ու վերամշակումը: Սա ներառում է սարքավորումների ձեռքբերում, հումքի տեղափոխում և լոգիստիկայի կառավարում: Ստացված պղնձի և մոլիբդենի խտանյութերն այնուհետև ուղարկվում են գործընկերներին՝ հետագա վերամշակման և արտադրության համար՝ թիրախավորելով արդյունաբերության ճյուղերն ամբողջ աշխարհում, ներառյալ Չինաստանի, Կորեայի, Ռուսաստանի, Բուլղարիայի, Բելգիայի, Նիդեռլանդների և այլ երկրների շուկաները:

Ընկերության ներդրումը

ԶՊՄԿ-ն մշակել է Բնապահպանական և Կլիմայի փոփոխության ոլորտի քաղաքականությունները, որոնք նպաստում են էներգիայի արդյունավետ օգտագործմանը, կայուն փոխադրման մեթոդների ներդրմանը և ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանը: Բացի այդ, Ընկերությունը մշակել է Կայուն զարգացման ռազմավարություն, որն ուղղված է իր գործունեության մեջ կայուն գործելակարգի ներդրմանը: Ավելին, ԶՊՄԿ-ն պատրաստել է Կլիմայական ռիսկերի գնահատման հաշվետվությունը, որը պարունակում է առաջարկություններ կլիմային առնչվող հարցերը Ընկերության ֆինանսական և գործառնական ռազմավարություններում ներառելու համար՝ համաձայն Կլիմային առնչվող ֆինանսական հաշվետվողականության աշխատանքային խմբի (TCFD) առաջարկությունների:

Մենք լրացուցիչ քայլեր ենք ձեռնարկել ԶՊՄԿ-ի կորպորատիվ կառավարման բարելավման ուղղությամբ՝ կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության և ջերմոցային գազերի արտանետումների կրճատման մեր մոտեցումներն ամրապնդելու համար:

Այդ փոփոխությունները ներառում են՝:

- Բնապահպանական բաժնի և Կայուն զարգացման տնօրինության գործունեության շրջանակի ընդլայնում, ինչը հնարավորություն կտա միավորել կլիմայի փոփոխության դեմ պայքարի հետ կապված պարտականությունները ողջ Ընկերության շրջանակներում:
- Ներքին քաղաքականությունների վերանայում՝ ջերմոցային գազերի արտանետումների կրճատման ավելի խիստ նպատակներ սահմանելու համար, ինչպես նաև կլիմայի փոփոխության հարմարվողականության հստակ ծրագրերի ներառում:

2023 թ. հիմնական արդյունքները

Ընկերության գործունեության վրա կլիմայի փոփոխության հնարավոր հետևանքները գնահատելու և հասկանալու համար իրականացվել է կլիմայական ռիսկերի մանրակրկիտ վերլուծություն: Գնահատման արդյունքում բացահայտվել են կրիտիկական ռիսկեր, այդ թվում՝ եղանակային ծանր պայմանների ազդեցությունը աշխատանքների ընթացքի և ենթակառուցվածքների ամբողջականության վրա: 2022 թվականին իրականացված գնահատման արդյունքում, որը 2023 թվականին շարունակում է արդիական մնալ, բացահայտվել են 18 անցումային և ֆիզիկական ռիսկեր:

2023 թվականին ձեռնարկվել են ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանն ուղղված մի շարք նախաձեռնություններ, որոնք ներառում էին ավելի էներգաարդյունավետ սարքավորումների կիրառումը, էներգաարդյունավետության բարելավումը ամբողջ արտադրական գործընթացում և էներգասպառման մեր ծավալներում վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործման ավելացումը:

Բացի այդ, Բնապահպանության բաժնի կանաչապատման թիմը 2023 թվականին տնկել և խնամել է 16,279 ծառ, ծաղիկ և թուփ: 2024 թվականի սկզբին իրականացված մոնիտորինգը ցույց է տվել, որ կլանված ածխաթթու գազի ընդհանուր քանակը կազմել է 3,502.76 կգ: Վերջինիս քանակությունը ներկայացնում է արտանետված ընդհանուր CO_2-ի 0,000327059%-ի նվազեցում:

Ընկերության ներդրումը

ԶՊՄԿ-ն գիտակցաբար խուսափում է գործողություններ իրականացնել այն տարածքներում, որոնք հայտնի են կենսաբազմազանության իրենց բարձր արժեքով, հատկապես խոցելի էկոհամակարգերի կամ պահպանվող տարածքների հարակից տարածքներում: Պլանավորման մեր մեթոդաբանությունը ներառում է շրջակա միջավայրի վիճակի գնահատում՝ երաշխավորելու, որ մեր գործողությունները բացասական ազդեցություն չունենան կենսական նշանակություն ունեցող էկոհամակարգերի վրա:

Կենսաբազմազանության ոլորտում մեր նպատակներն ուղղված են տեղական էկոհամակարգերի պաշտպանությանն ու ամրապնդմանը՝ մշակելով ռազմավարություններ տեղական տեսակների պոպուլյացիաների ավելացման, ինվազիվ տեսակների դեմ պայքարի և խախտված կենսամիջավայրերի վերականգնման համար: Մենք նաև պարբերաբար կատարում ենք կենսաբազմազանության ուսումնասիրություններ և իրականացնում հատուկ միջոցառումներ՝ հնարավոր ազդեցությունները նվազեցնելու համար՝ այս կերպ ցույց տալով շրջակա միջավայրի պահպանության և կայուն զարգացման սկզբունքներին մեր նվիրվածությունը:

Մեր մոտեցումը նպատակ ունի նվազագույնի հասցնել բացասական ազդեցությունները և ակտիվորեն նպաստել մեր գործունեության տարածքում կենսաբազմազանության պահպանմանը:

Ամեն տարի, պոչամբարի պատվարի մակարդակի յուրաքանչյուր բարձրացումից հետո, մենք իրականացնում ենք վերականգնման/ռեկուլտիվացման աշխատանքներ՝ օգտագործելով Պոչամբարային տնտեսության աշխատանքների համար հանված հողի սկզբնական վերին շերտը: Այս ընթացիկ ռեկուլտիվացիան իրականացվում է Ընկերության հաշվին, նույն նպատակի համար պետբյուջե հատկացումներից բացի:

Շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցությունը վերացնելու կամ նվազեցնելու համար մենք օգտագործում ենք տարբեր ռազմավարություններ, ներառյալ ռելիեֆի փոփոխությունը, տեղական բուսականության վերականգնումը, ջրի հոսքի կարգավորումը և բնապահպանական ցուցանիշների, օրինակ՝ հողի և ջրի որակի մոնիտորինգը: Այս միջոցառումները կարևոր նշանակություն ունեն շրջակա միջավայրի վրա մեր ազդեցությունը նվազեցնելու և շահագործումից հետո հողային ռեսուրսների կառավարման կայուն գործելակարգի խթանման համար:

2023 թ. հիմնական արդյունքները

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲ ընկերությունն իրականացրել է մի նախագիծ, որի շրջանակներում պոչամբարի պատվարի վրա հորատվել է 1500մմ տրամագծով

53 հորատանցք:

Կատարվել է Արծվանիկի պոչամբարի կայունության գնահատում:

Ընկերության գործունեության տարածքներում իրականացվել է կենսաբազմազանության համապարփակ հետազոտություն՝ արձանագրելով ինչպես տեղական, այնպես էլ նոր հայտնաբերված տեսակները: Տեղական էկոհամակարգերը պաշտպանելու նպատակով ընդլայնվել են ինվազիվ բուսատեսակների, մասնավորապես՝ Երկնածառ բարձրավունու (Ailanthus altissima) վերահսկմանն ուղղված միջոցառումները: Նախաձեռնվել են աճելավայրերի վերականգնման աշխատանքներ, ներառյալ տեղական բուսականության տնկում՝ վայրի բնության կենսամիջավայրերն ավելացնելու նպատակով:

Շարունակական վերականգնման աշխատանքներ են իրականացվել Արծվանիկի պոչամբարի հարակից 5,2 հեկտար տարածքում, իսկ ավելի մեծ՝

40 հեկտար

տարածքում կազմակերպվել են կենսաբանական վերականգնման և ռեկուլտիվացման աշխատանքներ, որոնց շրջանակներում տնկվել է

10,700 ծառ

պաշտպանիչ անտառային գոտի ստեղծելու համար:

Առաջընթաց է արձանագրվել փակման և վերականգնման ռազմավարությունների իրականացման ուղղությամբ, ինչպես նաև նկատելի հաջողություններ՝ խախտված հողերի վերականգնման, բուսական ծածկույթի վերականգնման և տեղանքի ռելիեֆի կայունացման արդյունավետ միջոցառումների իրականացման գործում՝ էրոզիան կանխելու համար: Այս միջոցառումները զգալիորեն օգնել են տեղական էկոհամակարգերի վերականգնմանը և օբյեկտների անվտանգ փակմանը:

Ընկերության ներդրումը

ԶՊՄԿ-ն մեծ կարևորություն է տալիս գործարքների անաչառության ապահովմանը՝ որդեգրելով զրոյական հանդուրժողականության մոտեցում կոռուպցիայի ցանկացած դրսևորման նկատմամբ:

2023 թ. հիմնական արդյունքները

Կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝ բիզնեսի բարձր էթիկական չափանիշները խթանելու և կոռուպցիայի դեմ կոշտ դիրքորոշում ամրագրելու համար: Միջոցառումների թվում են աշխատակիցների համար ներածական դասընթացների կազմակերպումը՝ կոռուպցիայի կանխարգելման և Ընկերության քաղաքականության վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով, ինչպես նաև ենթադրյալ խախտումների մասին զեկուցման մեխանիզմների ամրապնդումը:

Կիրառվող ուժեղ ներքին հսկողության մեխանիզմների և համապատասխանության կանոնակարգերի պահպանման շնորհիվ ոչ մի միջադեպ կամ գործառնական որևէ բաղադրիչ բարձր ռիսկային չի համարվել:

Ընկերության ներդրումը

ԶՊՄԿ-ն համագործակցում է ոլորտի առաջատար խմբերի և ոլորտի շահերը պաշտպանող կազմակերպությունների հետ՝ ցույց տալով թափանցիկությանը, էթիկական վարքագծին և կայուն աճի ապահովմանն իր հանձնառությունը: Մեր նպատակն է խթանել կայուն զարգացման սկզբունքներին համապատասխանող գործելակերպ, բարձրացնել իրազեկվածությունը և անհրաժեշտության դեպքում ԲՍԿ հարցերի վերաբերյալ ուսուցում տրամադրել: Մենք ձգտում ենք նպաստել Հայաստանի հանքարդյունաբերության կայուն ապագային և դրական ազդեցություն ունենալ ոլորտի վրա ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային մակարդակով:

ԶՊՄԿ-ն մշտապես գնահատում է իր գործընկերներին և աջակցում հասարակական կազմակերպությունների ծրագրային նախաձեռնություններին: Այս փոխգործակցությունը հնարավորություն է տալիս ԶՊՄԿ-ին բարձրացնել հանքարդյունաբերական իր գործունեության վերաբերյալ իրազեկվածությունը, ծառայում է որպես համայնքի բարեկեցության և հասարակության կողմից հանքի մասին ընկալման վերաբերյալ տեղեկատվության հուսալի աղբյուր՝ ապահովելով ԶՊՄԿ-ի ներկայությունը ոլորտում ՀԿ-ների գործունեության միջոցով, և աջակցում է ՀԿ-ների զարգացմանը (այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են օրինակ՝ պլանավորումը, առաջարկների մշակումը, զեկույցների ներկայացումը և հաշվետվողականությունը):

2023 թ. հիմնական արդյունքները

ԶՊՄԿ Գլխավոր տնօրենի առաջին տեղակալը, ով միաժամանակ հանդիսանում է Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության (ՀՀՄՄ) նախագահ, կազմակերպել էր բաց համաժողով՝ ՀԿ-ների և Հայաստանի առանցքային հանքարդյունաբերական ընկերությունների մասնակցությամբ: Այս երկխոսությունը նվիրված էր կայուն զարգացման պրակտիկայի կիրառմանը, նորարարությանը, բնապահպանական խնդիրներին և արդյունավետ հաղորդակցությանը:

14 կազմակերպությունների տրամադրվել է ֆինանսական աջակցություն՝ իրենց ծրագրերը կյանքի կոչելու համար: Այս աջակցությունը պարբերաբար տրամադրվում է իրենց սեփական նախաձեռնություններն իրականացնող խմբերին, ինչպիսիք են հաշմանդամ երեխաների, տարեցների, պատերազմի վետերանների, կրթական նախագծերի, գյուղատնտեսական ծրագրերի շահառուները՝ աջակցելով վերջիններիս վարչական կամ ծրագրային ծախսերի հոգալուն: Աջակցությունն իրականացվում է առանց որևէ ֆորմալ պայմանագրի, և ներառում է ներդրումներ՝ ուղղված ՀՀՄՄ-ին և մի շարք տեղական ՀԿ-ներին:

Այս միջոցներով մոտ

$1.2 միլիոն

է հատկացվել նրանց գործունեությանն աջակցելու համար:


ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

GRI 2-29

ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ[8] ՈՒՂՂԱԿԻՈՐԵՆ ԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻՈՐԵՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ Է, ՈՐԸ ՆՊԱՍՏՈՒՄ Է ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽԹԱՆԵԼՈՒՆ ԵՎ ՊԱՀՊԱՆԵԼՈՒՆ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆԸ, ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՈՒ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ» ՊԱՀՊԱՆՄԱՆԸ:

Տարբեր ուղիներով տեղեկատվության փոխանակումը, պարբերական խորհրդակցությունների անցկացումը, հանդիպումների կազմակերպումը և գիտակցված մասնակցության խթանումը շահագրգիռ կողմերի լայն շրջանակի հետ փոխգործակցության հնարավորություն են տալիս:

Շահագրգիռ կողմերի գնահատումն իրականացվել է երկու չափանիշով, այն է՝ շահառու խմբերի ազդեցությունը ԶՊՄԿ-ի վրա և ԶՊՄԿ-ի ազդեցությունը շահառու խմբերի վրա: Արդյունքները ներկայացված են ստորև բերված շահագրգիռ կողմերի քարտեզում, որը ցույց է տալիս շահագրգիռ կողմերի վերջնական կատեգորիաները:



2023 թվականին մեր Ընկերությունն ընդլայնել է շահագրգիռ կողմերի ներգրավման գործելակարգը՝ շեշտը դնելով թափանցիկության և համագործակցության վրա: Սոցիալական կառավարման համակարգի (ՍԿՀ) շրջանակներում 2023 թվականին գործարկվել է շահագրգիռ կողմերի հետ տեղի ունեցած հանդիպումների էլեկտրոնային գրանցամատյանը, որն ամեն տարի թարմացվելու է՝ ներառելով հանդիպումները գործընկերների, հասարակական կազմակերպությունների, պետական մարմինների, դպրոցների, տեղական ձեռնարկությունների և նմանատիպ այլ կազմակերպությունների հետ: Այսպիսով, 2023 թվականին կայացել է թվով քառասուն հանդիպում, որոնք սահմանված կարգով փաստաթղթավորվել են: Արձանագրություններում հակիրճ ներկայացվում են մասնակիցները, քննարկվող թեմաները, հետագա գործողությունները և դիտարկումները:

Բացի այդ, ՍԿՀ-ն ներառում է ԶՊՄԿ-ի կողմից տեղական համայնքներից, մարզային և տեղական ինքնակառավարման մարմիններից, անհատներից, խմբերից և կազմակերպություններից ստացված բոլոր գրավոր դիմումների էլեկտրոնային գրառումները: Դրանք պարունակում են դիմումատուների, նրանց տեղադիրքի և ոլորտի, պահանջվող և տրամադրված գումարի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն և այլ համապատասխան տվյալներ:

[8] Ըստ Գլոբալ հաշվետվողականության նախաձեռնության (ԳՀՆ/GRI)՝ շահագրգիռ կողմը ֆիզիկական անձ է կամ խումբ, որի շահերն ազդեցության են ենթարկվում, կամ կարող են ենթարկվել կազմակերպության գործունեության արդյունքում:



05

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ. ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ Է ԶՊՄԿ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆԸ

04
05
06

GRI 3-3

ՄԵՆՔ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ՄԵՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄԵԾ ԱՐԺԵՔՆ ԵՆ, ԵՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻՒՆ ՄԵՐ ՆՎԻՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄ Է ԱՅԴ ՀԱՄՈԶՄՈՒՆՔԸ:

2023թ. տարեվերջի դրությամբ ԶՊՄԿ-ում աշխատում էր

4,666

մարդ

Մեր աշխատողների հոսունության գործակիցը կազմում է

5.53%

1
2
3
4
5
6
7
8
9

ԴՐԱ ՄԱՍԻՆ ԵՆ ՎԿԱՅՈՒՄ ՆԱԵ ՄԵՐ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ և ՄԱՆՐԱՄԱՍՆ ՄՏԱԾՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԽԹԱՆՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՃԸ և ԶԱՐԳԱՑՈՒՄԸ, ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ: ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ, ՍԱԿԱՅՆ, ՆՎԻՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ Է ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ և ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻՆ: ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՎԵԼ Է ՍՏԵՂԾԵԼ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐ և ԿԱՌՈՒՑԵԼ ԲԱՐԵԿԵՑԻԿ ՀԱՄԱՅՆՔ, ՈՐՏԵՂ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՆՀԱՏ, ԱՆԿԱԽ ԻՐ ԱՆՑԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԻՑ և ՓՈՐՁԻՑ, ԻՐԵՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ և ՈՐՊԵՍ ՄԵԾ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՆ ՄԱՍ ԿԶԳԱ:

ՍՏՈՐև ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՄԵՐ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ և ԱՋԱԿՑՈՒՄ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ:

ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ և ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻՆ

2023 թվականին ԶՊՄԿ-ն էական փոփոխություններ է իրականացրել մարդկային ռեսուրսների կառավարման հարցում: Անձնակազմի կառավարման մեր ստորաբաժանումը վերակազմավորվել է Մարդային ռեսուրսների կառավարման ստորաբաժանման՝ միջազգային ՄՌ չափանիշներին համապատասխանելու և մեր գործունեության արդյունավետությունն ու թափանցիկության մակարդակը բարձրացնելու համար: Այդ փոփոխությունն իրականացվել է Վարչական դեպարտամենտի ղեկավարի կողմից, ով աշխատում է Գլխավոր տնօրենի տեղակալի անմիջական ենթակայության ներքո և վերահսկում է այս կարևորագույն գործառույթը:

Աշխատողների հավաքագրման գործընթացը ԶՊՄԿ-ում ևս կատարելագործվել է: Մարդկային ռեսուրսների կառավարման մասնագիտացված ստորաբաժանումը հիմնվել է 2023 թ-ին՝ մարդկային ռեսուրսների հավաքագրման, աշխատանքի ընդունման և աշխատողների ռոտացիայի գործընթացներն իրականացնելու համար: Այս ստորաբաժանումը կարգավորում է ողջ գործընթացը՝ սկսած թափուր հաստիքի համար դիմում ստանալուց մինչև ընտրված թեկնածուների ցուցակը կազմելը՝ հիմնվելով մասնագիտական և սոցիալական հմտությունների վրա և ապահովելով թեկնածուների համապատասխան գնահատումը: Վերջնական ընտրությունն իրականացնում է Ընկերության նախաձեռնող ստորաբաժանումը, ինչն ապահովում է թեկնածուի լիարժեք համապատասխանությունը տվյալ պաշտոնին և Ընկերության կորպորատիվ մշակույթին:

Աշխատողներին ներգրավելու և աշխատուժը պահպանելու մեր հանձնառությունն անփոփոխ է: Դրա մասին են վկայում մեր կողմից կիրառվող՝ աշխատողների խրախուսման տարբեր միջոցները, ներառյալ կիսամյակային և տարեկան պարգևատրումները և Մետալուրգի օրվա կապակցությամբ տրամադրվող հատուկ դրամական պարգևները: 2023 թ-ին ԶՊՄԿ-ի 70-ամյակի կապակցությամբ նման դրամական պարգևների են արժանացել 70 աշխատակիցներ: Բացի այդ, մենք բարձրացնում ենք աշխատակազմ կառավարման թափանցիկության մակարդակը և կարևորում ենք աշխատակիցների հմտությունների զարգացումը, քանի որ հավատում ենք, որ մեր աշխատակիցները մեր հաջողության բաղկացուցիչ մասն են կազմում:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ և ԹՎԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ

GRI 402-1

Փոփոխություններն անխուսափելի են, և մենք միջոցներ ենք ձեռնարկում՝ ապահովելու փոփոխությունների սահուն կառավարումը Ընկերության կողմից: ՀՀ Աշխատանքային օրենսգրքի համաձայն՝ գործառնական փոփոխությունների մասին ծանուցումը ներկայացվում է առնվազն երեք օր առաջ: Աշխատողները ծանուցվում են էլեկտրոնային փոստի միջոցով կամ գրավոր ձևով ՝ ապահովելով տեղեկատվության ճշգրիտ և ժամանակին տրամադրումը:

2023 Թ-Ը ԶՊՄԿ-Ի ՀԱՄԱՐ ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԷԱԿԱՆ ՆՇԱՁՈՂԵՐԻ ՏԱՐԻ ԷՐ՝

Մենք մշակեցինք աշխատողների գնահատման նոր համակարգ, որը թույլ է տալիս ավելի արդյունավետ կերպով ճանաչել և խրախուսել աշխատողների ջանքերն ու ներդրումը:

Ձեռնարկության ռեսուրսների պլանավորման (ERP) համակարգի ներդնումը իրենից ներկայացնում է Ընկերության թվայնացման, գործունեության օպտիմալացման և արդյունավետության բարձրացման նախաձեռնություններից մեկը:

Ընկերությունում ստեղծվել է վերապատրաստման կենտրոն աշխատակիցների հմտությունների զարգացման և ատեստավորման համար:

Մշակվել է Վերապատրաստման և հմտությունների զարգացման ծրագիր, որը կներկայացվի Գլխավոր տնօրենի հաստատմանը 2024 թ-ին:

Այս ձեռքբերումները համահունչ են 2022 թ-ի Կայուն զարգացման վերաբերյալ հաշվետվության մեջ ներկայացված նպատակներին, այդ թվում՝ ՄՖԿ և ՀՄՄԽ ստանդարտներին համապատասխանության, աշխատուժի բազմազանության խթանման, աշխատավայրում խտրականության բացառման, հանքարդյունաբերության հետ կապված հմտությունների և գիտելիքների մասով աշխատակիցների 100%-ի վերապատրաստում իրականացնելու նպատակներին:

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱԴՈՒՑՎԱԾՔ և ՀՈՍՈՒՆՈՒԹՅՈՒՆ. ՏԵՂԱԿԱՆ, ԿԱՅՈՒՆ ԱՇԽԱՏՈՒԺԻ ՁևԱՎՈՐՈՒՄ

GRI 2-7

2023 թ-ի տարեվերջի դրությամբ ԶՊՄԿ-ում աշխատում էր 4,666 մարդ, որոնց 78%-ը (3,640) տղամարդիկ էին: Աշխատողների զգալի մեծամասնությունը (88.6% կամ 4,134 աշխատող) Քաջարան և Կապան համայնքներից է, ինչն արտացոլում է տեղական զբաղվածության ապահովման մեր հանձնառությունը: Աշխատակազմը հիմնականում մշտական է և զարմանալիորեն կայուն. Ընկերությունում ոչ լրիվ աշխատաժամանակով են աշխատում ընդամենը չորս հոգի, ինչն ընդգծում է աշխատանքի ապահովման մեր գործելակերպի հուսալիությունը:

Մեր աշխատողների հոսունության գործակիցը շարունակում է մնալ տպավորիչ ցածր՝ 5.53%, ինչը վկայում է վերջիններիս բավարարվածության և Ընկերության կայունության մասին: Անցյալ տարվա ընթացքում յուրաքանչյուր աշխատող միջին հաշվով 2.5 ժամ վերապատրաստում է անցել: Մեր աշխատուժի շուրջ 22%-ը կանայք են: Արդար վարձատրություն ապահովելու մեր հանձնառությունը նույնպես ակնհայտ է. աշխատակիցների նվազագույն աշխատավարձն Ընկերությունում ավելի բարձր է, քան այն սահմանված է ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ:

Աշխատողների զգալի մեծամասնությունը Քաջարան և Կապան համայնքներից է

88.6%

Կանայք կազմում են աշխատուժի

22%



ԱՐՏԱՔԻՆ ՓՈՐՁԻ ԿԻՐԱՌՈՒՄ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

GRI 2-8, SASB EM-MM-000.B

2023 թվականին ԶՊՄԿ-ն կնքել է ծառայությունների մատուցման պայմանագրեր Ընկերության աշխատող չհանդիսացող անձանց հետ, ովքեր հիմնականում թարգմանչական ծառայություններ մատուցող, ինչպես նաև վարչական, իրավական և բիզնես ոլորտների խորհրդատուներ են: Համապատասխան բաժինները այս անձանց ներառում են Ընկերության աշխատանքներում, ինչն ընդգծում է մեր ներքին կարողությունները լրացնելու համար արտաքին մասնագետների հմտությունների ներգրավման մեր պատրաստակամությունը:

Հաշվետու ժամանակահատվածում ԶՊՄԿ-ի աշխատակից չհանդիսացող անձանց թվաքանակի էական փոփոխություններ Ընկերությունում չեն եղել, ինչը վկայում է աշխատանքում վերջիններիս հետևողական ներգրավման մասին և արտացոլում է կայուն գործառնական կարիքներն ու պայմանագրային հարաբերությունները:

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ և ԿԱՊԱԼԱՌՈՒՆԵՐ

Ցուցանիշ	Չափման միավոր	2022 թ.	2023 թ.
Ընդհանուր զբաղվածություն[9]	**մարդ**	**5,087**	**5,268**
Կապալառուների թիվը[10]	մարդ	500	602
Կապալառուների տոկոսային մասնաբաժինը	%	9.83	11.43

[9] Այս ցուցանիշը ներառում է ԶՊՄԿ-ի աշխատողներին և կապալառուներին:

[10] Ընկերության աշխատող չհանդիսացող անձանց թիվը հաշվարկվում է աշխատողների փաստացի թվի հիման վրա, որն ապահովում է ճշգրիտ և ստուգելի տվյալներ: Տվյալները ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանի տարեվերջի դրությամբ ստացված տվյալների հիման վրա, ինչը հստակ պատկերացում է տալիս կոնկրետ ժամանակահատվածում Ընկերության աշխատող չհանդիսացող անձանց ներգրավվածության մասին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ. ՏԵՂԱԿԱՆ ՋԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ

ԶՊՄԿ-ի ղեկավար կազմում ընդգրկված են բարձր ղեկավար պաշտոններ զբաղեցնող 27 անձինք, ովքեր ղեկավարում են Ընկերության ամենօրյա գործունեության համար ռազմավարական նշանակություն ունեցող ստորաբաժանումները: Ղեկավար պաշտոնների համար թեկնածուներ ընտրելիս մենք հաշվի ենք առնում տեղական տնտեսական, սոցիալական և մշակութային պայմանները, որպեսզի մեր ղեկավարները լինեն հմուտ և լավ ինտեգրվեն տեղական միջավայրում: Այս առումով կարևոր է տեղական բուհերում՝ հատկապես Սյունիքի մարզում գտնվող բարձրագույն ուսումնական հաստատություններում, մեր նշանակալի ներդրումը՝ ապագա ղեկավարներ և մասնագետներ պատրաստելու նպատակով: Նախնական ատեստավորման մեր ծրագիրն աջակցում է տեղական համայնքից աշխատակիցների մասնագիտական զարգացմանը՝ օգնելով նրանց անցնել ղեկավար պաշտոնների:

GRI 401-1

2023 թվականին ԶՊՄԿ-ն ընդունել է 335 նոր աշխատակից, ինչը կազմում է աշխատուժի 7.24%-ը: Նոր ընդունված անձանց մեծ մասը տղամարդիկ են (259 հոգի), և զգալի թիվ են կազմում 30 տարեկանից ցածր տարիքի անձինք (105 հոգի), ինչն արտացոլում է թարմ, երիտասարդ կադրեր ներգրավելու մեր նպատակաուղղվածությունը: Նոր ընդունված աշխատողներից 256-ը ներկայացնում են Քաջարան և Կապան համայնքները, իսկ մնացածն՝ այլ մարզերը և արտերկիրը:

Այդուհանդերձ, 2023 թվականին հոսունության գործակիցը կազմել է 5.5%. 256 աշխատող հեռացել է Ընկերությունից: Հոսունության ամենաբարձր ցուցանիշները նկատվել են կանանց (6.1%), 50 տարեկանից բարձր աշխատողների (15.9%) և Հայաստանի այլ մարզերից ու արտերկրից եկածների (12%) շրջանում: Հոսունության հիմնական պատճառ է հանդիսացել կենսաթոշակի անցնելը: ԶՊՄԿ-ն ակտիվ կերպով վերլուծում է նշված միտումները՝ աշխատուժի պահպանման իր ռազմավարությունը բարելավելու նպատակով:





ՆՈՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ (ԸՍՏ ՍԵՌԻ, ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԻ և ՄԱՐԶԻ)

Ցուցանիշ	2022 թ.	2023 թ.
ըստ սեռի		
Տղամարդ	402	259
Կին	84	76
ըստ տարիքային խմբի		
30 տարեկանից ցածր	180	105
30-50 տարեկան	252	181
50 տարեկանից բարձր	54	49
ըստ մարզի		
Տեղական (Քաջարան և Կապան համայնքներ)	397	256
ՀՀ այլ մարզերից և արտերկրից	89	79
Ընդամենը նոր ընդունված	**486**	**335**

ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ և ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՈՉ ԽՏՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

GRI 3-3, GRI 406-1

Մենք հանձնառու ենք ԶՊՄԿ-ում բազմազան և ներառական աշխատանքային միջավայրի խթանմանը: Մեր Ընկերության Վարքագծի կանոնագրքով ներկայումս կարգավորվում են բազմազանության և ներառականության քաղաքականությունները, և մենք աշխատում ենք թարմացնել այս փաստաթղթերը՝ արտացոլելով հստակ ոչ խտրական մոտեցումը: Թարմացման արդյունքում կստեղծվի հատուկ համակարգ կամ կնշանակվի պատասխանատու անձ՝ այդ աշխատանքները կազմակերպելու համար: Մենք ոչ խտրական մոտեցումը ներառում ենք մեր բոլոր աշխատանքներում՝ ապահովելով աշխատողների նկատմամբ արդար և հավասար վերաբերմունք:

Վերջին երեք տարիների ընթացքում սեռով, տարիքով, էթնիկ պատկանելությամբ, քաղաքական հայացքներով կամ սոցիալական ծագմամբ պայմանավորված խտրականության դեպքեր ԶՊՄԿ-ում չեն հայտնաբերվել կամ արձանագրվել: Մենք նախաձեռնել ենք Բողոքների դիտարկման նոր մշակված քաղաքականության և համապատասխան Ընթացակարգի միջոցով խտրականության դեպքերի արձանագրման, հետաքննման և լուծման ընթացակարգ: Այս քաղաքականությունն ընդգրկում է շահագրգիռ կողմերի ներգրավման, հողային իրավունքների վրա ազդեցության, չկատարված խոստումների, աշխատանքի ընդունման և վերապատրաստման սահմանափակ հնարավորությունների, բնապահպանական խնդիրների հետ կապված և այլ հարցեր: Ոչ խտրական աշխատանքային միջավայր ստեղծելու մեր հանձնառությունն անսասան է, և մենք շարունակելու ենք հավատարիմ մնալ այդ չափանիշին:

GRI 405-1

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ և ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՄԱՐԴ

	2022 թ.						2023 թ.					
Ցուցանիշ	Տղամարդ	Կին	30 տարեկանից ցածր	30-50 տարեկան	50 տարեկանից բարձր	Ընդամենը	Տղամարդ	Կին	30 տարեկանից ցածր	30-50 տարեկան	50 տարեկանից բարձր	Ընդամենը
Տնօրենների խորհուրդ	7	1	-	4	4	8	6	1	-	3	4	7
Ղեկավար պաշտոններ	17	3	1	16	3	20	24	3	1	21	5	27
Այլ աշխատողներ	3,557	1,010	541	2,659	1,367	4,567	3,616	1,023	603	2,875	1,161	4,639
Ընդամենը աշխատող	**3,574**	**1,013**	**542**	**2,675**	**1,370**	**4,587**	**3,640**	**1,026**	**603**	**2,897**	**1,166**	**4,666**

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ և ՋԱՐԳԱՑՈՒՄ. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ՄԵՐ ԱՇԽԱՏՈՒԺՈՒՄ

GRI 404-1

ԶՊՄԿ-ն հանձն է առել ապահովել Ընկերության աշխատակիցների շարունակական մասնագիտական զարգացումը: 2023 թվականին ստեղծվել է հատուկ ուսումնական կենտրոն՝ Վարչական դեպարտամենտի վերահսկողության ներքո, որը կազմակերպում է վերապատրաստման տարբեր դասընթացներին առանձին անձանց մասնակցությունը: Հաշվետու ժամանակահատվածում տարբեր դասընթացներին մասնակցել է 13,927 մարդ, ինչը վկայում է անձնական և մասնագիտական աճի միջոցառումներում աշխատողների ակտիվ ներգրավվածության մասին: Անցկացվել են վերապատրաստման մի շարք հետաքրքիր և բազմազան դասընթացներ, այդ թվում՝ Առաջին օգնության դասընթացը (մասնակցել է 4,409 աշխատող) և ներածական դասընթացը 4,225 աշխատողի համար՝ ընդհանուր առմամբ մոտ 39,500 ժամ տևողությամբ: Բացի այդ, 223 աշխատող մասնակցել է նախնական ատեստավորման դասընթացի՝ ընդհանուր 335 ժամ տևողությամբ:

Վերապատրաստման դասընթացների միջին տևողությունը կազմում է

2.5 ժամ յուրաքանչյուր աշխատողի համար

(բացառությամբ Առողջության և աշխատանքի անվտանգության վերաբերյալ դասընթացի):

Արական և իգական սեռի աշխատողների վերապատրաստման միջին ժամաքանակի հավասարությունը արտացոլում է վերջիններիս զարգացման հավասար հնարավորություններ ընձեռելու Ընկերության հանձնառությունը: Վերապատրաստման դասընթացներում ընդգրկվել են բոլոր ստորաբաժանումների անխտիր բոլոր կատեգորիաների աշխատողները՝ ամրապնդելով ամբողջ Ընկերությունում հմտությունների զարգացման միասնական մոտեցումը:

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ (ԸՍՏ ՍԵՌԻ և ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ)

Ցուցանիշ	Մարդ	Ընդհանուր տևողություն, ժամ	Միջին տևողություն, ժամ
ըստ սեռի			
Արական սեռի աշխատողներ	3,640	9,100	2.5
Իգական սեռի աշխատողներ	1,026	2,565	2.5
Ընդամենը աշխատող	**4,666**	**11,665**	**2.5**

GRI 404-2

ԶՊՄԿ-ն իրականացնում է տարբեր ծրագրեր և օգնում է զարգացնել իր աշխատուժի հմտությունները՝ դրանցում հիմնականում ընդգրկելով բանվորներին, տեխնիկական անձնակազմին և միջին օղակի ղեկավարներին: Առաջարկվող ծրագրերը ներառում են պարտադիր վերապատրաստում, որն ապահովում է ողջ անձնակազմի տեղեկացվածությունը ոլորտի վերջին չափանիշների և անվտանգության կանոնակարգերի վերաբերյալ: Բացի այդ, ԶՊՄԿ-ն կազմակերպում է տեղեկատվական հանդիպումներ՝ աշխատողներին տեղեկացնելու ոլորտում տեխնոլոգիական և ընթացակարգային նորությունների մասին:

Աշխատողների որակավորման բարձրացման և նրանց կարիերայի աճն ապահովելու նպատակով Ընկերությունում պարբերաբար անցկացվում են մասնագիտական զարգացման դասընթացներ: Աշխատողների պատրաստվածությունն ու կոմպետենտությունն իրենց համապատասխան պաշտոններում գնահատելու նպատակով իրականացվում է նախնական ատեստավորում: Բացի այդ, ԶՊՄԿ-ն կազմակերպում է մասնագիտացված դասընթացներ ծանր բեռնատարների վարորդների համար, ներառյալ տեսական և գործնական պարապմունքները: Այս դասընթացները նախատեսված են վարորդների համար ապահովելու անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ բարդ տեխնիկայի անվտանգ և արդյունավետ շահագործման համար, ինչը կարևոր է աշխատողների անվտանգության և աշխատանքի հաջողության համար:

Անմիջական ղեկավարությունը գնահատում է վերապատրաստման և ատեստավորման ծրագրերի արդյունավետությունը՝ օգտագործելով հատուկ գնահատման ձևեր: Ուսումնական կենտրոնը/Վարչական դեպարտամենտը հավաքագրում և վերլուծում է այս տեղեկատվությունը՝ որակավորման բարձրացման/ատեստավորման ծրագրերի որակը բարելավելու նպատակով:

GRI 404-3

ԶՊՄԿ-ն ներդնում է ստանդարտացված համակարգ՝ Ընկերության աշխատողների կատարողականի և կարիերայի աճի հնարավորությունների կանոնավոր ստուգումներ իրականացնելու համար: Ուսումնական կենտրոնի կողմից իրականացվող այս նախաձեռնությունը բարելավում է աշխատողների կատարողականի գնահատումը և նպաստում նրանց կարիերայի աճին:

Կառուցվածքային մոտեցման սահմանելու շնորհիվ այս նախաձեռնությունը կնպաստի աշխատողների աշխատանքի արդյունավետության կանոնավոր գնահատմանը և հնարավորություն կտա զարգացման հնարավորությունները համապատասխանեցնել անհատական կարիերայի ձգտումներին, ինչը կհանգեցնի ընդհանուր արտադրողականության բարձրացմանը: Գնահատման նախատեսվող համակարգը կներառի աշխատողների տարբեր կատեգորիաներ և կապահովի, որ բոլոր աշխատողները, անկախ սեռից կամ պաշտոնից, արժանանան հավասար ուշադրության և ստանան հավասար ռեսուրսներ՝ իրենց մասնագիտական աճը խթանելու համար:

Ներդրվելուց հետո այս համակարգը կնպաստի ԶՊՄԿ-ի ռազմավարական նպատակների իրականացմանը՝ անհատական աշխատանքի արդյունքները համապատասխանեցնելով Ընկերության երկարաժամկետ նպատակներին: Այն կապահովի, որ յուրաքանչյուր աշխատող դառնա Ընկերության առաքելության անբաժանելի մասը և կնպաստի ԶՊՄԿ-ում նրանց ներուժի բացահայտմանը և զարգացմանը:



ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆԸ

GRI 401-2

ԶՊՄԿ-Ն ՀԱՆՁՆԱՌՈՒ Է ԱՊԱՀՈՎԵԼ ԻՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳԻՏԱԿՑԵԼՈՎ, ՈՐ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԵՎՈՐ ԴԵՐ ԵՆ ԽԱՂՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ: ՄԵՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹԸ ԱՅՍ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ԴՐՍԱՎՈՐՈՒՄՆ Է, ՈՐԸ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ԱՊԱՀՈՎԵԼՈՒ, ՈՐ ԼՐԻՎ ԴՐՈՒՅՔՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԱՆՁԻՆՔ, ՀԱՏԿԱՊԵՍ ՆՐԱՆՔ, ՈՎՔԵՐ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ՝ ՔԱՋԱՐԱՆՈՒՄ և ԿԱՊԱՆՈՒՄ, ՍՏԱՆԱԼ ՊԱՏՇԱՃ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԻՐԵՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ և ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ:

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ընկերությունը տրամադրում է արտոնությունների լայն շրջանակ, որոնք համընդհանուր են մեր աշխատողների համար՝ ապահովելով նրանց բարգավաճման համար անհրաժեշտ աջակցություն՝

- **Առողջության ապահովագրություն.** Ընկերության աշխատակիցներն ու նրանց ընտանիքներն օգտվում են առողջության ապահովագրության ընդլայնված ծածկույթից, որը հնարավորություն է տալիս հոգալ իրենց առողջապահական կարիքները:
- **Առողջապահական ծառայություններ.** առողջության ապահովագրությունից բացի «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամը ֆինանսավորում է այն առողջապահական ծառայությունները, որոնք նախատեսված չեն աշխատողների ապահովագրական փաթեթով՝ ապահովելով, որ Ընկերության աշխատողները և նրանց ընտանիքները կարողանան օգտվել անհրաժեշտ բժշկական օգնությունից:
- **Հաշմանդամության և անաշխատունակության ապահովագրում.** աշխատավայրում տեղի ունեցած դժբախտ պատահարի դեպքում պետության կողմից սահմանված հաշմանդամության և անաշխատունակության նպաստից բացի ԶՊՄԿ-ն տրամադրում է լրացուցիչ աջակցություն՝ էլ ավելի ուժեղացնելով մեր աշխատողների պաշտպանվածությունը:
- **Երեխայի խնամքի արձակուրդ և կենսաթոշակի անցնելու արտոնություններ.** երեխայի խնամքի արձակուրդը և կենսաթոշակային արտոնությունները համապատասխանեցվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջներին՝ մեր աշխատողներին տրամադրելով անհրաժեշտ ժամանակ և ֆինանսական աջակցություն կյանքի կարևոր իրադարձությունների ընթացքում:
- **Անվճար սնունդ.** աշխատանքային ժամերին մեր աշխատողներին աջակցելու նպատակով մենք տրամադրում ենք անվճար սնունդ ԶՊՄԿ-ի ճաշարանում: Բացի այդ, հատուկ տարածքներում և տարբեր հերթափոխերում աշխատողները ստանում են անվճար սնունդ իրենց աշխատավայրում աշխատանքային օրվա ընթացքում լիարժեք սնունդ ապահովելու նպատակով:
- **Սպորտային հաստատություններ և մանկապարտեզներ.** Մենք ընձեռում ենք մեր կազմակերպական կառուցվածքի շրջանակներում գործող սպորտային հաստատություններից և երեխաների խնամքի ծառայություններից, այդ թվում՝ մարզական համալիրից և երկու մանկապարտեզից օգտվելու հնարավորություն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ նշված հուսալի և համապարփակ արտոնությունները հասանելի են բոլոր տեսակի աշխատողներին, բացառությամբ ծառայությունների մատուցման պայմանագրով ներգրավված՝ Ընկերության աշխատող չհանդիսացող աշխատակիցներին: Հարկ է նաև նշել, որ կյանքի ապահովագրություն և բաժնետոմսերի սեփականության իրավունք որևէ աշխատողի Ընկերությունում չի տրամադրվում:

GRI 401-3

ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ ԱՐՁԱԿՈՒՐԴ

	2022 թ.			2023 թ.		
Երեխայի խնամքի արձակուրդ	Տղամարդ	Կին	Ընդամենը	Տղամարդ	Կին	Ընդամենը
ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն հղիության և ծննդաբերության կամ երեխայի խնամքի արձակուրդի իրավունք ունեցող աշխատողների թիվը	1,013	3,574	4,587	3,640	1,026	4,666
Հղիության և ծննդաբերության և երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատողների թիվը	1	30	31	1	53	54
Արձակուրդից հետո աշխատանքի վերադարձած աշխատողների թիվը	-	20	20	-	8	8
Նախորդ տարվա ընթացքում հղիության և ծննդաբերության / երեխայի խնամքի արձակուրդից հետո աշխատանքի վերադարձած և 12 ամիս անց աշխատանքը շարունակող աշխատողների թիվը	-	25	25	-	8	8
Աշխատանքի վերադարձածների տոկոսային ցուցանիշը	-	66.67	64.52	-	15.09	14.81
Աշխատուժի պահպանման տոկոսային ցուցանիշը	-	125	125	-	100	100

ԱՐԴԱՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

GRI 202-1, GRI 405-2

Այս արտոնություններից բացի, ԶՊՄԿ-ն ապահովում է, որ աշխատողներն ստանան օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձից բարձր ամսական աշխատավարձ՝ առանց սեռով պայմանավորված աշխատավարձի տարբերակման: Արդար վարձատրության մոտեցման կիրառման այս հանձնառությունը այն քաղաքականությունն ու սկզբունքն է, որը մենք հավասարաչափ պահպանում ենք Քաջարանում և Կապանում՝ Ընկերության գործունեության ամբողջ մակարդակով: 2023 թվականին աշխատողների միջին աշխատավարձը ԶՊՄԿ-ում 11 անգամ գերազանցել է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձը:

Ընկերության կողմից հպարտությամբ պահպանվում է կանանց և տղամարդկանց բազային աշխատավարձի և վարձատրության 1:1 հարաբերակցությունը՝ ցուցադրելով բոլոր կատեգորիաների աշխատողների համար սեռային հավասարության ապահովման մեր հանձնառությունը: Մենք պարբերաբար վերանայում և ստուգում ենք աշխատանքային պայմանագրերը՝ այս չափանիշների պահպանումը վերահսկելու նպատակով, ինչը հաստատում է արդարության և հավասարության սկզբունքներին մեր հավատարմությունը:

Համապարփակ այս արտոնությունները տրամադրելով՝ ԶՊՄԿ-ն նպաստում է մեր աշխատողների բարեկեցության ու անվտանգության ապահովմանը և խթանում մոտիվացված և հավատարիմ աշխատուժի ձևավորումը, որը կարևոր նշանակություն ունի Ընկերության երկարաժամկետ հաջողության և կայունության համար:



1:1 ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Կանանց և տղամարդկանց բազային աշխատավարձի և վարձատրության հարաբերակցությունը 1:1 է

ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՁԱՅՆԸ. ԱՇԽԱՏՈՒԺԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ և ՎԵՐՋԻՆԻՍ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

GRI 3-3, GRI 2-30, SASB EM-MM-310A.1

ԶՊՄԿ-ՈՒՄ ՄԵՆՔ ՊԱՐՏԱՎՈՐՎԵԼ ԵՆՔ ԱՊԱՀՈՎԵԼ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ, ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՆՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ: 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԵՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ 99%-Ը (4,619 ՀՈԳԻ) ՀԱՆԴԻՍԱՑԵԼ Է ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ, ԻՍԿ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԵԼ ԵՆ ԿՈԼԵԿՏԻՎ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ: ԱՅՍ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՎՈՐ ԴԵՐ Է ԽԱՂԱՑԵԼ ՄԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁևԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ՝ ԱՊԱՀՈՎԵԼՈՎ, ՈՐ ԱՅՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԻ ՄԵՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ և ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԻՆ, և ՄԵՆՔ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆՔ ՀԱՎԱՏԱՐԻՄ ՄՆԱԼ ԴՐԱՆ:

ԶԿՄԿ-ում մշակվում է Վարքագծի կանոնագիրք և Մարդու իրավունքների պաշտպանության քաղաքականություն: Այս փաստաթղթերը կոչված են աջակցելու և պաշտպանելու մեր աշխատողների՝ արհմիություններ ստեղծելու և դրանց միանալու, կոլեկտիվ բանակցություններ վարելու և որոշումների կայացման գործընթացներին մասնակցելու իրավունքները: Շարունակական այս զարգացումն ընդգծում է աշխատողների իրավունքներն ու ներգրավվածությունն ապահովելու մեր հանձնառությունը:

Դրական աշխատանքային հարաբերություններ պահպանելու մեր հանձնառությունը արտացոլվում է 2023 թվականի Ընկերության նոր կոլեկտիվ պայմանագրի հաջող բանակցություններում, որը նախատեսում էր աշխատողներին տրամադրվող առավելությունների և աշխատանքային պայմանների բարելավում: Մեր կոլեկտիվ բանակցությունների գործընթացների արդյունավետությունը գնահատվում է աշխատողների կարծիքների, բողոքների ներկայացման ընթացակարգերի և համապատասխանության ստուգումների պարբերական վերանայման միջոցով:

Հետագայում ևս ԶՊՄԿ-ն նպատակ ունի ընդլայնել փոխգործակցությունը արհմիությունների ներկայացուցիչների հետ և ապահովել բոլոր կոլեկտիվ բանակցային գործընթացների թափանցիկությունն ու ներառականությունը: Մենք հանձնառու ենք բարելավել բանակցային համակարգը, բարձրացնել աշխատողների իրազեկվածությունը և խթանել համագործակցային և բարենպաստ աշխատանքային միջավայր:



06

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ԶՊՄԿ-Ն ՀԱՆՁՆԱՌՈՒ Է ՍՏԵՂԾԵԼՈՒ ԱՆՎՏԱՆԳ և ՀԱՍԱՆԵԼԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ ԻՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ, ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ և ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ԲՈԼՈՐ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ: ԱՅՍ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԶՐՈՅԱԿԱՆ ՎՆԱՍ» ՍԿԶԲՈՒՆՔՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ և ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԸ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼՈՒ ՆՊԱՏԱԿԻՆ:

05
06
07

2023թ-ին աշխատանքի անվտանգության և առողջության թեմայով դասընթացներին մասնակցել է

4,409

աշխատող

2023թ-ին աշխատանքի անվտանգության և առողջության թեմայով դասընթացների միջին տևողությունը կազմել է

23

ժամ մեկ աշխատողի համար

1 2 3 4 5 6 7 8 9

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ և ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆ

GRI 3-3, GRI 403-1, GRI 403-7, GRI 403-8

Կայուն զարգացման գծով տնօրենը վերահսկում է Առողջության և աշխատանքի անվտանգության բաժնի աշխատանքները, որը պատասխանատու է Ընկերության առողջության և աշխատանքի անվտանգության նախաձեռնությունների համար: Հաշվի առնելով շահագրգիռ կողմերի ավելացող սպասումներն ու պահանջները՝ հաշվետու տարվա ընթացքում բաժնում ձևավորվել է Առողջության և աշխատանքի անվտանգության չափորոշիչների վերահսկման մասնագետների լրացուցիչ խումբ: Նշված անձնակազմը կոչված է աջակցելու Առողջության և աշխատանքի անվտանգության բաժնի նախաձեռնություններին՝ վերահսկելու աշխատողների և կապալառուների կողմից ներքին կանոնակարգերի, առողջության և անվտանգության պահանջների և այլ համապատասխան ուղեցույցների կատարումը:

ԶՊՄԿ-ի առողջության և աշխատանքի անվտանգության ապահովման հանձնառության կարևորագույնը հիմքը Առողջության և աշխատանքի անվտանգության (ԱԱԱ) կառավարման պլանն է, որը ծառայում է որպես Ընկերության առողջության և աշխատանքի անվտանգության բոլոր միջոցառումների հիմնական ուղեցույց փաստաթուղթ: ԶՊՄԿ-ն հետևում է տեղական օրենսդրական պահանջներին, այդ թվում՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքին, և կիրառում է միջազգային առաջատար մեթոդներն ու չափորոշիչները, այդ թվում՝ ISO 45001, ԱԱԱՎ, ՀՄՍ (IFS) և ԱՄԿ ստանդարտները: Ներքին իրավական ակտերը ներառում են ինչպես տեղական, այնպես էլ միջազգային ստանդարտները՝ էլ ավելի ամրապնդելով առողջության և աշխատանքի անվտանգության ապահովման՝ ԶՊՄԿ-ի հանձնառությունը: Այս ներքին փաստաթղթերը պարբերաբար թարմացվում են՝ կանոնակարգերի փոփոխությունները հաշվի առնելու և վերջին առաջատար մեթոդները ներառելու համար:

2023 թվականի հիմնական նոր նախաձեռնություններից մեկը ալկոհոլի ներքին զանգվածային թեստավորման իրականացումն էր և ալկոհոլի օգտագործման հետ կապված կարգապահական ընթացակարգերի վերանայումը: Այս փոփոխություններն արտացոլում են Ընկերության շարունակական ջանքերը՝ բարելավելու առողջության և աշխատանքի անվտանգության ապահովման իր մեթոդները:

ԶՊՄԿ-ի առողջության և աշխատանքի անվտանգության ապահովման գործողությունները կարգավորվում են հետևյալ օրենսդրական պահանջներով՝

- ՀՀ առողջապահության նախարարի հրամանը «Աշխատանքի հիգիենիկ դասակարգումը, ըստ արտադրական միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների, աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության ցուցանիշների» թիվ 2.2-002-05 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին (մաս 8, 10, 11, 13, 15 և 17),
- ՀՀ աշխատանքային օրենսգիրքը (հոդվածներ 2, 156, 168, 178),
- «Տեխնիկական անվտանգության պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքը,
- ՀՀ կառավարության որոշումը պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության կարգը հաստատելու մասին,
- ՀՀ կառավարության որոշումը անհատական պաշտպանության միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին:

Մեր Ընկերությունը գիտակցում է, որ Առողջության և աշխատանքի անվտանգության կառավարման

81%

ԱԱԱԿՀ-ի շրջանակներում Ընկերության աշխատողների 81%-ը հաջողությամբ անցել է ներքին ստուգման ընթացակարգերը:

իր համակարգը (ԱԱԱԿՀ) տարածվում է ոչ միայն իր աշխատողների, այլև իր տարածքում գտնվող բոլոր անձանց, այդ թվում՝ աշխատակիցների, կապալառուների, այցելուների և ուսանողների բարեկեցության վրա: ԶՊՄԿ-ի ԱԱԱԿՀ-ն ընդգրկում է գրեթե բոլոր աշխատողների (96.9%) և կապալառուների (Ընկերության աշխատող չհանդիսացող[11]) զգալի մասը (գրեթե 100%): Հատկանշական է, որ ԱԱԱԿՀ-ի շրջանակներում Ընկերության աշխատողների 81%-ը և կապալառուների 100%-ը հաջողությամբ անցել են ներքին ստուգման ընթացակարգերը: Ընդգրկման այս բարձր ցուցանիշը և աուդիտի հաջողության մակարդակն արտացոլում են ԶՊՄԿ-ի հանձնառությունը՝ ապահովել անվտանգ և առողջ աշխատանքային միջավայր իր տարածքում գտնվող բոլոր անձանց համար:

17.3%

ԶՊՄԿ-ի աշխատողների 17.3% կատարում է բարձր ռիսկային առաջադրանքներ և ստացել է ICAM հավաստագրեր առողջության և աշխատանքի անվտանգության ոլորտում:

ԱԱԱԿՀ-ն հատկապես կարևոր է վտանգավոր կամ վնասակար պայմաններում աշխատող անձանց համար, որոնք ենթարկվում են ավելի բարձր ռիսկերի: Ընկերությունն առաջնահերթություն է համարում այս անձանց անվտանգությունը և միջոցներ է ձեռնարկում հնարավոր վտանգները մեղմելու համար: ԶՊՄԿ-ի աշխատողների գրեթե մեկ հինգերորդը (17.3%) կատարում է բարձր ռիսկային առաջադրանքներ և ստացել է ICAM հավաստագրեր առողջության և աշխատանքի անվտանգության ոլորտում՝ ապահովելով վերջիններիս իրազեկվածությունն ու անվտանգությունը:

ԱԱԱ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹԻՎԸ

	2022 թ.		2023 թ.	
Ցուցանիշ	մարդ	Աշխատողների ընդհանուր թվի %-ը	մարդ	Աշխատողների ընդհանուր թվի %-ը
Կառավարման համակարգում ընդգրկված՝ ԶՊՄԿ-ի աշխատակիցների թիվը	4,367	95.2	4,487	96.2
Աշխատանքի անվտանգության և առողջության կառավարման համակարգում ընդգրկված՝ ԶՊՄԿ-ի աշխատակիցների թիվը, ովքեր անցել են ներքին ստուգումներ	≈3,500	≈76	≈3,634	≈78

ԱԱԱ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳԿՐԿՎԱԾ՝ ԶՊՄԿ-Ի ԱՇԽԱՏՈՂ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ (ԿԱՊԱԼԱՌՈՒՆԵՐԻ) ԹԻՎԸ

	2022 թ.		2023 թ.	
Ցուցանիշ	մարդ	Աշխատողների ընդհանուր թվի %-ը	մարդ	Աշխատողների ընդհանուր թվի %-ը
Աշխատանքի անվտանգության և առողջության կառավարման համակարգում ընդգրկված՝ ԶՊՄԿ-ի աշխատող չհանդիսացող անձանց (կապալառուների) թիվը,	≈500	≈100	≈602	≈100
Աշխատանքի անվտանգության և առողջության կառավարման համակարգում ընդգրկված՝ ԶՊՄԿ-ի աշխատող չհանդիսացող անձանց (կապալառուների) թիվը, ովքեր անցել են ներքին ստուգումներ	≈500	≈100	≈602	≈100

[11] Ծառայությունների մատուցման պայմանագրերով աշխատողներ, ովքեր չեն համարվում Ընկերության աշխատակից, սակայն նրանց աշխատանքը վերահսկվում է ԶՊՄԿ-ի կողմից

Մենք աշխատանքի անվտանգության և առողջության կառավարման մեր համակարգի (ԱԱԱԱԿ) արդյունավետությունը գնահատում ենք՝ կիրառելով այնպիսի մոտեցում, որը ներառում է աուդիտ, ռիսկերի գնահատում և կատարողականի մոնիտորինգ:

Աուդիտը կարևոր դեր է խաղում անվտանգության կանոնակարգերի պահանջների կատարումը վերահսկելու և բարելավման ենթակա ոլորտները բացահայտելու գործում: Այն ներառում է ԶՊՄԿ-ի աշխատանքի անվտանգության և առողջության բաժնի, անկախ երրորդ կողմ հանդիսացող աուդիտորների և պետական տեսչական մարմինների կողմից իրականացվող գնահատումները: Աուդիտների միջոցով գնահատվում են աշխատավայրի քաղաքականությունը, գործընթացները, ընթացակարգերը և համակարգերը՝ հնարավոր ռիսկերը բացահայտելու և անվտանգության չափանիշներին համապատասխանությունն ապահովելու համար:

Ընկերությունն իր աուդիտի ծրագիրը համալրում է ռիսկերի գնահատմամբ և կատարողականի մոնիտորինգով, որը ներառում է հնարավոր վտանգների բացահայտում և մեղմացում, ինչպես նաև պոտենցիալ վտանգավոր դրությունների, դժբախտ պատահարների, վնասվածքների և արտադրական միջադեպերի վերլուծություն: Այս ցուցանիշները արժեքավոր պատկերացում են տալիս ԱԱԱԱ համակարգի արդյունավետության մասին և ընդգծում են այն ոլորտները, որտեղ անհրաժեշտ են բարելավումներ:

Աշխատանքի անվտանգության բարձրացման նպատակով մենք մշակել ենք գործողությունների ծրագիր՝ բացահայտում և պոչամբարում հնարավոր արտակարգ իրավիճակներին արձագանքելու համար: Ծրագիրը համապատասխանում է տեղական չափանիշներին և ապահովում է համակարգված և արդյունավետ արձագանք հնարավոր միջադեպի դեպքում: Փաստաթուղթը սահմանում է Ընկերության ստորաբաժանումների ղեկավարների հատուկ պարտականությունները արտակարգ իրավիճակներում: Փաստաթուղթը պարունակում է նաև կոնտակտային անձանց ցուցակը՝ արտակարգ իրավիճակների ծանուցման համար: Ցուցակում ընդգրկված են Ընկերության ղեկավարությունը և հիմնական շահագրգիռ կողմերը շրջակա համայնքից, պետական հաստատություններից և արտակարգ իրավիճակների ծառայություններից (ՀՀ տեսչական մարմիններ, Արտակարգ իրավիճակների նախարարություն և Լեռնափրկարարական ծառայություն): Մեր նպատակն է ապահովել բոլոր կողմերի ժամանակին տեղեկացվությունը և մասնակցությունը արձագանքման գործողություններին: Յուրաքանչյուր միջադեպից հետո իրականացնում ենք մանրակրկիտ հետաքննություն՝ միջադեպի հիմնական պատճառը պարզելու և բարելավման ենթակա ոլորտները բացահայտելու համար: Հետաքննությունն իրականացվում է ազգային օրենսդրության և ՄՊՎ (ICAM) մեթոդի համաձայն, որն ապահովում է իրադարձությունների օբյեկտիվ վերլուծություն:

ԿԱՊԱԼԱՒՈՐՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՒ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՈՒՄ

Մեր Ընկերությունն առաջնահերթություն է տալիս իր կապալառուների և նրանց աշխատողների անվտանգության ապահովմանը կապալառուների կառավարման համակարգի միջոցով: Այս համակարգը երաշխավորում է, որ կապալի պայմանագրով մատուցվող բոլոր ծառայությունները համապատասխանեն անվտանգության կանոնակարգերին և նպաստեն Ընկերության անվտանգության ապահովման ընդհանուր ցուցանիշների բարելավմանը: Այս համակարգը ներառում է նշված ծառայությունների ամբողջ կենսափուլը՝ ընտրությունից և ձեռքբերումից մինչև օգտագործում և մոնիտորինգ: ԶՊՄԿ-ի Կապալառուների կառավարման ուղեցույցը սահմանում է կապալառուների կոնկրետ պարտավորությունները՝ աշխատանքի անվտանգության և առողջության պահանջներին համապատասխան: Անվտանգության չափանիշների և պայմանագրային պարտավորությունների կատարման վերահսկման միջոցով մենք նվազագույնի ենք հասցնում կապալի պայմանագրով ծառայությունների մատուցման հետ կապված ռիսկերը և նպաստում անվտանգ աշխատանքային միջավայրի ստեղծմանը:

Բոլոր կապալառուները պետք է անցնեն ԶՊՄԿ-ի ներածական հրահանգավորում, որն իրականացվում է Ընկերության Առողջության և աշխատանքի անվտանգության բաժնի կողմից: Մենք մշտապես ստուգում ենք կապալառու ընկերության աշխատողների մոտ բարձր ռիսկայնության աշխատանքներ կատարելու թույլտվության առկայությունը՝ նախքան Ընկերության տարածքում աշխատելու թույլտվություն տրամադրելը: Թեև ԶՊՄԿ-ն վերահսկում է կապալառուի աշխատողների կողմից անվտանգության կանոնակարգերի պահպանումը, պատշաճ հավաստագրման ապահովման վերջնական պատասխանատվությունը կրում են կապալառու ընկերությունները:

ԶՊՄԿ-ում անվտանգությունը պարզապես պահանջ չէ. այն մշակույթ է, որը մենք ակտիվորեն զարգացնում ենք մեր գործունեության բոլոր ուղղություններում, ներառյալ կապալառուների հետ աշխատանքներում: ԶՊՄԿ-ն համագործակցում է իր կապալառու ընկերությունների հետ՝ մշտապես կատարելագործելով կապալառուների կառավարման գործընթացը՝ անվտանգության չափանիշները բարելավելու և լրացուցիչ միջոցառումներ կիրառելու նպատակով: Շարունակական այս համագործակցությունը նպաստում է անվտանգության մշակույթի ձևավորմանը և ապահովում է, որ ԶՊՄԿ-ի տարածքում աշխատող բոլոր անձինք պատշաճ կերպով պատրաստված լինեն իրենց առջև դրված առաջադրանքներն անվտանգ և արդյունավետ կատարելու համար:

ԶՊՄԿ-Ի ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ

ISO 45001 ստանդարտների ներդրում և պահպանում

ԶՊՄԿ-ն առաջնահերթ է համարում ISO 45001 ստանդարտների պահպանումը, որը պահանջում է աշխատավայրում վտանգների մասին լիարժեք պատկերացում: Գործընթացը սկսվում է բացերի վերլուծությամբ՝ բացահայտելով այն ոլորտները, որտեղ ընթացիկ գործելակերպը չի համապատասխանում ISO 45001 ստանդարտի պահանջներին: Այս վերլուծության հիման վրա ԶՊՄԿ-ն մշակում է գործողությունների իրականացման ծրագիր, որը նախանշում է պահանջների կատարման վերահսկման համար անհրաժեշտ քայլերը: Այն ներառում է բոլոր պահանջների փաստաթղթավորում, աշխատողների վերապատրաստում և անհրաժեշտ քաղաքականության, ընթացակարգերի ներդրում և համակարգային փոփոխությունների իրականացում: ԶՊՄԿ-ն ընդունում է, որ պահանջների կատարման ապահովումը շարունակական գործընթաց է, որը պահանջում է մշտադիտարկում և շարունակական բարելավում:

Աշխատանքի պաշտպանության և արդյունաբերական անվտանգության ցուցանիշների բարելավում.

ԶՊՄԿ-ն հանձնառու է Ընկերությունում աշխատանքի պաշտպանության մակարդակի բարձրացմանն ու անվտանգության ամուր մշակույթի խթանմանը: 2023 թվականին ԶՊՄԿ-ն մշակել է նոր ուղեցույց՝ «Մազապուրծ դեպքերի, պատահարների և արտադրական դժբախտ դեպքերի մասին հաղորդման, դրանց հետաքննության և հաշվառման», որի նպատակն է բարելավել անվտանգության հետ կապված իրադարձությունների մասին տեղեկացման և դրանց վերլուծության գործընթացը: Այս նախաձեռնության նպատակն է հայտնաբերել հնարավոր վտանգներն ու միտումները՝ ԶՊՄԿ-ին հնարավորություն տալով կիրառել կանխարգելիչ միջոցառումներ և բարելավել անվտանգության ապահովման իր ցուցանիշները:

Անվտանգության ապահովմանն ուղղված խրախուսման և պատժամիջոցների համակարգի ստեղծում.

Անվտանգության ապահովման խրախուսման և պատժամիջոցների համակարգի ստեղծումն այն գործիքներից մեկն է, որը մենք օգտագործում ենք անվտանգության մշակույթն ամրապնդելու համար: 2024 թվականի համար մենք նախատեսում ենք ուժեղացնել համակարգը, ներառյալ թմրանյութերի և ալկոհոլի օգտագործման հսկողությունն ու բացահայտումը, ինչպես նաև ԶՊՄԿ-ի հիմնական օբյեկտների մուտքերում տեղադրել ալկոհոլի թեստավորման սարքեր՝ հնարավոր ռիսկերը բացառելու նպատակով:

Բնապահպանական, սոցիալական, կառավարչական (ԲՍԿ) և անվտանգության դասընթացների անցկացում

(մանրամասների համար տե՛ս նաև Անվտանգության դասընթացների և արտակարգ իրավիճակների կանխարգելման բաժինը):

ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾՐԱԳՐԵՐ

- Հասնել աշխատավայրում ալկոհոլի օգտագործման զրոյական մակարդակի:
- Նվազագույնի հասցնել պատահարները:
- Նորացնել էլեկտրական սարքավորումները և էլեկտրալարերը:
- Արտադրամասերը վերազինել նոր սարքավորումներով և թվայնացնել աշխատանքները՝ ֆիզիկական աշխատանքը կրճատելու նպատակով՝ պաշտպանելով աշխատողներին վտանգավոր պայմաններում աշխատանքից:
- Անվտանգության մշակույթը դարձնել կառավարման առաջնահերթություն՝ շաբաթական ժողովներում ներառելով անվտանգության թեմայով քննարկումներ՝ լավագույն մեթոդները ներկայացնելու և առաջացող խնդիրների լուծելու նպատակով:

ՎՏԱՆԳԱՎՈՐ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ և ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ. ԱՆՎՏԱՆԳ և ԱՌՈՂՋ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

GRI 403-2

Մենք մշտադիտարկում ենք աշխատավայրում առկա ռիսկերը ներքին և արտաքին աուդիտների միջոցով՝ դժբախտ պատահարները կանխելու և անվտանգ միջավայր ապահովելու համար: Ընկերության Առողջության և անվտանգության (ԱԱ) բաժինը պարբերաբար ստուգումներ է անցկացնում՝ նոր կամ կրկնվող վտանգները հայտնաբերելու և վերացնելու համար: Վտանգավոր գործոնների բացահայտման և ռիսկերի գնահատման տարեկան գործընթացը և էական փոփոխություններից հետո գնահատումները մեզ հնարավորություն են տալիս նախապես կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել ռիսկերի կառավարման գործում: Համագործակցային այս գործընթացը ներառում է աշխատողներին և ղեկավարներին՝ ռիսկերի ժամանակին և արդյունավետ նվազեցման միջոցառումներ ապահովելու նպատակով:

Ինժեներներից և փորձառու անձնակազմից բաղկացած՝ բարձր որակավորում ունեցող մեր թիմն իրականացնում է ռիսկերի գնահատում և մշակում հայտնաբերված ռիսկերի մեղմացման գործնական լուծումներ: Կրիտիկական ռիսկերի հայտնաբերման դեպքում դադարեցվում է աշխատանքը ազդակիր գոտում մինչև ուղղիչ միջոցառումների իրականացումը, ներառյալ վտանգի վերացումը, սարքավորումների փոխարինումը կամ ինժեներական լուծումները:

Ընկերությունը շարունակում է լուծել աշխատավայրում առկա խնդիրները, ինչպիսիք են ավելորդ աղմուկը, վիբրացիան, փոշին, լուսավորությունը և ջերմաստիճանի վերահսկումը՝ ներդնելով փոշու հեռացման համակարգեր, ձայնամեկուսիչ խցիկներ, բարելավելով օդորակումն ու լուսավորությունը: Հնարավոր վտանգներից պաշտպանվելու համար աշխատակիցներին տրամադրվում են անհատական պաշտպանության միջոցներ (ԱՊՄ):

Համագործակցությունը կարևոր դեր է խաղում մեր անվտանգության մշակույթի ձևավորման գործում: Աշխատակիցներին խորհուրդ է տրվում անմիջապես տեղեկացնել վտանգավոր պայմանների մասին, իսկ հատուկ թեժ գիծն ապահովում է արագ արձագանք: Մենք կիրառում ենք խիստ պատասխանատվություն անվտանգության կանոնների խախտումների համար, և արհմիության հետ համագործակցելով ապահովում ենք, որ բոլոր աշխատակիցներն աշխատեն անվտանգ պայմաններում՝ չվախենալով խախտման դեպքերի զեկուցման դեպքում որևէ վրեժխնդրությունից:

Ուժեղացնելով անվտանգության և թափանցիկության մեր մշակույթը՝ մենք ձգտում ենք ԶՊՄԿ-ում պահպանել առողջ, անվտանգ և բարենպաստ աշխատանքային միջավայր բոլորի համար:

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ և ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԿԵՆՍԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ և ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍՏԱՆՁՆՈՒՄ

GRI 403-3

Ընկերությունը տրամադրում է տարբեր առողջապահական ծառայություններ և ներդրումներ է կատարում առողջության ռիսկերի նվազեցմանն ուղղված կանխարգելիչ նախաձեռնություններում: ԶՊՄԿ-ն պատասխանատու է աշխատողներին և նրանց ընտանիքի անդամներին անվտանգ և առողջ աշխատանքային միջավայր ստեղծելու և պահպանելու համար՝ ուղղորդելու առումով, որը կնպաստի աշխատավայրում ֆիզիկական և հոգեկան առողջության պաշտպանությանը:

Առողջության հետ կապված ռիսկերի վաղ հայտնաբերումն ու կառավարումն օգնում են մեր Ընկերությանը ձեռնարկել կանխարգելիչ քայլեր՝ աշխատողների շրջանում մասնագիտական հիվանդությունների առաջացումը և տարածումը կանխելու համար: Այդ իսկ պատճառով Ընկերությունն իրականացնում է նախնական և պարբերական բուժզննումներ մեր աշխատողների համար՝ ապահովելով նրանց բարեկեցությունն ու անվտանգությունը: Այս զննումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության ցուցումներին համապատասխան՝ լիցենզավորված կանխարգելիչ առողջապահական կազմակերպությունների կողմից: ՀՀ առողջապահության նախարարությունը այս կազմակերպություններին տրամադրում է հավաստագիր՝ անհրաժեշտ բժշկական օգնություն և ծառայություններ մատուցելու համար: Առողջության և աշխատանքի անվտանգության բաժնի հատուկ նշանակված բժիշկը կազմակերպում է բժշկական հետազոտության ամբողջ գործընթացը՝ բարձր մակարդակով բուժսպասարկում ապահովելու համար:

2023 թվականին ԶՊՄԿ-ն բժշկական հետազոտություններ է կազմակերպել

3,001 աշխատակիցների

կանանց **496**



տղամարդկանց **2,505**



Մասնագիտական հիվանդությունների գրանցված դեպքերի բացակայությունն վկայում է ԶՊՄԿ-ի առողջապահական միջոցառումների արդյունավետության մասին:

Հայտնաբերվել է առաջնային հիվանդության ընդհանուր առմամբ

112

դեպք, ինչը վկայում է բուժզննման գործընթացի մանրակրկիտ լինելու մասին:

Զննության արդյունքում առողջական վիճակը հաշվի առնելով, որոշվել է, որ երեք աշխատակից պետք է անցնեն այլ աշխատանքի:

ԶՊՄԿ-ի կապալառուները նույնպես պարտավոր են բուժզննումներ կազմակերպել իրենց աշխատակիցների համար՝ ապահովելով մասնագիտական վտանգներից նրանց պաշտպանվածությունը:

GRI 403-10

ՆԱԽՈՐԴ ԵՐԵՔ ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՈՉ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ և ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ, ՈՐՊԵՍ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆ

GRI 403-6

Ընկերությունը պայմանագրեր է կնքել մի շարք կլինիկաների և հիվանդանոցների հետ՝ աշխատակիցների բուժսպասարկումն ապահովելու համար: Մենք տրամադրում ենք առողջության ապահովագրություն և ֆինանսական ներդրումներ կատարում ԶՊՄԿ-ի բարեգործական հիմնադրամի միջոցով: Բժշկական ծառայությունների շրջանակը ներառում է տարեկան կանխարգելիչ հետազոտություններ, ամբուլատոր բժշկական օգնություն, ստացիոնար բժշկական օգնություն, քրոնիկ հիվանդությունների բուժում, ակնաբուժական, ատամնաբուժական և լրացուցիչ այլ ծառայություններ:

Ընկերությունը գիտակցում է, որ ծանր ֆիզիկական աշխատանքը կարող է առողջական ռիսկերի պատճառ դառնալ, իսկ կանոնավոր ֆիզիկական ակտիվությունն օգնում է բարելավել աշխատողների ընդհանուր առողջությունը, ֆիզիկական վիճակը և կյանքի որակը: Մասնագիտական առողջապահական ծառայությունների ապահովումից բացի, Ընկերությունը ստեղծել է տարբեր սպորտային միջոցառումների ծրագրեր, այդ թվում՝ բասկետբոլի, վոլեյբոլի և ֆուտբոլի խմբակներ: Այս ծրագրերը աշխատողների առողջ ապրելակերպը խթանելուն ուղղված ԶՊՄԿ-ի ջանքերի մի մասն են կազմում: Ընկերության մարզական թիմերը հաճախ նշանակալի հաջողություններ են ունենում, ինչն ընդգծում է այս նախաձեռնությունների արդյունավետությունն աշխատակիցների բարեկեցության բարելավման գործում:

ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ և ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԵՐ. ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒՄ

GRI 403-2

Դժբախտ պատահարների հետաքննությունը Աշխատանքի անվտանգության և առողջության կառավարման համակարգի կարևոր բաղադրիչ է: Մազապուրծ դեպքերի և միջադեպերի վերաբերյալ տվյալների հավաքագրումը թույլ է տալիս բացահայտել դժբախտ պատահարների հիմնական պատճառները, ձեռնարկել ուղղիչ միջոցառումներ, վերահսկել օրենսդրության պահանջներին համապատասխանությունը, խնայել ծախսերը և կանխել ապագայում նման դեպքերը: Մենք մշտապես արձանագրում և հետաքննում ենք Ընկերության տարածքում աշխատակիցների, կապալառուների և այցելուների մասնակցությամբ տեղի ունեցած բոլոր դժբախտ պատահարները: Դրանց հետաքննությունն իրականացվում է ՀՀ օրենսդրության պահանջներին և ՄԿՎ/ICAM մեթոդին համապատասխան: ՄԿՎ/ICAM մեթոդի վրա հիմնված հետաքննություններն օգնում են բացահայտել դժբախտ պատահարների հիմնական պատճառները և դրանց նպաստող գործոնները:

GRI 403-9, SASB EM-MM-320A.1

ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (ԶՊՄԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ)

Ցուցանիշ	2022 թ.	2023 թ.
ԶՊՄԿ-ի գործունեության հետ կապված մահվան դեպքերի թիվը	0	0
ԶՊՄԿ-ի գործունեության հետ կապված մահվան դեպքերի տոկոսային ցուցանիշը (%)	0.00	0.00
ԶՊՄԿ-ի գործունեության հետ կապված լուրջ վնասվածքների (բացառությամբ մահվան դեպքերի) թիվը	2	2
ԶՊՄԿ-ի գործունեության հետ կապված ծանր վնասվածքների ցուցանիշը (%)	59	32
Ժամանակավոր անաշխատունակության կորստի հանգեցնող վնասվածքների թիվը	5	11[12]
Ժամանակավոր անաշխատունակության կորստի հանգեցնող վնասվածքների հաճախականությունը (%)	0.62	1.4
Աշխատաժամերի ընդհանուր քանակ (մարդ/ժամ)	8,016,696	8,009,520
Յուրաքանչյուր հաշվետու տարում արձանագրված աշխատանքային վնասվածքների հիմնական տեսակները	Մեքենայի հարված բարձր հանքաստիճանից անկումներ	Վայր ընկնելը կոտրվածքներ

ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (ԿԱՊԱԼԱՌՈՒՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ)

Ցուցանիշ	2022 թ.	2023 թ.
ԶՊՄԿ-ի գործունեության հետ կապված մահվան դեպքերի թիվը	0	0
ԶՊՄԿ-ի գործունեության հետ կապված մահվան դեպքերի տոկոսային ցուցանիշը (%)	-	-
ԶՊՄԿ-ի գործունեության հետ կապված լուրջ վնասվածքների (բացառությամբ մահվան դեպքերի) թիվը	0	0
ԶՊՄԿ-ի գործունեության հետ կապված ծանր վնասվածքների ցուցանիշը (%)	-	-
Ժամանակավոր անաշխատունակության կորստի հանգեցնող վնասվածքների թիվը	0	2
Ժամանակավոր անաշխատունակության կորստի հանգեցնող վնասվածքների հաճախականությունը (%)	-	-
Աշխատաժամերի ընդհանուր քանակ (մարդ/ժամ)	**≈1,946,000**	**≈2,719,080**

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՈՉ ՄԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՆԱՍՎԱԾՔ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ՊԱՏՃԱՌ ՉԻ ԴԱՐՁԵԼ: ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇԸ 1,000,000 ՄԱՐԴ/ԺԱՄ ՀԱՇՎԱՐԿՈՎ ԿԱԶՄՈՒՄ Է 1.4, ԻՍԿ 200 000 ՄԱՐԴ/ԺԱՄ ՀԱՇՎԱՐԿՈՎ՝ 0.27:

[12] Նշված 11 դեպքից միայն 4-ի դեպքում առաջին բուժօգնությունից բացի աշխատողները բուժզննում են անցել բուժհաստատությունում և կորցրել աշխատանքային օրվա կեսը:

ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ՄԻՋԱԴԵՊԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ. ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՇԱՀԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

GRI 3-3

Մեր նպատակն է՝ էլ ավելի ամրապնդել միջադեպերի կառավարման մեր համակարգը, արդյունավետ կերպով կառավարելով կրիտիկական միջադեպերի դրական և բացասական ազդեցությունները: Ռիսկերի կանխարգելիչ կառավարման և վերջինիս մշտապես կատարելագործման միջոցով մենք ձգտում ենք նվազագույնի հասցնել աշխատանքի խափանումները և պաշտպանել մեր շահագրգիռ կողմերի շահերը: Տեղական համայնքների և ոլորտային գործընկերների հետ պարբերական փոխգործակցությունը թույլ է տալիս միջադեպերի կառավարման մեր ռազմավարությունը համապատասխանեցնել առավել լայն շրջանակների ակնկալիքներին: Հիմնական առաջնահերթություն է հանդիսանում վերապատրաստման ծրագրերի կատարելագործումը, արձագանքման պլանների թարմացումը և Ընկերության ներսում և շահագրգիռ կողմերի հետ հաղորդակցության բարելավումը:

Մենք ունենք ներքին փաստաթղթավարություն՝ արտակարգ գործողությունների պլան, որը կարգավորում է կրիտիկական միջադեպերի կառավարման գործընթացները: Կայուն զարգացման գծով տնօրենը ղեկավարում է իրականացման գործընթացը՝ ապահովելով համակարգված և արդյունավետ արձագանքումը միջադեպերին բոլոր բաժինների կողմից: Ներքին ուսումնասիրություններն ու աուդիտները թույլ են տալիս գնահատել կրիտիկական միջադեպերի կառավարման արդյունավետությունը՝ մշտապես բարելավել համապատասխան գործընթացները և պատրաստվել ավելի արդյունավետ արձագանքելու ամենատարբեր իրավիճակներին: Մենք ձգտում ենք ներդնել ոլորտի նորագույն չափանիշները և կիրառել նոր տեխնոլոգիաներ միջադեպերի ավելի արդյունավետ վերահսկման և զեկուցման համար:

2023 թ. Արտակարգ իրավիճակների նախարարության հետ համատեղ կազմակերպեցինք լայնածավալ վարժանք՝ ստուգելու միջադեպերին արձագանքելու մեր հնարավորությունները: Վարժանքը կազմակերպված էր պոչատարի տարածքում: Վարժանքի սցենարով՝ ԶՊՄԿ-ի Առողջության և աշխատանքի անվտանգության թիմը և ԱԻՆ-ը կազմակերպեցին հակահրդեհային պատնեշ և փրկեցին մարդկանց՝ ենթադրյալ արտակարգ իրավիճակում: Վարժանքը հնարավորություն տվեց կարևոր եզրակացություններ անել, իսկ դրանից քաղված դասերը հաշվի են առնվել միջադեպերի կառավարման համակարգը բարելավելու մեր շարունակական ջանքերում:



ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԻՐԱՋԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

GRI 403-4, GRI 403-5, SASB EM-MM-320A.1

Մենք ապահովում ենք մեր աշխատողների մասնակցությունը անվտանգության վերաբերյալ դասընթացներին և քննարկումներին, վտանգների հայտնաբերման և ռիսկերի կառավարման համատեղ գործընթացներին: Քննարկումների ընթացքում աշխատակիցներն արտահայտում են իրենց կարծիքը տարբեր խնդիրների լուծման, աշխատանքային տեղամասի և աշխատանքային պայմանների բարելավման վերաբերյալ: Աշխատողների առաջարկները կարևոր են որոշումների ընդունման գործընթացում: ԶՊՄԿ-ի համապատասխան տնօրենների կողմից ընդունվող որոշումները քննարկվում են արտադրամասերի ղեկավար անձնակազմի հետ, քանի որ նրանք հանդես են գալիս որպես աշխատողների ներկայացուցիչներ:

Գործնական դասընթացների կազմակերպման նպատակով՝ իրականացնում ենք վերապատրաստման կարիքների գնահատում: Մասնավորապես որոշվում է անվտանգության վերաբերյալ վերապատրաստման կարիք ունեցող աշխատողների թիվը, մասնագիտացումը, աշխատանքային պայմանները, դրանց հետ առնչվող ռիսկերը, և կոնկրետ դասընթացները, որոնք տվյալ աշխատակիցները պետք է անցնեն: Դասընթացի ընտրության ժամանակ հաշվի են առնվում նաև տարբեր արտադրական տեղամասերում նախկինում տեղի ունեցած միջադեպերը, պոտենցիալ վտանգավոր իրադարձությունները և դժբախտ պատահարները: Աշխատակիցների նախնական հմտությունները գնահատվում են նախքան դասընթացը՝ հատուկ թեստերի միջոցով և համապատասխանաբար ընտրվում է վերապատրաստման դասընթացը: Ստացված գիտելիքները գնահատվում են թեստերի միջոցով, ինչը թույլ է տալիս գնահատել վերապատրաստման ծրագրի արդյունավետությունը:

Առողջության և աշխատանքի անվտանգության բաժինը կազմակերպում է աշխատողների առողջության և աշխատանքի անվտանգության դասընթացներ, որոնցից մի քանիսը պարտադիր են տարեկան կտրվածքով, մինչդեռ մյուսները նախատեսվում և իրականացվում են Ընկերության կողմից՝ կախված իրավիճակից և առկա ռիսկերից:

Աշխատանքի վայրում վտանգների և ռիսկերի հայտնաբերմանն ուղղված դասընթացները հիմնականում նախատեսված են վտանգավոր, վնասակար գործարանների աշխատողների համար, քանի որ բարձր ռիսկային աշխատանքի հետևանքով պատահարների առաջացումն ավելի հավանական է:

2023 Թ-ԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ ԵՆ ՀԵՏԵՅԱԼ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ՝

Աշխատանք բարձրության վրա՝
379
մասնակից

Աշխատանք պարփակված տարածքում՝
195
մասնակից

Առասանողներ՝
418
մասնակից

Հրդեհաշիջում՝
161
մասնակից


2023 թ-ի աշխատանքի անվտանգության և առողջության թեմայով դասընթացներին մասնակցել է

4,409


աշխատակից, իսկ դասընթացի միջին տևողությունը մեկ աշխատակցի հաշվարկով կազմել է 23 ժամ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Աշխատանքի անվտանգության և առողջության թեմայով դասընթացի միջին տևողությունը մեկ աշխատողի հաշվարկով (Ընկերության աշխատողներ), ժամ



Աշխատանքի անվտանգության և առողջության թեմայով դասընթացի մասնակիցների թիվը (Ընկերության աշխատողներ)



Հոգալով ոչ միայն մեր անմիջական աշխատողների անվտանգության մասին, մենք նաև ապահովում ենք անհրաժեշտ վերապատրաստում կապալառու ընկերությունների անձնակազմի համար: 2023 թ-ին կապալառու ընկերությունների 325 աշխատակիցներ մասնակցել են տարբեր վերապատրաստման մոդուլների, ինչը հնարավորություն է տվել նրանց ավելի լավ կողմնորոշվել իրենց աշխատանքի պահանջների մեջ:

ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ

Հավատարիմ մնալով անվտանգ և աջակցող աշխատանքային միջավայր ստեղծելու իր ջանքերին՝ Ընկերությունն իր աշխատողներին հնարավորություն է ընձեռում միանալ տեղական ֆորմալ կոլեկտիվ պայմանագրերին: Դրանք կարգավորում են հետևյալ հարցերը. անհատական պաշտպանիչ միջոցների տրամադրում, աշխատողների ներկայացուցիչների մասնակցությունը առողջության և աշխատանքի անվտանգության ստուգումներին, կանոնավոր աուդիտները և պատահարների/միջադեպերի հետաքննությունները, վերապատրաստման դասընթացները և մասնագիտական կրթությունը, և պաշտպանությունը վրեժխնդրությունից: Բացի այդ, ԶՊՄԿ-ն համագործակցում է Ընկերության ներսում Արհմիության ներկայացուցիչների հետ: Արհմիության խնդիրներն են.

- **Գործատուի և երրորդ կողմերի առջև ներկայացնել և պաշտպանել աշխատակիցների աշխատանքային և համապատասխան սոցիալական իրավունքները**
- **Սոցիալական գործընկերության տարբեր մակարդակներում կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում կոորդինացնել աշխատողների և գործատուների շահերը**
- **Գործատուի հրավերով մասնակցել արտադրական ծրագրերի մշակման և իրականացման գործընթացին**
- **Աշխատանքային և հանգստի պայմանների բարելավման նպատակով՝ առաջարկություններ ներկայացնել գործատուին, ծանոթացնել նոր սարքավորումների հետ, հեշտացնել ձեռքի աշխատանքը, վերանայել արտադրական նորմերը և համապատասխանեցնել աշխատանքի վարձատրությունը**
- **Համագործակցել գործատուի հետ արհմիության անդամների վարձատրությանը և խրախուսման միջոցներին վերաբերող հարցերի հետ կապված**
- **Գործատուի խնդրանքով քննարկել կարգապահական հարցերը, որոնցում ներգրավված են արհմիության անդամները**



07

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՁՆԱՌՈՒ Է ԿԱՌԱՎԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ և ՇԱՀԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ և ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ:

2023թ-ին տեղական համայնքներում ներդրումների ընդհանուր գումարը կազմել է

$20.2

միլիոն

2023թ-ին ՀԿ-ներին տրամադրված ֆինանսական աջակցությունը կազմել է

$1.2

միլիոն

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՋԱՐԳԱՑՈՒՄ. ՏԵՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ

GRI 3-3, SASB EM-MM-210B.1



Տնտեսական իրավունքներ և շահեր.

մենք ապահովում ենք, որ մեր գործունեությունը դրական ազդեցություն ունենա տեղական տնտեսության վրա՝ աշխատանքային հնարավորությունների, արդար վարձատրության և վճարումների թափանցիկ գործելակերպի միջոցով: Բացի այդ, մենք հատուկ ուշադրություն ենք դարձնում տեղական ենթակառուցվածքների և գյուղատնտեսական նշանակության հողերի չխախտման և դրանց բարելավման վրա, որոնք կարևոր են համայնքի տնտեսական կայունության համար:

Բնապահպանական իրավունքներ և շահեր.

Ընկերության բնապահպանական պատասխանատվությունը ներառում է տեղական համայնքների օդի և ջրի որակի պահպանումը, ինչպես նաև կեղտաջրերի և թափոնների անվտանգ հեռացումը: Այս հանձնառությունը առանցքային է Ընկերության աշխատանքային պրակտիկայի և համայնքների ներգրավման համար:

Սոցիալական իրավունքներ և շահեր.

ԶՊՄԿ-ն առաջնահերթություն է տալիս մեր ազդակիր համայնքների համար պատշաճ առողջապահական ծառայությունների, կրթության և բնակարանային ապահովման հասանելիությանը: Հավատացած ենք, որ այս հիմնարար իրավունքների իրականացմանն աջակցությունը, կարևոր նշանակություն ունի համայնքների հետ կայուն հարաբերությունների համար:

Մշակութային իրավունքներ և շահեր.

մենք հանձնառու ենք պաշտպանել մշակութային կարևորություն ունեցող վայրերը, այդ թվում՝ սրբավայրերը և գերեզմանոցները, և գիտակցում դրանց կարևորությունը համայնքի ինքնության և ժառանգության տեսանկյունից:

Վերը նշված բոլոր իրավունքներն ու շահերը ներառված են մեր գործառնական ստանդարտներում և ընթացակարգերում և կանոնավոր կերպով վերահսկվում են՝ պահանջների կատարմանը ու բարելավմանը հետևելու համար:

Ընկերությունը հանձնաձու է իր գործունեությունն իրականացնել Միջազգային ֆինանսական կորպորացիայի կատարողական ստանդարտներին համապատասխան՝ մեր գործունեության մեջ անվտանգությունը, թափանցիկությունը և հարգանքը խթանելու համար: 4-րդ կատարողական ստանդարտի համաձայն, մենք առաջնահերթ ենք համարում տեղական համայնքների անվտանգությունն ու բարեկեցությունը, իրականացնելով անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումներ՝ պարբերաբար իրականացնելով առողջության գնահատում և կապ պահպանելով համայնքների հետ, մեր արտադրական օբյեկտների շրջակայքում նրանց անվտանգությունն ապահովելու համար:

5-րդ կատարողական ստանդարտի համաձայն մենք թափանցիկ կերպով համագործակցում ենք ազդակիր համայնքների հետ և տրամադրում նրանց արդար փոխհատուցում և աջակցություն՝ հողերի ձեռքբերման և վերաբնակեցման հարցերում:

Մշակութային ժառանգությունը հարգելը մեր մոտեցման մի մասն է և առանցքային է մեր արժեքների համար: Հետևելով 8-րդ կատարողական ստանդարտին՝ նախքան որևէ օբյեկտի կառուցումը մենք իրականացնում ենք մշակութային ազդեցության գնահատումներ և սերտորեն համագործակցում ենք տեղական ժառանգության պահպանության կազմակերպությունների հետ՝ կարևոր մշակութային օբյեկտների պահպանումը կամ պատշաճ կերպով կառավարումը:

Ակնկալվում է, որ մեր գործընկերները, այդ թվում՝ կապալառուները, ենթակապալառուները, մատակարարները և համատեղ աշխատանքներ իրականացնող գործընկերները ԶՊՄԿ-ի օրինակով կպահպանեն համայնքի իրավունքների և շահերի համապատասխանության նույն ստանդարտները: Ընկերության սոցիալական պատասխանատվության քաղաքականությանը վերաբերող աուդիտը մեր պայմանագրերի պարտադիր պայման է:

ՄԵՐ ՀԱՄԱՅՆՔԱԿԵՆՏՐՈՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ ԿԻՐԱՌՎՈՒՄ Է ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՓՈՒԼԵՐՈՒՄ.

Նախնական հայտի մշակում.

համայնքի վրա ազդեցության գնահատում նախքան որևէ տեղամասի ձեռքբերումը:

Հետախուզում և գնահատում.


համայնքների սոցիալական և բնապահպանական ազդեցությունների գնահատում՝ հնարավոր ռիսկերը և օգուտները բացահայտելու նպատակով:

Տեղամասի շահագործում և օգտակար հանածոյի արդյունահանում.

ակտիվ գործունեության ընթացքում ռիսկերը մեղմելու և համայնքի օգուտները բարձրացնելու ռազմավարությունների իրականացում:

Փակում, շահագործումից հանում և վերականգնում.

ապահովել, որ տարածքները վերադարձվեն անվտանգ և օգտագործման համար պիտանի վիճակի, որը հաճախ գերազանցում է նորմատիվ պահանջները:



GRI 203-1

2023 թվականին ԶՊՄԿ-ի ներդրումները համայնքներում կազմել են 20,2 մլն ԱՄՆ դոլար (2022 թվականին ներդրումները կազմել էին 14,8 մլն ԱՄՆ դոլար):

Համայնքի ենթակառուցվածքներում ԶՊՄԿ-ի ներդրումները ցույց են տալիս Ընկերության հանձնառությունը՝ հարակից տեղական համայնքների ենթակառուցվածքները զարգացնելու և բարելավելու ուղղությամբ, ինչը նպաստում է նաև Ընկերության գործունեությանը: Թեև այս ներդրումների մեծ մասը առևտրային բնույթ են կրում և հիմնականում ծառայում են Ընկերության բիզնես շահերին՝ բարելավելով աշխատանքների արդյունավետությունը և ընդլայնելով արտադրական հզորությունները, դրանք նաև լրացուցիչ օգուտներ են բերում շրջակա համայնքներին: Այս մոտեցումը նպաստում է ԶՊՄԿ-ի և Ընկերության գործունեության տարածքի համայնքների միջև փոխշահավետ հարաբերությունների ձևավորմանը: ԶՊՄԿ-ի կատարած ենթակառուցվածքային ներդրումները լայնամասշտաբ դրական ազդեցություն են ունեցել Քաջարանի և Կապանի տնտեսությունների վրա, որտեղ տեղակայված են Ընկերության հիմնական օբյեկտները: Այս ներդրումները բարելավել են ֆիզիկական ենթակառուցվածքները և նպաստել տնտեսական զարգացմանը՝ ստեղծելով աշխատատեղեր, բարելավելով տեղական ծառայությունները և հնարավորություն տալով բարձրացնելու բնակիչների կենսամակարդակը:

Աշխատատեղերի ստեղծում.

համայնքների զարգացմանը նպաստող օբյեկտների կառուցումն ու սպասարկումը աշխատանքային հնարավորություններ են ստեղծում տեղի բնակիչների համար:

Տեղական ծառայությունների բարելավում.

բարելավված ենթակառուցվածքները, ինչպիսիք են ճանապարհները և կոմունալ ծառայությունները, դյուրացնում են կենսական նշանակություն ունեցող ծառայությունների հասանելիությունը և բարելավում կյանքի ընդհանուր որակը:

Կենսամակարդակի հնարավոր բարձրացում.


ենթակառուցվածքներում ներդրումները կարող են նպաստել բնակիչների կենսամակարդակի բարձրացմանը՝ ստեղծելով նոր աշխատատեղեր և բարելավելով տեղական ծառայությունները:

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ/ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ (ՀԱԶԱՐ)

	Քաջարան	Կապան	Սյունիքի մարզ	ՀՀ այլ մարզեր	Ընդամենը հազ. ԱՄՆ դոլար	Ոլորտի տոկոսային մասնաբաժին
Սոցիալական աջակցություն, այդ թվում՝ աջակցություն անհատներին, համայնքներին, ենթակառուցվածքների զարգացման, շինարարության գործում	2,342	3,292	643	419	6,695	33.2%
Սուբվենցիոն ծրագրեր	1,388	964			2,351	11.7%
Ուսման վարձ, աջակցություն ուսումնական հաստատություններին	576	247		506	1,329	6.6%
Բուժսպասարկում, առողջապահական ծառայություններ	934	421	61	158	1,574	7.8%
Սպորտի զարգացում (այդ թվում՝ «Սյունիք» ՖԱ)	153	1,380	46	304	1,884	9.3%
Մշակութային միջոցառումներ (այդ թվում՝ «Սյունիք» հեռուստաընկերություն)	75	60	716	153	1,004	5.0%
Պաշտպանության նախարարություն, զորամասեր				1,928	1,928	9.6%
Աջակցություն կազմակերպություններին և հիմնադրամներին (առողջապահական, սոցիալական, հաշմանդամների, հանքարդյունաբերական)			274	948	1,222	6.1%
Ֆինանսական օգնություն աշխատողներին	302			16	318	1.6%
Օդանավակայանի և ինքնաթիռի տեխնիկական սպասարկում		1,854			1,854	9.2%
Ընդամենը հազ. ԱՄՆ դոլար	**5,769**	**8,219**	**1,740**	**4,431**	**20,159**	

Մենք գիտակցում ենք Ընկերության գործառնական նպատակների և տեղական համայնքների կարիքների հավասարակշռման կարևորությունը: Իրականացնում ենք համայնքային կարիքների գնահատում՝ ենթակառուցվածքային ծրագրերի համապատասխանությունը համայնքի կարիքներին ապահովելու նպատակով: Այս գնահատումներն օգնում են բացահայտել տարածաշրջանում կայուն զարգացմանն աջակցելու համար անհրաժեշտ կոնկրետ ենթակառուցվածքները և ծառայությունները: Գնահատումների արդյունքների հիման վրա ձևավորվում են աշխատանքների պլանավորման և իրականացման գործընթացները՝ ապահովելով, որ դրանք բավարարեն համայնքի իրական կարիքները և նպաստեն Ընկերության և տեղական շահագրգիռ կողմերի միջև դրական հարաբերությունների հաստատմանը: Նման մոտեցման կարևոր օրինակ են համայնքահեն սոցիալական ենթակառուցվածքների ծրագրերը, որոնցում թե՛ համայնքները, թե՛ տեղական ինքնակառավարման մարմինները խոսում են զարգացման առավել կարևոր ուղղությունների մասին: Դրանք ներառում են գյուղական ենթակառուցվածքների և սուբվենցիոն ծրագրեր, ինչպիսիք են դպրոցների հիմնանորոգումը, ճանապարհների վերանորոգումը, ջրամատակարարման համակարգերի արդիականացումը և այլն:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐԻ և ԻՆՔՆԱԹԻՌՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ



ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Գործընկերային ծրագրերը և հասարակական կազմակերպություններին ֆինանսական աջակցությունը կազմում են համայնքում ներդրումների մոտ 6%-ը՝ ընդհանուր մոտ 1.2 միլիոն ԱՄՆ դոլար: Հաստատումից հետո այս ծրագրերն իրականացվում են համաձայնեցված նպատակներով, ակնկալվող արդյունքներով և գործողություններով, որոնք ամրագրված են յուրաքանչյուր գործընկերոջ հետ կնքված պարտադիր իրավական ուժ ունեցող պայմանագրերում: Մենք կանոնավոր կերպով հետևում ենք ծրագրերի իրականացման գործընթացին. յուրաքանչյուր այցից հետո կազմվում են ամփոփ հաշվետվություններ, յուրաքանչյուր եռամսյակ գործընկերները ներկայացնում են աշխատանքների առաջընթացի և ֆինանսական հարցերի վերաբերյալ հաշվետվությունների՝ համաձայնեցված ձևաչափերով: Տարբեր նախաձեռնություններ իրականացնելու նպատակով 2023 թվականին Ընկերությունը համագործակցել է 18 հասարակական և այլ կազմակերպությունների հետ: Սա ապահովում է կանոնավոր համագործակցություն նրանց հետ, որը.

- Հարթակ է տրամադրում մեզ՝ հանքարդյունաբերական գործունեության վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու համար:
- Ծառայում է որպես հուսալի աղբյուր՝ համայնքի բարեկեցության և հանքի վերաբերյալ ընկալումների մասին պատկերացում կազմելու համար՝ ապահովելով ԶՊՄԿ-ի ներկայությունը ՀԿ-ների գործունեության միջոցով:
- Ընդլայնում է ՀԿ-ների կարողությունները (պլանավորում, առաջարկների պատրաստում, հաշվետվությունների կազմում, հաշվետվողականություն):

2023 թվականին աջակցության միջոցներ են հատկացվել 14 կազմակերպությունների: Նման աջակցությունը պարբերաբար տրամադրվում է առանց պաշտոնական համաձայնագրի՝ ծրագրեր իրականացնող կազմակերպություններին, այդ թվում՝ Հայաստանի հանքագործների և մետալուրգների միությանը (ՀՀՀՄ) և տարբեր տեղական հասարակական կազմակերպություններին:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ և ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ և ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԼՈՒԾՈՒՄ

GRI 3-3, SASB EM-MM-210A.3

Տեղական համայնքների հետ փոխադարձ կապ ապահովելու նպատակով մենք կիրառում ենք տարատեսակ հաղորդակցման միջոցներ, այն է՝ հանրային քննարկումներ, շահառուների հետ խորհրդակցություններ, բողոքների ներկայացման մեխանիզմներ և սոցիալական թիմի, տեղեկատվական միջոցների և տարածքային տեղեկատվական հարթակների միջոցով իրականացվող ուղղակի հաղորդակցություն: Ընդհանուր հրատապ թեմաներից են՝ ԶՊՄԿ-ի գործունեությամբ պայմանավորված ազդեցությունները շրջակա միջավայրի և տեղացի բնակչության առողջության վրա, ինչպես նաև հողօգտագործման հարցերը, տարածքային ենթակառուցվածքների ու ծառայությունների համար պահանջվող լրացուցիչ ներդրումները: Մեր Ընկերությանը հաջողվում է ակտիվորեն արձագանքել վերոնշյալ խնդիրներին ու մտահոգություններին՝ ակտիվ ներգրավման ռազմավարություններ իրականացնելու և աշխատանքները կարգավորելու ու համապատասխանեցնելու միջոցով:

Ոչ պակաս կարևորություն ունի նաև բողոքների գրանցման գործընթացը, որը հանդիսանում է ներգրավվածության ցուցիչ, ինչպես նաև տվյալների վերլուծության ու համայնքներում և ավելի լայն շահառուների շրջանակներում առկա մտահոգությունների և դիրքորոշումների ընկալման հուսալի աղբյուր: Հանդիպումների արձանագրությունը մեկնարկել է 2023 թ-ին, որպես քննարկված հարցերն ու բարձրացված խնդիրները ամփոփելու միջոց:

2023 թ-ին կազմակերպվել է ընդհանուր թվով 40 հանդիպում, ի հավելումն որոնց իրականացվել են նաև կանոնավոր շփումներ տեղական ու տարածաշրջանային (պաշտոնական և ոչ պաշտոնական) մարմինների հետ, որոնց ընթացքում դիտարկվել են ԶՊՄԿ-ի գործունեության տարբեր կողմեր, սուբվենցիոն և այլ ծրագրեր ու համագործակցության ոլորտներ: Անցկացված հանդիպումներից են՝

- Մշտադիտարկման այցելությունները և հանդիպումները գործընկեր կազմակերպությունների հետ՝ ծրագրի ընթացքը, խնդիրները, զեկուցման/հաշվետվողականության պահանջները, պլաններն ու առաջարկվող նախագծերը քննարկելու նպատակով: Արտագնա և գրասենյակային հանդիպումները հասարակական կազմակերպություններին ու այլ գործընկեր կազմակերպություններին ընձեռնում են լավ հնարավորություն՝ ԶՊՄԿ-ի կորպորատիվ ինքնության, սոցիալական պատասխանատվության միջոցառումների, համայնքային աջակցության առաջնահերթ ոլորտների և ընթացակարգային ուղղորդման վերաբերյալ պատկերացում ստանալու առումով: Նման այցելությունների արդյունքների և դիտարկումների հիման վրա կազմվում են ներքին մշտադիտարկման զեկույցներ:
- Ներածական հանդիպումները հասարակական կազմակերպությունների և տեղական բիզնես համայնքի հետ, որտեղ ներկայացվում են ԶՊՄԿ-ի սոցիալական ներդրումները, համագործակցության ուղիները և տեղական շուկայի զարգացման հնարավորությունները: Նման հանդիպումների ընթացքում, ԶՊՄԿ-ն ներկայացնում է Ընկերության քաղաքականությունները, ընթացակարգերը, տեղական գնումների մասով առկա մոտեցումներն ու առաջնահերթ համայնքային ներդրումների ոլորտները: Հաջորդող այցելությունների շնորհիվ հնարավոր է դառնում ապահովել կառուցողական մասնակցություն և անխափան հաղորդակցություն:

- Տեղի բնակչության հետ անցկացվում են համայնքային հանդիպումներ և քննարկվում ԶՊՄԿ-ի գործունեությանը վերաբերվող հարցեր, ինչպես նաև դիտարկվում համայնքային մտահոգություններն ու հարցերը՝ ապահովելով պատշաճ փոխադարձ կապ: Այս հանդիպումները՝ վերոնշյալ միջոցառումների հետ մեկտեղ, ամփոփվում են Հանդիպումների գրանցամատյանում՝ ՍԿՀ-ի շրջանակներում:
- Կապանի և Քաջարանի համայնքապետարաններում նախատեսվում են քննարկումներ՝ ԶՊՄԿ-ի նախագծերն ու ռազմավարությունները ներկայացնելու նպատակով:

Մենք կարևորում ենք համայնքների հետ փոխադարձ կապն ու ակտիվորեն օգտագործում այն Ընկերության կողմից որոշումներ կայացնելու գործընթացներում:

Համայնքների հետ առկա փոխադարձ կապի օրինակներից են՝

- Ենթակառուցվածքային նախագծերը. տեղական համայնքների հետ փոխադարձ կապի արդյունքում ենթակառուցվածային ծրագրերում կատարվել են որոշ ճշգրտումներ, օրինակ՝ նախագծերի և աշխարհագրական տեղակայման մասով: Նշված նախագծերը ներառում են հետևյալ ոլորտները՝ խմելու ջրի մատակարարում, տեղացի երեխաների համար ավելի բարձր որակի դպրոցների և մանկապարտեզների ապահովում, հաշմանդամություն ունեցող երեխաների համար սոցիալական ներառություն ու կրթություն ապահովող լայն հնարավորություններ և ծառայություններ, սպորտային և մշակութային ծրագրերի միջոցով տեղացի երեխաների և երիտասարդների զարգացում, ինչպես նաև համայնքների միջև տրանսորտային աջակցության միջոցով ավելի հուսալի կապի ապահովում: Այս բոլոր նախաձեռնությունների շնորհիվ բարելավվել են համայնքների կարիքները սպասարկող տեղական ենթակառուցվածքները:
- Բնապահպանական կառավարումը. համայնքների հետ քննարկումների արդյունքում ձևավորվել են ԶՊՄԿ-ի բնապահպանական կառավարման գործընթացներ, որոնք ապահովում են Ընկերության պատասխանատու և կայուն գործունեությունը:

GRI 413-1

Տեղական համայնքի զարգացմանն ուղղված Ընկերության ծրագրերի հիմքում ընկած են կարիքների գնահատման, ելակետային տվյալների հավաքագրման և համայնքների դիմումների տարեկան վերլուծության արդյունքները: 2023 թ-ին, գենդերային հավասարության սկզբունքով, իրականացվել է կարիքների գնահատման երկու միջոցառում /գարնանն ու աշնանը/՝ համայնքում տիրող կարծիքները բացահայտելու նպատակով: Միջոցառումներից յուրաքանչյուրի արդյունքում կազմվել են ամփոփիչ զեկույցներ, որոնք արտացոլում են համայնքի առաջնահերթ կարիքներն ու ոլորտները, ըստ հիմնական իրազեկիչներից և ֆոկուս խմբերից ստացված տվյալների: Նշված ուսումնասիրությունների ընթացքում փորձ է արվել պարզել համայնքներում ձևավորված դիրքորոշումները ընդհանուր առմամբ հանքարդյունաբերության և մասնավորապես ԶՊՄԿ-ի վերաբերյալ: Առաջնորդվելով «Ընդհանուր արժեք, ընդհանուր պատասխանատվություն» սկզբունքով՝ բացահայտվել և սահմանվել են առաջնահերթ ոլորտներ, որոնք կնպաստեն համայնքին և ԶՊՄԿ-ին: Թիրախային համայնքների կողմից բարձրացվող մշտական հարցերից են՝ ազգային անվտանգության խնդիրները, խմելու ջրի հետ կապված հարցերն ու որոշ տեղավայրերում գազամատակարարման բացակայությունը:

Նշված ուսումնասիրություններից բացի, 2022 թ-ից ի վեր իրականացվում է նաև ելակետային տվյալների հավաքագրման նախաձեռնություն, որի միջոցով ձևավորվում են ժողովրդագրության, զբաղվածության, առկա ենթակառուցվածքների, գյուղատնտեսության, միգրացիայի, համայնքին սպառնացող մարտահրավերների և յուրաքանչյուր ազդակիր համայնքում առկա հրատապ կարիքների վերաբերյալ տվյալների բազաներ: Այդ տվյալների բազաները թարմացվում են յուրաքանչյուր տարի՝ օգնելով մեզ վերահսկել առկա միտումները ու բացահայտել համայնքների հրատապ խնդիրներն ու կարիքները: Վերոնշյալ նախաձեռնության արդյունքում ձևավորվող ելակետային տվյալներն ու Գնահատման ուսումնասիրությունների արդյունքները լրացնում են միմյանց և ապահովում առավել ընդգրկուն պատկերացում համայնքի կարիքների և այլ հարցերի, օրինակ՝ սոցիալտնտեսական և կենսամիջոցների պատշաճ գնահատման ցուցանիշ համարվող առկա ենթակառուցվածքների և ընտանի կենդանիների վերաբերյալ:

Համայնքների ներգրավման միջոցառումները կանոնակարգող Ընկերության հիմնական փաստաթղթերից են՝ Սոցիալական քաղաքականությունը, Կայուն զարգացման քաղաքականությունը և Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանը, որոնք սահմանում են տեղական համայնքների հետ փոխադարձ հարաբերությունների ուղեցույցներ ու գործընթացներ և ներառում են սոցիալական պատասխանատվության և թափանցիկության շրջանակներում Ընկերության կողմից իրականացվող միջոցառումներ:

2022 թ-ին կազմված Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանում ներկայացված են շահառուների քարտեզը/ցանկն ու հանրային միջոցառումների և համայնքի հետ փոխհարաբերությունների վերաբերյալ էլեկտրոնային գրանցումները: Չնայած պաշտոնական համայնքային խորհրդատվական կոմիտեների բացակայության՝ մասնագիտացված սոցիալական թիմի կողմից, համայնքապետարանների, համայնքի ղեկավարների և խոցելի խմբերի համար, պարբերաբար կազմակերպվում են հրատապ հարցերի և խնդիրների քննարկումներ:

2022 թ-ի աշնան սկզբից, մենք կիրառում ենք նաև պաշտոնական բողոքների դիտարկման ընթացակարգը, որի միջոցով իրականացվում է բոլոր զանգատների և բողոքների (այդ թվում՝ դրանց մանրամասների, աշխարհագրության և ԶՊՄԿ-ի կողմից ձեռնարկված գործողությունների) էլեկտրոնային գրանցում, հաշվառում և արդյունքների արձանագրում:

GRI 413-2

Մեր գործողությունները, այդ թվում նաև՝ տեղական համայնքների վրա հնարավոր զգալի ազդեցություն ունեցող միջոցառումները, մանրամասն ներկայացված են առկա Սոցիալական ու բնապահպանական ազդեցությունների գնահատման զեկույցում, որի թարմացումն ակնկալվում է 2024-2025 թթ-ին: Այս փաստաթուղթը՝ Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանի, ելակետային տվյալների և այլ աղբյուրների հետ մեկտեղ, ներկայացնում են միջոցառումների անցկացման տեղավայրերը, ակնկալվող հիմնական ազդեցություններն ու տեղական համայնքների խոցելիության և ռիսկային գործոնները: Թարմացված ԲՍԱԳ-ում կներկայացվեն տեղական համայնքների հետ կապված տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինների գործունեության որակն ու ուժեղ կողմերը, բնական ռեսուրսների օգտագործման, ազդեցությունների ուժգնության, տևողության, կառավարելիության և մասշտաբի վերաբերյալ տվյալներ: Այս մոտեցումը թույլ է տալիս ԶՊՄԿ-ին վերահսկել տեղական համայնքների վրա ընկերության գործունեությամբ պայմանավորված դրական ու բացասական ազդեցությունները:

2023 Թ-ԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՄԵՐ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ԵՆ՝

Սոցիալական ներդրումների ուղղվածության փոփոխություն.

Ընկերությունն աշխատում է ուղղել և կենտրոնացնել իր սոցիալական ներդրումները կայուն և անկախ համայնքային զարգացման միջոցառումներին:

Պետական զարգացման պլանների հետ համապատասխանեցում.

ԶՊՄԿ-ը համապատասխանեցնում է իր նախագծերը ենթակառուցվածքների, սպորտի և կրթության ոլորտներում առկա տեղական ինքնակառավարման և պետական ծրագրերին:

Տեղական զարգացման կարևորում.

մեծ ուշադրություն է դարձվում Կապանի և Քաջարանի տարածաշրջանների զարգացմանն ու տեղական ենթակառուցվածքների և ծառայությունների խթանմանը:

ԲՍԿ և անվտանգության թեմաներով վերապատրաստման դասընթացներ և սեմինարներ.

ԶՊՄԿ-ը կազմակերպել է բազմաթիվ ներածական և այլ դասընթացներ՝ ներառելով մոտ 625 մասնակից: Թեմաներից մեկը՝ «Վերամշակման տարբերակներ», ներկայացնում էր թափոնների տեսակներն ու դրանց կառավարման ուղիները: Ներկայացվել էին պլաստիկ նյութերով աղտոտման վերաբերյալ վիճակագրական տվյալներ, խնդրի լրջությունն ու հնարավոր հետևանքները: Պլաստիկ նյութերի բացասական ազդեցություններին ծանոթացնելուց հետո, մասնակիցներին դասընթացի վերջում տրամադրվել էին կտորից տոպրակներ՝ պլաստիկ տոպրակներ փոխարինելու նպատակով:

Բողոքների դիտարկման ընթացակարգի շարունակական կիրառում.

համայնքի խնդիրներին ու մտահոգություններին պատշաճ կերպով արձագանքելու նպատակով ակտիվորեն կիրառվում և անընդհատ բարելավվում է Բողոքների դիտարկման ընթացակարգը:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

SASB EM-MM-210A.1, SASB EM-MM-210A.2, SASB EM-MM-210A.3, GRI 2-23, GRI 2-24

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՏՇԱՃ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ, ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱՌՈՒՄ Է ՀԵՏԵՎԱԼ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՆ ՈՒ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ՝

Իրավապաշտպան գործունեություն

Մարդու իրավունքների պաշտպանության մեր մոտեցումը սկիզբ է առնում և ամրագրված է Աշխատանքի միջազգային կազմակերպության՝ Աշխատանքում հիմնարար սկզբունքների և իրավունքների հայտարարագրում, որը նախատեսում է միավորումների ստեղծման ազատություն, պարտադրված կամ մանկական աշխատուժի կիրառման արգելք և արդարացի վարձատրության սկզբունք, ինչպես նաև բացառում է ամեն տեսակի խտրականություն: Մենք առաջնորդվում ենք նաև ՄԱԿ-ի՝ Մարդու և աշխատանքային իրավունքների ուղենշային սկզբունքներով՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով համալիր իրավական ստուգման անհրաժեշտությանը: Անվտանգության և մարդու իրավունքների վերաբերյալ կամավոր սկզբունքների համաձայն՝ մենք իրականացնում ենք մարդու իրավունքների ապահովմանն ուղղված անվտանգության գործընթացների կառավարում:

Համապարփակ համալիր ստուգում

Ընկերության կողմից իրականացվող համալիր ստուգումը ներառում է գործունեության բոլոր փուլերը՝ հանքի շահագործումից առաջ, ընթացքում և հետո: Մենք ամենայն ուշադրությամբ ուսումնասիրում և հաշվի ենք առնում տեղական ու տարածաշրջանային միջավայրն ու իրավիճակը՝ համապատասխանեցնելով մեր գործողությունները առկա մշակութային և իրավիճակային գործոններին:

Հակամարտության տարածքներում իրականացվող գործունեություն

Հակամարտության գոտիներում կամ բնիկ բնակչության հողատարածքների սահմաններում որևէ հաստատված կամ հավանական պաշարներ առկա չեն:


Կառավարում և համապատասխանություն

Մեր կառավարման կառույցներն ապահովում են մարդու իրավունքների պատշաճ պահպանություն, իսկ պատշաճ շրջահայացության քաղաքականություններն ամրագրված են մեր ընկերության կորպորատիվ մշակույթում և ամենօրյա գործողություններում:

Համագործակցություն բիզնես գործընկերների հետ

Բիզնես էթիկայի չափանիշներով առաջնորդվելու մեր հանձնառությունը տարածվում է մեր բոլոր գործընկերների վրա: Մենք սերտորեն համագործակցում ենք կապալառուների, մատակարարների և գործընկերների հետ՝ ապահովելով նրանց կողմից վերոնշյալ չափանիշների որդեգրումն ու կատարումը: Անհրաժեշտության դեպքում մենք համապատասխանեցնում ենք կիրառվող մոտեցումները բիզնես էթիկայի մեր հանձնառություններին:







ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄ

SASB EM-MM-210B.1, GRI 408-1

Ընկերությունը չի հանդուրժում անչափահասների աշխատուժի ներգրավումը գործունեության որևէ ոլորտում կամ բիզնես հարաբերությունների շրջանակում: Բացի այդ, մեր բոլոր մատակարարներից ու գործընկերներից ևս մենք ակնկալում ենք, ինչպես նաև պայմանագրային պարտավորությունների ու ստուգումների միջոցով ապահովում ենք անչափահասների աշխատանքի հանդեպ զրոյական հանդուրժողականություն:

Զբաղվածության խստապահանջ ռազմավարություն կիրառելու և մատակարարների մանրակրկիտ ստուգում անցկացնելու միջոցով, Ընկերությունը զերծ է և չի իրականացնում որևէ գործառույթ, ինչպես նաև չի համագործակցում որևէ մատակարարի հետ, որոնք դասվում են անչափահասների աշխատանքի ներգրավման հետ կապված ռիսկային խմբում: Հայաստանում գործող բոլոր ընկերություններն ու մատակարարները ենթարկվում են անչափահասների աշխատանքի կիրառումն արգելող ազգային օրենքներին՝ դրանով իսկ նվազեցնելով հնարավոր ռիսկերը: Բոլոր գործառնական տեղամասերն ու մատակարարները պարբերաբար ենթարկվում են ստուգումների՝ երեխաների աշխատանքի կիրառումն արգելող իրավական չափանիշների համապատասխանությունն ապահովելու նպատակով:

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՄ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԵՄ ԽԻՍՏ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄ

SASB EM-MM-210B.1, GRI 409-1

Մեր կողմից իրականացված ռիսկերի մանրակրկիտ վերլուծության արդյունքում պարզվել է, որ ոչ Ընկերությունը, ոչ էլ Ընկերության ուղղակի մատակարարներից որևէ մեկը ներառված չեն պարտադրված կամ հարկադրված աշխատանքի կիրառման ռիսկի խմբում: Բոլոր գործառնություններն իրականացվում են պարտադրված կամ հարկադրված աշխատանքն արգելող օրենքների շրջանակներում, որոնց պահանջների կատարումը վերահսկվում է կանոնավոր ստուգումների և աուդիտների միջոցով:

Մշտապես մնալով աչալուրջ՝ մենք խստորեն հետևում ենք նոր աշխատակիցների համար սահմանված ընթացակարգերին և իրականացնում ենք մատակարարների մանրակրկիտ ստուգում՝ դրանով իսկ ապահովելով զբաղվածության կամավորության սկզբունքն ու համապատասխանությունը մարդու իրավունքներին ու աշխատանքային օրենքների ամենախիստ պահանջներին:

ՈՉ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՌՈՒՄ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

SASB EM-MM-210B.2

Մենք պարբերաբար վերլուծում ենք ոչ տեխնիկական պատճառներով պայմանավորված հանքի աշխատանքի խափանման դեպքերը, ուշադրության կենտրոնում պահելով տարատեսակ հարցեր, որոնցից են մասնավորապես՝ համայնքում առկա բողոքներն ու դժգոհությունները, տեղական ռեսուրսների առկայությունն ու զարգացումը, համապատասխան ենթակառուցվածքների հասանելիությունը, համայնքի գործողություններն ու հողօգտագործման հետ կապված մարտահրավերները: Նշյալ խնդիրները հնարավորինս շուտ լուծելու համար մշակվում են ռազմավարական պլաններ, որոնք համայնքի զարգացման ու ներգրավման համար ապահովում են տարբեր հնարավորություններ:

Հաշվետու ժամանակահատվածում, ոչ տեխնիկական պատճառներով հանքի փակման որևէ փորձ չի արձանագրվել: Մենք ակտիվորեն համագործակցում ենք իրավասու մարմինների հետ՝ անհրաժեշտ թույլտվությունների ստացման հետ կապված ուշացումները կանխելու համար:

Համայնքի բողոքներով կամ քաղաքական անկայունությամբ պայմանավորված հանքի աշխատանքի խափանումներ ևս չեն արձանագրվել: Համայնքների ներգրավմանն ուղղված ընկերության ռազմավարությունների ընդլայնման շնորհիվ, մենք կարողանում ենք պատշաճ կերպով արձագանքել տեղական համայնքների կարիքներին և մեղմել հնարավոր բացասական հետևանքները: Ընկերության ռիսկի կառավարման թիմը շարունակում է ուշադիր վերահսկել իրավիճակը, ըստ անհրաժեշտության կիրառելով համապատասխան պլաններ:





08

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆԴԻՍԱՆԱԼՈՎ ԵՐԿՐԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԸ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ Է ԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ՊՂՆՁԻ և ՄՈԼԻԲԴԵՆԻ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԸ՝ ՄԵՆՔ ՄԵԾ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՆՔ ԴԱՐՁՆՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՄԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆԸ, ՁԳՏԵԼՈՎ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՀԱՍՑՆԵԼ ԱՅՆ ՄԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՓՈՒԼՈՒՄ:



2023թ-ին Բնապահպանության բաժնի կանաչապատման թիմը տնկել և խնամել է

16,279

ծառ, ծաղիկ և թուփ

2023թ-ին ռեկուլտիվացման աշխատանքներ են իրականացվել Արծվանիկի պոչամբարին հարակից 5.2 հեկտար տարածքում, իսկ ավելի մեծ՝

40 **հեկտար տարածքում**

կազմակերպվել են վերականգնման աշխատանքներ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՄԵՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՀԱՍՑՆԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Կայուն զարգացման գծով տնօրենը վերահսկում է մեր բնապահպանական միջոցառումները և ղեկավարում է Ընկերության Բնապահպանության բաժինը: Այս բաժինը զբաղվում է ԶՊՄԿ-ի ամենօրյա բնապահպանական հարցերով և մարտահրավերներով, վերահսկում/ մշտադիտարկում է Ընկերության գործունեության համապատասխանությունը տեղական օրենսդրական պահանջներին և իրականացնում է Ընկերության՝ միջազգային բնապահպանական չափանիշները որդեգրելու ռազմավարությունը կանոնավոր ներքին աուդիտների, ռիսկերի գնահատման և շարունակական մոնիտորինգի միջոցով:

Ընկերությունը հատուկ կարևորություն է տալիս շահագրգիռ կողմերի, այդ թվում ՝ տեղական համայնքների, կանոնակարգող մարմինների և բնապահպանական կազմակերպությունների հետ փոխգործակցությանը: Նրանց ներդրումն անգնահատելի է մեր բնապահպանական գործունեության շարունակական կատարելագործման և արդյունավետության ապահովման, ինչպես նաև կայուն զարգացման մեր ընդարձակ քաղաքականությանը համապատասխանեցնելու գործում:

Ընկերությունը իր գործունեությունը իրականացնում է 12 Կառավարման պլանների վրա հիմնված Բնապահպանական կառավարման համակարգի համաձայն: Յուրաքանչյուր պլան հասցեագրված է կոնկրետ ոլորտի, ինչպես օրինակ՝ թափոնների, ջրի, հողի, օդի, վտանգավոր նյութերի և կենսաբազմազանության կառավարմանը: Նման համակարգված մոտեցումը երաշխավորում է մեր բնապահպանական պարտականությունների արդյունավետ կառավարումը և ամբողջական ինտեգրումը նորմատիվ իրավական պահանջների և կայուն զարգացման լայնածավալ նպատակների հետ:

SASB EM-MM-160A.1, SASB EM-MM-110A.2

Համաձայն Բնապահպանական կառավարման համակարգի՝ կառավարման մեր պլանները կիրառվում են Ընկերության գործունեության բոլոր փուլերում: Սա ներառում է առաջարկին նախորդող փուլը, երբ ընկերությունը գնահատում է տեղամասի հնարավոր ձեռքբերումը, հետախուզումը, գնահատումը, կառուցապատումը, արտադրությունը, փակումը, շահագործումից հանումը և վերականգնումը: Այս ծրագրերն արտացոլում են մեր ներքին ստանդարտները, որոնք մշակվել են երրորդ կողմ հանդիսացող կազմակերպության հետ համագործակցության արդյունքում՝ ապահովելով հետևողական և խիստ մոտեցում բնապահպանական պարտականությունների կառավարման հարցում մեր գործունեության ողջ ընթացքում:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻՆ ՀԵՏԵՎԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Մենք ձգտում ենք մեր գործունեությունը համապատասխանեցնել միջազգայնորեն ընդունված բնապահպանական ստանդարտներին, ինչպիսիք են օրինակ՝ ՄՖԿ Կատարողական ստանդարտները: Մենք արդեն ստացել ենք ISO 14001 բնապահպանական կառավարման համակարգի հավաստագիր, ինչը վերահաստատում է միջազգային ստանդարտներին հետևելու մեր պարտավորությունը: Բացի այդ, նախատեսում ենք վարկանիշ ձեռք բերել բնապահպանական, սոցիալական և կառավարման (ESG) համաշխարհային հարթակում՝ այդպիսով ամրապնդելով շրջակա միջավայրի հանդեպ պատասխանատու և անվտանգ հանքարդյունաբերություն զարգացնելու մեր հանձնառությունը: Այս նախաձեռնություններն ընդգծում են թափանցիկության բարձրացման, բնապահպանական, սոցիալական և կառավարման (ESG) ոլորտում արդյունավետության բարձրացման, ինչպես նաև կայուն զարգացումը՝ մեր գործունեության բոլոր ասպեկտներում ներառելու մեր հանձնառությունը:

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ

GRI 3-3, SASB EM-MM-110A.2

Շրջակա միջավայրի վրա ազդեցության, ներառյալ ջերմոցային գազերի արտանետումների վերաբերյալ մոնիտորինգ իրականացնելու և հաշվետվություններ ներկայացնելու մեր հանձնառությունն արտացոլում է մեր նվիրվածությունը երկարաժամկետ պատասխանատու բնապահպանական կառավարմանը և ամրապնդում է հանքարդյունաբերության ոլորտում պատասխանատու առաջատար ընկերության մեր դիրքերը:

Մեր մոտեցումը կլիմայի փոփոխության ազդեցությունների կառավարմանը՝ պարբերաբար վերանայվում է մեր ցուցանիշների ուսումնասիրության, ջերմոցային գազերի արտանետումների ստուգումների և ոլորտի ստանդարտների հետ համեմատության միջոցով: Այս մոտեցումը թույլ է տալիս հավատարիմ մնալ մեր ռազմավարությանը և անհրաժեշտ փոփոխություններ և բարելավումներ կատարել՝ բարձրացնելով շահագրգիռ կողմերի վստահությունը կլիմայի փոփոխություններին հարմարվելու և դիմակայելու մեր ջանքերի նկատմամբ: Մենք ջերմոցային գազերի արտանետումների տարեկան ներքին աուդիտներ ենք իրականացնում և հաճախ անկախ երրորդ կողմ ենք ներգրավում այս գործընթացի թափանցիկությունն ու ճշգրտությունն ապահովելու համար:

2023 թվականին մենք իրականացրել ենք ջերմոցային գազերի արտանետումները նվազեցնելու մի քանի նախաձեռնություններ, ինչպիսիք են՝ անցումը էներգաարդյունավետ սարքավորումների, էներգիայի սպառման օպտիմալացումը և վերականգնվող էներգիայից կախվածության բարձրացումը: Այս ռազմավարությունը թերևս լրամշակման կարիք ունի, քանի որ դեռևս շոշափելի արդյունքներ չի տվել, ինչը տեսանելի է մեր կողմից: Սակայն, մեր սահմանված նշաձողերին հասնելու համար պատրաստ ենք ջանքեր ներդնել երկարաժամկետ ռազմավարության մեջ:

Կլիմայի փոփոխությանը դիմակայելու և ջերմոցային գազերի արտանետումները նվազեցնելու մեր ջանքերն առավել արդյունավետ դարձնելու նպատակով, բարելավել ենք կորպորատիվ կառավարման մեր համակարգը, մասնավորապես.

- Ընդլայնում ենք մեր Բնապահպանական բաժինը և Կայուն զարգացման գծով տնօրինության թիմը՝ կլիմայի փոփոխության հետ կապված պարտականությունները, կազմակերպության ամբողջ մակարդակով ինտեգրելու համար:
- Սահմանել ենք ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման առավել հավակնոտ թիրախներ և ներդնում ենք կլիմայի փոփոխությանը հարմարվելու և դիմակայելու ռազմավարություններ,
- Առավել մեծ ուշադրություն ենք դարձնում կայուն զարգացման վերաբերյալ հաշվետվողականությանը և ձգտում ենք համապատասխանել կլիմայի փոփոխության միջազգային շրջանակներին:

Շրջակա միջավայրի համար անվտանգ փոխադրումների, էներգաարդյունավետության ապահովման և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման նպատակով, մշակել ենք Բնապահպանական քաղաքականություն, որը նախատեսվում է հաստատել 2024թ.: Կայուն զարգացման մեր ներկայիս ռազմավարությունը և Կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերի գնահատման հաշվետվությունն արտացոլում են մեր գործունեության և բիզնես պլանավորման գործում կլիմայի փոփոխության ազդեցությունները հաշվի առնելու մեր հետագա ծրագրերը, ինչը համահունչ է Կլիմայի հետ կապված ֆինանսական բացահայտումների աշխատանքային խմբի (TCFD) ուղեցույցներին:

Հաջորդ՝ 2024 թ-ին ընդառաջ, մենք հավատարիմ ենք մնում ջերմոցային գազերի արտանետումների կրճատման և կլիմայի փոփոխությանը դիմակայելու մեր հանձնառությանը՝ ընդլայնելով վերականգնվող էներգիայի նախագծերը, էներգաարդյունավետության միջոցառումները և հաշվի առնելով կլիմայական ռիսկերը բիզնես ռազմավարություններում:

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ. ԱԾԽԱԾՆԻ ՀԵՏՔԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԻՆ ԴԻՄԱԿԱՅԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ

ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Մենք գիտակցում ենք, որ արտանետումների կրճատմանն ուղղված մեր քաղաքականությունն ու ամենօրյա գործողությունները հետագա զարգացման կարիք ունեն արդյունքներ ապահովելու համար, հետևաբար ձգտում ենք կրկնապատկել մեր ջանքերն այդ ուղղությամբ՝ իրականացնելով մի շարք միջոցառումներ.

Իրականացված կանխարգելիչ միջոցառումներ

Շահագործման աշխատանքների արդյունավետություն.

գործընթացների շարունակական գնահատում և բարելավում՝ թափոնների առաջացումը նվազագույնի հասցնելու և էներգիայի օգտագործումն օպտիմալացնելու նպատակով:

Ռեսուրսների կառավարում.

թափոնների վերամշակման և հումքի արդյունավետ օգտագործման խթանում:

Մեղմացման միջոցառումներ

Վերականգնվող էներգիայի օգտագործում.

վերականգնվող էներգիայի օգտագործմանը անցում կատարելու նախաձեռնություն՝ էներգակիրներից կախվածությունը նվազեցնելու նպատակով:

Ածխածնի կլանման և պահեստավորման տեխնոլոգիաներ.

ներդրում ածխածնի արտանետումների կլանման և պահեստավորման տեխնոլոգիաներում:

Կլիմայի փոփոխության հետևանքներին հարմարվողականության նախաձեռնություններ

Ռիսկերի կառավարում.

կլիմայի հավանական ռիսկերը գնահատելու և ենթակառուցվածքը համապատասխանաբար ադապտացնելու նպատակով՝ փորձագետների ներգրավում:

Համայքների ներգրավում.

համագործակցություն տեղական համայնքների հետ կլիմայի փոփոխության նկատմամբ կայուն և հարմարվող պայմաններ ստեղծելու համար:

Աշխատողների իրազեկվածություն և վերապատրաստում.

սեմինարների, վերապատրաստման դասընթացների և իրազեկման ծրագրերի պարբերաբար իրականացում՝ աշխատակիցների տեղեկացվածությունը և ներգրավվածությունը կայուն զարգացման միջոցառումներում ապահովելու համար:

ՄԵՆՔ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՆՔ ՆԱԽԱԳԾԵՐԸ և ԴՐԱՆՑ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ՝ ՀԱՄՈԶՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՈՐ ՆՇՎԱԾ ԲՈԼՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԲԵՐԵԼ ՇՈՇԱՓԵԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ և ՀԱՐՄԱՐՎԵԼ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻՆ:

ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2023թ. մենք իրականացրեցինք Կլիմայի փոփոխության ռիսկերի գնահատում՝ կլիմայի փոփոխության հնարավոր ազդեցությունը, մեր գործունեության վրա բացահայտելու և գնահատելու համար: Այս գործընթացի ընթացքում հայտնաբերվել են կենսական ռիսկեր, ներառյալ եղանակային ծայրահեղ վատ պայմանները և դրանց հնարավոր ազդեցությունը՝ աշխատանքի անխափան ընթացքի և ենթակառուցվածքների ամբողջականության վրա: 2022 թվականին գնահատված ռիսկերի արդյունքում, որոնք արդիական են նաև 2023 թվականի համար, ընդհանուր առմամբ հայտնաբերվել է 18 անցումային և ֆիզիկական ռիսկ: **Ստորև ներկայացված են 4 հիմնական ռիսկերը.**

Ջրային ռեսուրսների սակավություն.

կլիմայի փոփոխության հետևանքով Ողջի գետի հոսքի նվազումը ռիսկ է ներկայացնում արտադրական գործընթացների համար:

Ջրօգտագործման հետ կապված դատական գործընթացներ.


ջրօգտագործման հետ կապված հնարավոր կոնֆլիկտներ տեղական համայնքների հետ:


Գնորդների հետ կապված ռիսկ.

գնորդների՝ դեկարբոնիզացիայի (ածխածնի արտանետումների կրճատման) ռազմավարությունները մեծացնում են ջերմոցային գազերի ավելի քիչ արտանետմամբ արտադրանքի պահանջարկը: Սա ստեղծում է գնորդին կորցնելու ռիսկ՝ ածխածնի հետքի նվազեցման նրանց թիրախներին չհամապատասխանելու պարագայում:

Բնապահպանական, սոցիալական և կառավարչական (ԲՍԿ/ESG) ոլորտի խիստ պահանջներով պայմանավորված ֆինանսավորման ռիսկ.

բնապահպանական, սոցիալական և կառավարման ոլորտում ցածր վարկանիշը առաջանցում է ֆինանսավորման հետ կապված խնդիրներ:






Կլիմայի փոփոխության հետ կապված առաջնային ֆիզիկական ռիսկը մեր գործունեության համար, դա կտրուկ եղանակային պայմանների հաճախականության և ինտենսիվության ավելացումն է: Փոթորիկներ, հեղեղումներ, տապ, այդ ամենը սպառնում է մեր ենթակառուցվածքների և մատակարարման շղթայի բնականոն աշխատանքին, ինչն էլ դիմակայման միջոցառումների անհապաղ անհրաժեշտություն է առաջացրել:

ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

GRI 3-3, GRI 305-1, GRI 305-2, GRI 305-3

2023 թվականին ջերմոցային գազերի արտանետումների ծավալը հասել է 1,070,988 տոննա CO_2-ին համարժեք մակարդակի: Շրջանակ 1-ի ուղղակի արտանետումները տրանսպորտային միջոցների վառելիքի, հիմնականում դիզելային վառելիքի[13] այրման արդյունք են: Արտանետումների մեծ մասը՝ ընդհանուր առմամբ 767,857 տոննա CO_2-ին համարժեք, դասակարգվել է որպես անուղղակի (Շրջանակ 3) արտանետումներ: Հատկանշական է, որ իրացվող արտադրանքի վերամշակման հետ կապված ջերմոցային գազերի արտանետումները կազմել են ընդհանուր արտանետումների մոտավորապես 25% — ը:

ԾԱՎԱԼՆԵՐՆ ԸՍՏ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ (ՏՈՆՆԱ CO_2-ԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ)




[13] Վառելիքի այրման՝ անշարժ աղբյուրներից (սարքավորումներ և ջեռուցման համակարգ), ջերմոցային գազերի արտանետումների ընդհանուր ծավալը կազմել է 11,570 տոննա CO_2-ին համարժեք: Վառելիքի այրման՝ շարժական աղբյուրներից, ջերմոցային գազերի արտանետումների ընդհանուր ծավալը կազմել է 64,647 տոննա CO_2-ին համարժեք, որից օգտագործված դիզելային վառելիքից ջերմոցային գազերի արտանետումները կազմել են 62,080 տոննա CO_2-ին համարժեք, իսկ օգտագործված բենզինից՝ 2,567 տոննա CO_2-ին համարժեք:

GRI 305-1, SASB EM-MM-110A.1

ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ՈՒՂՂԱԿԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԸ (ՏՈՆՆԱ CO_2-ԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ)


■ Մեթան (CH_4) ■ Ածխածնի երկօքսիդ (CO_2) ■ Ազոտի օքսիդ (N_2O)



GRI 305-2

Ջերմոցային գազերի անուղղակի (Շրջանակ 2) արտանետումների ընդհանուր ծավալը (կախված տեղակայման վայրից և շուկայից[14]) 2023 թվականին կազմել է 226,913 տոննա CO_2-ին համարժեք, ինչը 3.51%-ով ավելի է 2022 թվականի ցուցանիշից:

ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ (ՇՐՋԱՆԱԿ 2) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՎԱԼԸ (ՏՈՆՆԱ CO_2-ԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ)[15]



[14] Տեղակայման վայրից կախված Շրջանակ 2 արտանետումների համար էլեկտրացանցի էլեկտրաէներգիայի արտանետումների գործակիցները վերցվել են ՄԱՄ ստանդարտացված ելակետային տվյալներից ASB0038-2021՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրացանցերում արտանետումների գործակցից: Արտանետումների գործակիցը էներգետիկ ոլորտում 0.43596 է: Շուկայից կախված Շրջանակ 2 արտանետումների ծավալը որոշելու համար օգտագործվել է մատակարարի կողմից տրամադրված արտանետումների գործակիցը:

[15] Հաշվարկում ներառված գազերը (օրինակ՝ CO_2, CH_4, N_2O, HFC, PFC, SF_6, NF_3) ամբողջությամբ չեն հաշվարկվել տվյալների առկայության հետ կապված խնդիրների պատճառով:

GRI 305-3

Ջերմոցային գազերի այլ անուղղակի արտանետումների ընդհանուր ծավալը (Շրջանակ 3) 2023 թվականին կազմել է 767,857 տոննա CO_2-ին համարժեք, ինչը 2022 թվականի ցուցանիշից 4.53%-ով պակաս է:

ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ 3 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԸ (ՏՈՆՆԱ CO_2-ԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ)

Ցուցանիշ	2022 թ.	2023 թ.	Տոկոսային փոփոխություն
Կատեգորիա 1. Գնված ապրանքներ և ծառայություններ	123,989	121,907[16]	-1.68
Կատեգորիա 2. Կապիտալ ապրանքներ			
Կատեգորիա 3. Վառելիքի և էներգետիկայի հետ կապված գործունեություն, որը ներառված չէ Շրջանակ 1-ում կամ Շրջանակ 2-ում	51,492	91,930[17]	78.53
Կատեգորիա 4. Արդյունահանված հումքի տեղափոխում և բաշխում	54,266	29,317	-45.98
Կատեգորիա 5. Շահագործման ընթացքում առաջացած թափոններ	-	-	-
Կատեգորիա 6. Գործուղում	185	252	36.22
Կատեգորիա 7. Աշխատողների ամենօրյա ուղևորություններ աշխատանքի և վերադարձ տուն	35,121	31,086	-11.49
Կատեգորիա 9. Վերամշակված արտադրանքի տեղափոխում և բաշխում	132,996	123,544	-7.11
Կատեգորիա 10. Իրացված արտադրանքի վերամշակում	406,279	369,821[18]	-8.97
Ջերմոցային գազերի այլ անուղղակի արտանետումների (Շրջանակ 3) ընդհանուր ծավալը	**804,328**	**767,857**	**-4.53**

[16] Այս արժեքի համար 74,572 տ CO_2-ին համարժեք ցուցանիշը հաշվարկվել է գործունեության հիման վրա հաշվարկման մեթոդի համաձայն, իսկ 47,335 տ CO_2-ին համարժեք ցուցանիշը՝ ծախսերի վրա հիմնված մեթոդի համաձայն:
[17] Արտանետումների այս ծավալները ներառում են 1,501 տ CO_2-ին համարժեք բնական գազի (բացառությամբ հեղուկացված բնական գազի), 75,978 տ CO_2-ին համարժեք էլեկտրաէներգիայի և 14,451 տ CO_2-ին համարժեք դիզելային վառելիքի և բենզինի էներգակիրների համար:
[18] Սա ներառում է 9,311 տ CO_2-ին համարժեք FeMo արտադրություն և 360,510 տ CO_2-ին համարժեք պղնձի արտադրություն:




ԷՆԵՐԳԱԿԻՐՆԵՐ, 2023 Թ.

■ Առաջնային էներգակիրներ (վառելիք) ■ Երկրորդային էներգակիրներ

Էներգակիրների ընդհանուր քանակը

4,896,576


Գիգաջոուլ



Էներգակիրների ընդհանուր քանակը

12.6

ԳՋ / արտադրված մեկ տոննա խտանյութի համար



ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱԴՐՎԱԾ ԽՏԱՆՅՈՒԹԻ ՄԵԿ ՏՈՆՆԱՅԻ, ՎԱՃԱՌՔԻ ԾԱՎԱԼԻ և ՄԵԿ ԱՆՁԻ ՀԱՇՎՈՎ, 2023 Թ.

	ՋԳ ինտենսիվություն		
Ցուցանիշ	Յուրաքանչյուր տոննայի համար (տ CO_2-ին համարժեք/տ)	Վաճառքի ծավալների հաշվարկով (տ CO_2-ին համարժեք/ մլն եվրո)	Մեկ անձի հաշվարկով (տ CO_2-ին համարժեք / աշխատակից)
Շրջանակ 1	0.33	104	16
Շրջանակ 2	0.97	308	49
Շրջանակ 3	3.8	1,250	197
Շրջանակ 1 + Շրջանակ 2	1.3	412	65
Շրջանակ 1 + Շրջանակ 2 + Շրջանակ 3	5.1	1,662	262

ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԸ (ԱԾԽԱԾՆԻ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅՈՒՆԸ) ԵԿԱՄՏԻ ՀԱՇՎԱՐԿՈՎ

Ցուցանիշ	Չափման միավոր	2022 թ.	2023 թ.	Տոկոսային փոփոխություն
Ընդհանուր ՋԳ արտանետումները (Շրջանակ 1 և 2)	տոննա CO_2 -ին համարժեք	290,853	303,131	4.22
ՋԳ տեսակարար արտանետումները (Շրջանակ 1 և 2)	տոննա CO_2 -ին համարժեք/ հազար դրամ	0.000812	0.000971	19.52
Եկամուտ	Հազար դրամ	358,163,585	312,305,560	-12.80



Ջուրը արտադրության համար անհրաժեշտ ամենակարևոր տարրերից մեկն է, հետևապես սակավաջրությունը ազդել է մեր արտադրության մակարդակի վրա՝ ստիպելով աշխատել համեմատաբար ավելի ցածր արտադրողականությամբ, և այս ազդեցությունը ջերմոցային գազերի արտանետումների վրա տեսանելի է: Ջերմոցային գազերի արտանետումը փոխկապակցված է վերջինիս հետ, քանի որ Հարստացման գործարանը ամենամեծ արտանետողն է: Ջրային ռեսուրսների հասանելիության հետ կապված արտադրության ծավալների հնարավոր աճը 2024 թվականին՝ 2022 և 2023 թվականների համեմատ, կարող է հանգեցնել ջերմոցային գազերի արտանետումների ավելացման: Տարեկան ցուցանիշների դինամիկան ցույց է տալիս, որ 2024 թվականին մենք կարող ենք աշխատել ամբողջ հզորությամբ:

Մեր բնապահպանական գործունեությունը ներառում է Ընկերության գործունեության տարածքի և ազդակիր բնակավայրերի կանաչապատման լայնածավալ ծրագրեր, որոնք ուղղված են CO_2 արտանետումների կրճատմանը:

2023 թ. բնապահպանական բաժնի կանաչապատման մասնագետները տնկել և խնամել են 16,279 միավոր ծառ, ծաղիկ և թուփ: 2024 թ. տարեսկզբի դրությամբ, մոնիտորինգը ցույց է տվել, որ տնկված բույսերի և ծառերի կողմից կլանված CO_2-ի ընդհանուր քանակությունը կազմում է 3,502.76 կգ, ինչը ներկայացնում է արտանետված ընդհանուր CO_2-ի[19] 0.000327059%-ի չեզոքացում :

Ընկերության կողմից խնամվող և աճեցվող բույսերից՝ ածխաթթու գազի կլանման տեսանկյունից ամենաարդյունավետը ճանաչվել են հետևյալ ծառերը. կատալպա փոքր, կատալպա բարձր, սովորական բարդի և սոսի, որոնց՝ ածխաթթու գազի կլանման ունակությունը համապատասխանաբար կազմել է 521.42 կգ, 1,261.29 կգ, 911.85 կգ և 288.72 կգ:

[19] Արտանետված CO_2-ը հաշվարկվում է որպես Շրջանակ 1 + Շրջանակ 2 (շուկայից կախված) + Շրջանակ 3 արտանետում և հավասար է տարեկան 1,070,988 տոննա CO_2-ին համարժեք:

ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍՊԱՌՈՒՄ և ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՕՊՏԻՄԱԼԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

GRI 3-3

Էներգիայի կառավարման ռազմավարության շրջանակներում Ընկերությունը վերահսկում և կառավարում է սպառումը բոլոր օբյեկտներում: Կանոնավոր էներգետիկ աուդիտները և արդյունավետության ցուցանիշներն օգնում են մեզ բացահայտել բարելավման կարիք ունեցող ոլորտները:

Տարվա ընթացքում մենք թարմացնում ենք էներգախնայողության ապահովմանն ուղղված նախաձեռնությունները, այդ թվում՝ սարքավորումների արդիականացումը, գործընթացների օպտիմալացումը և էներգիայի օգտագործման մոնիտորինգի ու վերահսկման բարելավման համակարգերի ներդրումը:

2024 թվականի մեր նպատակներից են էներգիայի սպառման կրճատումը, վերականգնվող էներգիայի օգտագործման ավելացումը և ընդհանուր արդյունավետության բարձրացումը: Հիմնական գործողությունները ուղղված կլինեն մեր էներգասպառման մոնիտորինգի համակարգի զարգացմանը, էներգախնայող նոր տեխնոլոգիաների ներդրմանը և էներգաարդյունավետության ոլորտում անձնակազմի ուսուցման ծրագրերի բարելավմանը:

Այս նախաձեռնությունները համատեղում են տեխնոլոգիաների կատարելագործումն ու շահագրգիռ կողմերի շարունակական ներգրավումը՝ նպատակ ունենալով նվազեցնել գործառնական ծախսերը, նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունը և համապատասխանել կայուն զարգացման համաշխարհային չափանիշներին:

GRI 302-1, SASB EM-MM-130A.1

Ընկերության էներգիայի հիմնական աղբյուրը էլեկտրաէներգիան է: Մենք էլեկտրաէներգիա ենք գնում Հայկական Ատոմային Էլեկտրակայանից և ազատ շուկայից՝ օգտվելով համեմատաբար ցածր գներից: Այսպիսով, մեր սպառած էներգիայի 62%-ը ստացվում է էլեկտրական ցանցերից:

Դիզելային վառելիքը հիմնականում օգտագործվում է մեքենաների, տեխնիկայի և ծանր բեռնատարների (բացահանքի) համար: Բենզինը հիմնականում օգտագործվում է Ընկերության արտադրամասերում և տարածքներում ուղևորատար տրանսպորտային միջոցների համար:

ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍՊԱՌՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՎԱԼԸ (ԳԻԳԱՋՈՈՒԼ)

Ցուցանիշ	2022 թ.	2023 թ.	Տոկոսային փոփոխություն
Դիզելային վառելիք	803,171	882,594	9.89
Բենզին	37,281	38,264	2.64
Բնական գազ	249,160	228,240	-8.40
Գնված կամ ստացված էլեկտրաէներգիա[20]	1,810,278	1,908,113	5.40
Չվերականգնվող աղբյուրներից սպառման ընդհանուր ծավալը[21]	**2,899,890**	**3,057,211**	**5.43**
Վաճառված էլեկտրաէներգիա	-	34,375[22]	-
Ընդհանուր էներգիայի սպառումը	**2,899,890**	**3,022,836**	**4.24**

[20] Հիմնականում ստացվում է Հայկական Ատոմային Էլեկտրակայանից:

[21] 2022 և 2023 թվականներին ԶՊՄԿ-ն վերականգնվող էներգիայի որևէ աղբյուր չի օգտագործել:

[22] Ընկերությունն ունի էներգիայի կուտակման հնարավորություններ, որոնք թույլ են տալիս կուտակել էլեկտրաէներգիայի ավելցուկը և վաճառել այն «Ագարակ» ցանցին:



GRI 302-3

Էներգիայի սպառման գործակիցը հաշվարկվել է ԶՊՄԿ-ի արտադրական գործընթացների էներգաարդյունավետության վերաբերյալ ավելի լավ պատկերացում կազմելու նպատակով: Այս գործակիցն օգնում է հետևել և կառավարել էներգիայի սպառումը ստացված պղնձամոլիբդենային խտանյութի արտադրանքի համեմատ:

2023թ-ին էներգասպառման ինտենսիվությունը կազմել է

13.43

ԳՋ/տ

ԷՆԵՐԳԱՍՊԱՌՄԱՆ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԻՄՆՎԱԾ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԽՏԱՆՅՈՒԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ[23]

Ցուցանիշ	Չափման միավոր	2022 թ.	2023 թ.	Տոկոսային փոփոխություն
Ընդհանուր էներգիայի սպառում	ԳՋ	2,899,890	3,022,836	4.24
Էներգասպառման ինտենսիվություն	ԳՋ/տ	10.91	13.43	23.10
Պղնձամոլիբդենային խտանյութ	տոննա	265,655	225,042	-15.29

ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍՊԱՌՄԱՆ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԵԿԱՄՏԻ

Ցուցանիշ	Չափման միավոր	2022 թ.	2023 թ.	Տոկոսային փոփոխություն
Ընդհանուր էներգիայի սպառում	ԳՋ	2,899,890	3,022,836	4.24
Տեսակարար էներգիայի սպառում	ԳՋ/հազար դրամ	0.0081	0.0097	19.55
Եկամուտ[24]	հազար դրամ	358,163,585	312,305,560	-12.80

GRI 302-4

2023 թվականին էներգիայի սպառման ծավալների աճը պայմանավորված էր 2022 թվականի համեմատ արտադրության ծավալների ավելացմամբ: Չնայած դրան, մենք շարունակում ենք վերահսկել և կառավարել էներգիայի օգտագործումը՝ կենտրոնանալով էներգաարդյունավետության վրա: Ընկերությունը շարունակում է հավատարիմ մնալ էներգախնայողության և արդյունավետության նախաձեռնություններին, թեև կարող է ժամանակ պահանջվել ընդհանուր սպառման տվյալների վրա դրանց ազդեցությունն արտացոլելու համար:

[23] Այս հաշվարկի համար տվյալները հավաքվել են ԶՊՄԿ-ի տարբեր ստորաբաժանումներից, ներառյալ Արտադրության և Տեխնիկական սպասարկման բաժինները: Այս հաշվարկների համար օգտագործվող մեթոդաբանությունները և փոխակերպման գործակիցները համապատասխանում են ոլորտի ստանդարտներին և ստուգվել են Ընկերության ներքին աուդիտի թիմի կողմից՝ ճշգրտությունն ու համապատասխանությունն ապահովելու համար:

[24] Ներկայացվում են «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի և «Լեռ-Էքս» ՍՊԸ-ի եկամուտները

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄՈՏԵՑՈՒՄ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ. ՋՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

GRI 3-3, GRI 303-1, GRI 303-2

Ջուրը կարևոր ռեսուրս է մեր հանքարդյունաբերական գործունեության համար՝ սկսած արտադրությունից մինչև կենցաղային օգտագործում: Տարածաշրջանում ջրի պակասը ազդում է մեր արտադրական կարողությունների վրա, ինչը հանգեցնում է նրան, որ մեր Ընկերությունը կարող է չաշխատել ամբողջ հզորությամբ: Գիտակցելով ջրի կարևորությունը՝ մշակել ենք Ջրային ռեսուրսների կառավարման պլան, որը համապատասխանում է տեղական օրենսդրությանը և միջազգային չափանիշներին՝ ապահովելով ջրի արդյունավետ օգտագործում և որակի վերահսկում:


Ընկերության Գլխավոր տնօրենի կողմից հաստատված Պլանը հիմնված է Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի (ՄՖԿ) ստանդարտների և երկրի՝ արդյունաբերության ոլորտը կարգավորող կանոնակարգերի վրա: Բացի այդ, մենք հետևում ենք Շրջակա միջավայրի նախարարության կողմից տրված ջրառի և բացթողման թույլտվությունների պահանջներին, որն ապահովում է ջրային ռեսուրսների պատասխանատու կառավարումը:

Ջրային ռեսուրսների կառավարման գործում մենք հավատարիմ ենք ՄԱԿ-ի ՊՀԳ «Ջրօգտագործման և ջրահեռացման անհատական նորմերին» (Որոշում №. 88/2007/ND-CP), որոնք գործում են մինչև 2027 թվականը: Այս նորմերը սահմանում են ջրահեռացման խիստ պահանջներ, ջրի որակը պաշտպանելու համար՝ հիմնվելով Շրջակա միջավայրի նախարարության կողմից սահմանված աղտոտիչների թույլատրելի առավելագույն սահմանաչափերի վրա:

Կայուն զարգացման գծով տնօրենը և Բնապահպանական բաժինը վերահսկում են ջրային ռեսուրսների կառավարման մեր միջոցառումները: Միևնույն ժամանակ, Արտադրական տնօրինության ենթակայությամբ գործող Արտադրության սպասարկման բաժինը ապահովում է ջրի արդյունավետ օգտագործումը արտադրական բոլոր գործընթացներում:

Մենք շահագործում ենք ջրառի 13 կետ՝ ներառյալ Մականաջուր, Սախար 1 և 2, Ողջի կետերը, որտեղից ջուրը մղվում է Աղացի կայանի համար նախատեսված ռեզերվուարներ: Արծվանիկի պոչամբարային տնտեսության արտանետման մեկ կետից պարզեցված ջուրը մղվում է Աճանան գետ: Իսկ մյուս պոմպակայաններից ջուրն ապահով թափվում է Գեղի գետ և Լեռնաձորի գետակ: Ողջի գետ արտանետվող ջուրը երբեմն գերազանցում է թույլատրելի սահմանը պարզեցումից հետո, ինչը Ընկերության ուշադրության կենտրոնում է, և այժմ քննարկվում են խնդրի լուծման մի քանի տարբերակներ:

2023 թ. իրականացրել ենք ջրառի կետերի ռիսկերի գնահատում, համաձայն ISO 14001:2015 ստանդարտի՝ օգտագործելով ռիսկի 5x5 մատրիցը՝ հնարավոր վտանգները բացահայտելու համար: Հաշվի առնելով ջրի կարևորությունը արտադրության մեջ՝ այս գնահատումը թույլ է տալիս մեզ մեղմել կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած ջրի սակավության հետ կապված ռիսկերը:



GRI 303-2, GRI 303-3, SASB EM-MM-140A.1

ՎԵՐՑՎԱԾ ՋՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՎԱԼԸ (ՄԵԳԱԼԻՏՐԵՐՈՎ)[25]

Ցուցանիշ	2022 թ.	2023 թ.	Տոկոսի փոփոխութ.
Վերցված ջրի ընդհանուր ծավալը	49,088	47,164	-3.92
մակերևութային ջրեր՝ ներառյալ գետերը և այլ ջրեր	48,943	47,027	-3.91
երրորդ կողմին պատկանող ջուր (քաղաքային և ջրամատակարարման այլ համակարգեր)	145	137	-5.52

Ջրառի ընդհանուր ծավալը կազմել է 47,164 մեգալիտր: Օգտագործում ենք ջրառի 11 կետ, «Արցախ» դրենաժային թունելը և Քաջարանի, Կապանի և Երևանի ջրամատակարարման ցանցերը: Նշված ծավալի մեծ մասն օգտագործվել է տեխնիկական նպատակներով և փոշու նստեցման համար, իսկ մնացած մասն օգտագործվել է կոմունալ և կենցաղային կարիքների համար:

Վերցված ջրի դասակարգումը ցույց է տալիս, որ 44,006.997 մեգալիտրը քաղցրահամ ջուր է, որտեղ ընդհանուր լուծված պինդ նյութերի քանակը (TDS) ≤ 1000 մգ/լ, մինչդեռ 3,157.293 մեգալիտրը դասակարգվել է որպես «այլ» կարգի ջուր, որտեղ ընդհանուր լուծված պինդ նյութերի քանակը >1000 մգ/լ:

Համաձայն Համաշխարհային ռեսուրսների ինստիտուտի (WRI) ջրի ռիսկի գնահատման առցանց գործիքի՝ մեր ոչ մի տարածաշրջան չի դասակարգվում որպես ջրի ելակետային մակարդակի բարձր (40-80%) կամ ծայրահեղ բարձր (>80%) անբավարարություն (Baseline Water Stress) ունեցող: Սակայն ջրի ելակետային մակարդակի չափավորից-միջին անբավարարություն (>20%) ունեցող տարածքները ներառում են Ծաղկար գետի Ծաղկար 1/ + Ծաղկար 2 ջրառի կետերը/+ Փխրուտ գետի Փխրուտ կետը և Ողջի գետի Ողջի կետը:

[25] Ստորգետնյա ջրեր, ծովի ջուր կամ արդյունաբերական ջուր չեն օգտագործվել:

ԲԱՑ ԹՈՂՆՎՈՂ ՋՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՎԱԼԸ (ՄԵԳԱԼԻՏՐԵՐՈՎ)[26]

Ցուցանիշ	2022 թ.	2023 թ.	Տոկոսի Փոփոխութ.
Բաց թողնվող ջրի ընդհանուր ծավալն ըստ վերջնակետի	**41,359**	**36,692**	**-11.28**
մակերևութային ջրեր, ներառյալ	41,320	36,654	-11.29
երրորդ կողմից աղբյուրներից	39	38	-2.56
Բաց թողնվող ջրի ընդհանուր ծավալն ըստ որակի կատեգորիայի	**41,359**	**36,692**	**-11.28**
քաղցրահամ ջուր	0	23	-
այլ	41,359	36,669	-11.34

2023 Թ. ԱՐՏԱՆԵՏՎԱԾ ՋՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՎԱԼԻ ԲԱՑՎԱԾՔ

Բացթողնման կետեր	Կեղտաջրի կատեգորիա	Կեղտաջրերի ծավալ (մեգալիտրերով)	Բացթողնման տվյալներ
Աճանան գետ (Ողջի գետի նորաշենիկ վտակ)	Այլ կարգի ջուր (տեխնոլոգիական թափոնաջրեր)	36,631	Արծվանիկի պոչամբարի ջրեր
Գեղի գետ	ստանդարտ մաքուր քաղցրահամ ջուր	11	1-ին վ վերամշակման պոմպակայանի հովացման ջրի ավելցուկ
Լեռնաձորի առու	ստանդարտ մաքուր քաղցրահամ ջուր	11	2-րդ վերամշակման պոմպակայանի հովացման ջրի ավելցուկ
Ողջի գետ	ստանդարտ արդյունաբերական մաքուր քաղցրահամ ջուր	1	հանքանյութի նմուշների կտրման տեղամասից մեխանիկական մաքրումից հետո բացթողնված ջուր (հավելյալ մաքրում չի պահանջվում)
Քաջարանի կոյուղու կոլեկտոր	արդյունաբերական և կենցաղային, պահանջվում է մաքրում	20	կենցաղային կեղտաջրեր
Կապանի և Երևանի կոյուղու կոլեկտոր	կենցաղային, պահանջվում է մաքրում	18	կենցաղային կեղտաջրեր
Բացթողնված ընդհանուր ծավալ		**36,692**	

Ջրի արտանետման կետերում պարբերաբար իրականացվում է մոնիտորինգ՝ կասկածելի նյութերի հայտնաբերման նպատակով: Համաձայն ՄՖԿ առաջարկությունների՝ մշակվել է մոնիտորինգի պլան, որը հանդիսանում է ISO համակարգի մաս՝ հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը: Թափանցիկությունն ու հաշվետվողականությունն ապահովելու նպատակով՝ եռամսյակային կտրվածքով մոնիտորինգի հաշվետվությունը ներկայացնում ենք Շրջակա միջավայրի նախարարություն[27]:


Արտանետված ջրի ծավալը հաշվի առնելով՝ ջրի ընդհանուր սպառումը կազմում է 10,472.4 մեգալիտր, ինչը կազմում է բոլոր համապատասխան գետերի և վտակների ընդհանուր ջրի 1.954% — ը (535,994.6 մեգալիտր):

Գեղիի ջրամբարում ջրի պաշարների ծավալի արձանագրված փոփոխությունը կազմում է 8,930.8 մեգալիտր: Այս տվյալները ստացվում են շարունակական մոնիտորինգի և չափումների հիման վրա:

[26] Արծվանիկի պոչամբարից Աճանան գետ արտանետվող թափոնաջրերի ծավալը չափվել և որոշվել է ջրաչափի միջոցով: Մնացած բոլոր դեպքերում արտանետվող ջրի ծավալը որոշվել է օգտագործված ջրի ծավալների վրա հիմնված հաշվարկով:

[27] Հաշվետվությունը կարելի է գտնել շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում:

ՋՐԻ ՍՊԱՌՈՒՄԸ (ՄԵԳԱԼԻՏՐԵՐՈՎ)




Մենք աշխատում ենք ներդնել բնական ռեսուրսների կրկնակի օգտագործման և պահպանման լուծումներ, որոնք անվնաս են շրջակա միջավայրի համար: Այս ոլորտում նշանակալի ծրագրերից մեկը խտացուցիչի տեղադրումն է, ինչը թույլ է տալիս խտացնել պոչանքը և վերօգտագործել տեխնիկական ջրի մոտ 25%-ը հարստացման գործընթացում: 2023 թ. մենք միջազգային ընկերությունից պատվիրեցինք մի նախագծի մշակում՝ այս ոլորտում նորագույն լուծումներ ներդնելու նպատակով: Հաշվի առնելով ծրագրի և հարակից ենթակառուցվածքների մասշտաբը՝ շինարարության սկիզբը նախատեսված է 2024 թ-ին, իսկ շահագործման մեկնարկը՝ 2025 թ-ին: Հաջողության դեպքում նախատեսվում է կրկնակի օգտագործվող ջրի ծավալն էլ ավելի մեծացնել:

Ընկերությունը նախատեսում է պատվիրել ջրի հաշվեկշռի գնահատում՝ հաշվի առնելով իր ներկայիս առտադրական հզորությունները և 2024 թ. նպատակները: Գնահատումը պետք է ներառի մեր ամբողջ գործունեությունը՝ թույլ տալով օպտիմալացնել ջրի կառավարումը, կանխատեսել հետագա կարիքները, և հայտնաբերել բացերն ու բացթողումները, ինչպես նաև այն գործողությունները, որոնք պահանջվում են տարեկան արտադրական ծավալները պահպանելու համար:

Ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման համար 2023 թ. Քաջարան համայնքի հետ համատեղ նախաձեռնել ենք համայնքի կոյուղաջրերի մաքրման ծրագիր: Մի շարք քննարկումներ են տեղի ունեցել հավանական լուծումների վերաբերյալ, իսկ վերջնական որոշումները սպասվում են 2024 թ-ին: Ջուրը նախատեսվում է կրկնակի օգտագործել արտադրության մեջ՝ այդպիսով նվազեցնելով քաղցրահամ ջրի սպառումը:

ՋՐԻ ԱՌԱՎԵԼ ԶԳԱԼԻ ՍՊԱՌՈՒՄԸ ԳՐԱՆՑՎՈՒՄ Է ԱՂԱՑՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ (ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ) ՀԱՆՔԱՔԱՐԻ ՋԱՐԴՄԱՆ, ՄԱՆՐԱՑՄԱՆ և ՖԼՈՏԱՑԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ: ՍՊԱՌՄԱՆ ԾԱՎԱԼԸ ԿԱԶՄՈՒՄ Է 47,026 ՄԵԳԱԼԻՏՐ, ԻՆՉԸ ԿԱԶՄՈՒՄ Է ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՋՐԻ 99.997%-Ը:



ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ. ԹԱՓՈՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՀԵՌԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՏՈՒԿ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

GRI 3-3, SASB EM-MM-150A.10, GRI 306-1, GRI 306-2, GRI 306-3, SASB EM-MM-150A.7

Մենք առաջնահերթություն ենք տալիս թափոնների պատասխանատու կառավարմանը մեր գործունեության բոլոր ոլորտներում: Բնապահպանության բաժինը, իր աշխատակիցների հետ, որոնք մասնավորապես պատասխանատու են թափոնների կառավարման համար, վերահսկում է գործընթացի բոլոր փուլերը՝ թափոնների դասակարգումից և հավաքումից մինչև հեռացում՝ կենտրոնանալով կայուն գործելակերպի վրա: Բարձր ռիսկային նյութերի արդյունավետ կառավարման համար գործում է նաև Վտանգավոր թափոնների կառավարման պլան:

Պարբերաբար ստուգվում է թափոնների կառավարման մեր պրակտիկան, և աշխատանքների կատարումը, այդ թվում՝ թափոնների կրճատումը, վերամշակման մակարդակները և կարգավորող ստանդարտներին համապատասխանությունը վերահսկվում է հիմնական չափորոշիչների կիրառման միջոցով: Թափոնների կառավարման մեր համակարգը համապատասխանում է տեղական և միջազգային չափորոշիչներին, ինչպիսիք են ISO և IFS ստանդարտները:

2023 թվականի կարևորագույն թարմացումները ներառում էին բաժինների միջև համակարգման բարելավումը՝ թափոնների կառավարումը բարելավելու նպատակով, և Թափոնների կառավարման պլանի վերանայումը՝ նոր կանոնակարգերի պահանջներին համապատասխանելու նպատակով: Մենք նաև ձեռնարկել էինք կարևոր քայլեր, այդ թվում՝ լյումինեսցենտային լամպերի արգելումը, վերամշակման հնարավորությունների բացակայության պատճառով և պլաստիկի փոխարեն կտորե պարկերի օգտագործման խրախուսումը:

Ընկերությունը հավաքում և հեռացնում է տարբեր տեսակի թափոններ՝ օգտագործելով հատուկ կառավարման գործընթացներ: Դրանց թվում են՝


- Մեքենաների և տեխնիկական աշխատանքներում օգտագործվող կապարե և գրասենյակային սարքերի մարտկոցներ,
- Բանեցված յուղեր՝ տեխնիկայի և մեքենաների սպասարկումից,
- Մետաղի ջարդոն, աղտոտված ավազ և լաբորատոր թափոններ մետաղների մշակումից,
- Շինանյութեր և վտանգավոր նյութերով կեղտոտված կտորեղեն:

Հատուկ թափոնների կառավարման գործընթացներ իրականացնելու, այդ թվում՝ յուղերի և կտորների պիրոլիզի, և նոր արտադրանք ստանալու համար մետաղների վերամշակման նպատակով, Ընկերությունը համագործակցում է այս ոլորտում գործունեություն իրականացնելու հատուկ լիցենզիա ունեցող երրորդ անձանց հետ: Յուրաքանչյուր ամիս շրջակա միջավայրի պահպանության համար պատասխանատուն արտադրամասերից հավաքվում են թափոնների վերաբերյալ տվյալները՝ ապահովելով դրանց ճշգրիտ գրանցումը Բնապահպանական բաժնի տվյալների բազայում՝ կանոնակարգերին համապատասխանության ապահովմանը և թափոնների արդյունավետ կառավարմանը հետևելու համար:

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԵԼ Է 36,384,525 ՏՈՆՆԱ ԹԱՓՈՆ, ՈՐԻՑ 21,232,189 ՏՈՆՆԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐՆ ԵՆ, ԻՍԿ 15,152,336 ՏՈՆՆԱՆ՝ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԸ: 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԵՄԱՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՎԱԼՆԵՐՆ ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ 0.42%-ՈՎ[28]:

[28] Աճը պայմանավորված է շինարարական աղբի ծավալների ավելացմամբ:

ԹԱՓՈՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄՆ ԸՍՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ (ՏՈՆՆԱ)





3,613 տոննա

Առաջացած թափոնների ընդհանուր քանակից 3,613 տոննան ուղղվել է օգտահանման

GRI 306-4

Առաջացած թափոնների ընդհանուր քանակից 3,613 տոննան ուղղվել է օգտահանման: Դրանց թվում էին այնպիսի նյութեր, ինչպիսիք են կապարե լիցքաթափված մարտկոցները, բանեցված շարժիչային յուղերը, դիզելային շարժիչների յուղերը և օդաճնշական անվադողերը, իսկ գունավոր մետաղներ պարունակող թափոնների զգալի մասը վերամշակվում է: Վտանգավոր թափոններից վերամշակման և վերաօգտագործման նախապատրաստմանն է ուղղվել 1,734 տոննա թափոն, իսկ արտադրության և սպառման թափոններից՝ 1,879 տոննա, որոնք նույնպես հիմնականում ուղղվել են վերամշակման և օգտահանման:

GRI 306-5

2023 թվականին մենք հեռացման ենք ուղղել 36,380,298 տոննա թափոն: Սա ներառում էր մեծ քանակությամբ պոչանքներ, շինարարական թափոններ, դատարկ ապարներ և նվազագույն քանակությամբ փայտանյութի թափոններ: Վտանգավոր թափոնների հեռացումը հիմնականում իրականացվել է աղբավայրերում տեղադրման միջոցով, որոշ մասը՝ այրման միջոցով: Արտադրության և սպառման թափոնները հիմնականում ուղղվել են աղբավայրեր՝ նվազագույն այրմամբ:

Մենք շարունակաբար ուսումնասիրում ենք թափոնների մշակման և օգտահանման նոր տեխնոլոգիաներ՝ աղբավայրեր ուղղվող թափոնների քանակը նվազեցնելու համար: Թափոնների կառավարման մեր թիրախները որոշվում են՝ ելնելով առաջացող թափոնների տեսակներից, դրանց հետ կապված օգտահանման և հեռացման ծախսերից և շրջակա միջավայրի վրա Ընկերության գործունեության ազդեցությունից: Մենք ակտիվորեն փնտրում ենք հուսալի գործընկերներ, որոնք կաջակցեն այս գործողությունների իրականացմանը:

Մշակվում են փայտանյութի թափոնների վերաօգտագործման ծրագրեր, և Ընկերության ղեկավարությունը ներկայումս ուսումնասիրում է անվադողերի և ռետինի վերամշակման բիզնես պլանը: Մենք նպատակ ունենք նվազագույնի հասցնել թափոնների առաջացումը և հնարավորության դեպքում վերաօգտագործել նյութերը, ինչը նպաստավոր կլինի թե՛ շրջակա միջավայրի, թե՛ բիզնեսի աճի համար: Ընկերությունը նախատեսում է մինչև 2025 թվականը զգալիորեն ավելացնել թափոնների վերամշակման ծավալները:



Պինդ թափոնների կառավարման մեր ռազմավարությունը ներառում է՝

Վերամշակում (օգտահանում).

Ավելացնել մի շարք նյութերի, օրինակ՝ մետաղյա, պլաստիկ և թղթե թափոնների օգտահանմանն ուղղված միջոցառումները:

Կրճատում.

Հենց աղբյուրում թափոնների կրճատման ռազմավարության իրականացում, օրինակ՝ նյութերի օգտագործման օպտիմալացում և փաթեթավորման ծավալների կրճատում:

Կրկնակի օգտագործում.

Նյութերի վերաօգտագործման խթանում, ինչպես օրինակ՝ մաքրված կեղտաջրերի վերաօգտագործումը արդյունաբերական գործընթացներում:

Վտանգավոր թափոնների դեպքում մեր նպատակներն են՝

Ծավալների կրճատում.

Սահմանել վտանգավոր թափոնների տարեկան կրճատման թիրախներ և բարելավել թափոնների առանձնացման մեթոդները:

Առավել անվտանգ այլընտրանքների կիրառում.

Իրականացնել վտանգավոր թափոնների առաջացումը նվազագույնի հասցնող գործընթացներ:

ԲԱՑԻ ԱՅԴ, ՆԱԽԱՏԵՍՈՒՄ ԵՆՔ ԸՆԴԼԱՅՆԵԼ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՂՋ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԻ ԿԻՐԱՌՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ:

ՕԴԻ ՈՐԱԿ ԵՎ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ. ԱՌՈՂՋ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ

GRI 3-3

2020 ԹՎԱԿԱՆԻՑ Ի ՎԵՐ ՄԵՆՔ ՆՊԱՏԱԿԱԴՐՎԵԼ ԵՆՔ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՆԵԼ ՄԵՐ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԱՍՊԻՐԱՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ՝ ՄԵՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՌՈՂՋ և ԱՆՎՏԱՆԳ ՄԻՋԱՎԱՅՐ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ: ԲԱՑԻ ԱՅԴ, ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆՔ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՆԵԼ ՄԵՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐԿԸ՝ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՄԹՆՈԼՈՐՏ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԸ ՄԹՆՈԼՈՐՏ ԿՐՃԱՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ:

Փոշու արտանետումների խնդիրը լուծելու համար ստեղծել ենք հատուկ թիմ, որը վերահսկում է ասպիրացիայի համակարգի աշխատանքը առաջնային ջարդիչ կայանում՝ ապահովելով հավաքված փոշու կրկնակի օգտագործումը հարստացման գործընթացում: Համագործակցելով Բնապահպանական բաժնի հետ՝ մեր հատուկ նշանակված թիմը, մշակում և տեղադրում է նմանատիպ համակարգեր նաև այլ արտադրական օբյեկտներում:



[29] Սնդիկի (Hg) և կապարի (Pb) մոնիտորինգ չի իրականացվում:

[30] Համապատասխան նորմերով սահմանված մթնոլորտ արտանետումների այլ ստանդարտ կատեգորիաներ. ծծմբաթթվի գոլորշի՝ 0.104 տոննա/տարի + Ազոտական թթվի գոլորշի՝ 0.128 տ/տարի + Աղաթթվի գոլորշի՝ 0.162 տ/տարի + CxHy (ածխաջրածիններ առանց ՑՕՄ-ի)՝ 16.213 տ/տարի:

Օդի որակի կառավարման պլանը և Արտանետումների կանխարգելման կառավարման պլանը մշտադիտարկում են մթնոլորտ աղտոտիչների արտանետումը: Կայուն զարգացման գծով տնօրենը և Բնապահպանական բաժինը զբաղվում են այդ արտանետումների հետ կապված խնդիրների լուծմամբ:

Մենք հետևումն ենք Մոնիտորինգի պլանին, որը ներառում է արտանետումների բոլոր սահմանային արժեքների կանոնավոր չափումներ և վերահսկում: Անհրաժեշտության դեպքում մենք անհապաղ միջոցներ ենք ձեռնարկում հնարավոր ռիսկերը վերացնելու կամ նվազագույնի հասցնելու համար: Հեռանկարում՝ մինչև 2024 թվականը, մենք նախատեսում ենք էլ ավելի ընդլայնել մոնիտորինգի մեր հնարավորությունները, մթնոլորտ արտանետումների և փոշու մոնիտորինգի կետերի քանակը հասցնելով 12-ի, ինչը թույլ կտա մեզ իրական ժամանակում տվյալներ ստանալ:

GRI 305-7, SASB EM-MM-120A.1

ՄԹՆՈԼՈՐՏ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ (ՏՈՆՆԱ)

Նյութ	2022 թ.	2023 թ.	Տոկոսային փոփոխություն
Ազոտի օքսիդներ (NOx)	148.04	59.63	-59.72
Ծծմբի երկօքսիդ (SOx)	5.82	0.09	-98.45
Կայուն օրգանական աղտոտիչ նյութեր (POP)	0.0	0.0	-
Ցնդող օրգանական միացություններ (VOC)	0.10	0.08	-20.00
Օդի վտանգավոր աղտոտիչներ (HAP)	0.0005	0.0000064	-98.72
Պինդ մասնիկներ (PM)	712.98	694.47	-2.60
Ածխածնի օքսիդ (CO)	208.98	154.35	-26.14
Այլ աղտոտող արտանետումներ[29]	16.60 [30]	4.31 [31]	-74.04

Մոնիտորինգի կառավարման մեր համակարգն օգտագործում է մշտադիտարկման համակարգ, տարբեր հատվածներում տեղադրված օդի մոնիտորների միջոցով: Նշված մոնիտորները տրամադրում են օդի որակի վերաբերյալ օպերատիվ տվյալներ:


Տարեկան մոնիտորինգի հաշվետվության համաձայն՝ 2023 թվականին արձանագրված օդի արտանետումների ծավալը կազմել է 913 տոննա: Այս տվյալները հիմնված են արդյունահանված հանքաքարի ծավալի վրա:



[31] Համապատասխան նորմերով սահմանված մթնոլորտ արտանետումների այլ ստանդարտ կատեգորիաներ. ծծմբաթթվի գոլորշի՝0.086 տոննա/տարի + Ազոտական թթվի գոլորշի՝ 0.106 տ/տարի + Աղաթթվի գոլորշի՝ 0.135 տ/տարի + CxHy (ածխաջրածիններ առանց ՑՕՄ-ի)՝ 3.979 տ/տարի:

ՊՈՉԱՄԲԱՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

ՊՈՉԱՄԲԱՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ



GRI 3-3, SASB EM-MM-540A.1, SASB EM-MM-540A.2, SASB EM-MM-540A.3

Արծվանիկի պոչամբարը մեր Ընկերության համար ռազմավարական նշանակություն ունեցող հիդրոտեխնիկական կառույց է, որը գտնվում է Արծվանիկ գետի ստորին հոսանքի կիրճում տեղակայված հարստացուցիչ ֆաբրիկայից 34.5 կմ հեռավորության վրա: 1977 թվականից ի վեր կառույցի թույլատրված տարողունակությունը կազմում է 325 միլիոն խորանարդ մետր: 2023 թվականի դրությամբ այստեղ կուտակված պոչանքների ծավալը կազմում է 313.9 մլն մ3:

Անվտանգությունն ու շրջակա միջավայրի պահպանությունը առաջնահերթություններ են պոչամբարի կառավարման գործում: Ընկերությունը մշտական հսկողության տակ է պահում դրա կայունությունն ու շահագործման անվտանգությունը՝ առաջնորդվելով միջազգային չափանիշներով, այդ թվում՝ Կանադայի Պատվարների Կառավարման Ասոցիացիայի (CDA) պահանջներով: Միջազգային ճանաչում ունեցող փորձագետները մշակել են Արտակարգ իրավիճակների պատրաստվածության և արձագանքման պլան:
Բացի այդ, մենք պարբերաբար իրականացնում ենք անկախ աուդիտներ՝ Պոչամբարների կառավարման գլոբալ արդյունաբերական ստանդարտին (GISTM) համապատասխանությունը վերահսկելու համար, որի վերջին աուդիտը կատարվել է 2023 թվականի գարնանը:

Վերջին բարելավումները ներառում են «Գեոտեխմին» խմբի և «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից իրականացված կայունության հետազոտությունը և մոնիտորինգի առաջադեմ տեխնոլոգիաների տեղադրումը, ինչպիսիք են առցանց պիեզոմետրերը և վիբրացիոն սարքերը՝ ստորերկրյա ջրերի մակարդակների և պատվարի դեֆորմացիաների վերաբերյալ իրական ժամանակում տվյալների հավաքագրումն ապահովելու համար:
Նախատեսվում է, որ մոնիտորինգի այս համակարգը լիովին ներդրված կլինի մինչև 2024 թվականի վերջը:

Մենք իրականացրել ենք մի շարք հիմնական նախաձեռնություններ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար, ներառյալ էրոզիայի կանխարգելումը ծառատնկման և բազմամյա խոտաբույսերով հողի կայունացման միջոցով: Բացի այդ, 2025 թվականին նախատեսվում է մշակել Պոչամբարի կառավարման պլան, որը կհամապատասխանի GISTM ստանդարտներին:

Մեր մոտեցումը ներառում է նաև համայնքի ակտիվ ներգրավվածություն: Գիտակցելով հողի ձեռքբերման հետևանքները, որի արդյունքում սահմանափակվում է հասանելիությունը հողատարածքներ, Ընկերությունն սոցիալական աջակցություն է տրամադրում հինգ ազդակիր գյուղերին՝ վճարելով ամսական փոխհատուցում զբաղվածություն ապահովելու համար, իսկ պոչամբարային տնտեսությունը աշխատանքի հնարավորություններ է ստեղծում Կապանի և Քաջարանի բնակիչների ընտանիքների համար: Ընկերությունը ձգտում է սոցիալական և բնապահպանական հավասարակշռության՝ նպատակ ունենալով մինչև 2028 թվականը GISTM ստանդարտի էական ներդրմանը և մինչև 2026 թվականը հասնել պոչամբարում ջրի պարունակության 10% նվազեցման:

Վերջին ուսումնասիրությունների արդյունքում ստացված առաջարկությունների հիման վրա մենք պատվիրել ենք նոր նախագծային լուծում՝ պոչամբարի պատվարի կայունությունը բարձրացնելու համար: Նախնական նախագծային լուծումը ներառում էր 14 հորատանցք, որոնք ներկայումս շահագործվում են: 1500մմ տրամագծով հորատանցքերը նախագծված և կահավորված են պատվարում ջրի մակարդակը իջեցնելու համար:
Վերջնական նախագիծը նախատեսվում է ավարտել 2024 թվականին, և կախված եղանակային պայմաններից, մենք կձգտենք դրանից հետո ավարտին հասցնել անհրաժեշտ դաշտային աշխատանքները: Դրա հետ մեկտեղ, 2024-2025 թվականներին նախատեսում ենք պատվարում տեղադրել սեյսմիկ սենսորներ՝ պոչամբարի սեյսմիկ կայունությունը վերահսկելու համար:

Քանի որ ԶՊՄԿ-ի համար առաջնահերթություն է օբյեկտի անվտանգ կառավարումը, մենք պարբերաբար իրականացնում ենք աուդիտներ և ստուգումներ, ներառյալ տեխնիկական զննումները: Այս աուդիտներն իրականացվում են հիմնականում երրորդ կողմի կազմակերպությունների կողմից, որոնք գնահատում են ոլորտի ստանդարտներին համապատասխանությունը, բացահայտում բացթողումները և օգնում են մշակել գործողությունների պլաններ, որոնց հիման վրա իրականացվում են մեր տարեկան պլանավորման աշխատանքները: Նշված ստուգումների միջոցով կարող ենք բացահայտել հնարավոր ռիսկերը և գնահատել դրանց նվազեցմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը:

Հետևելով միջազգային լավագույն չափանիշներին՝ մենք պատվիրել ենք Արծվանիկի պոչամբարի կայունության գնահատում: Այս ուսումնասիրության համար Ընկերությունը ներգրավել է հեղինակավոր միջազգային ընկերություն: Գնահատումը ներառում է նախկին ուսումնասիրությունների վերանայում, հետազոտությունների և դաշտային այցելությունների հիման վրա ռիսկերի գնահատում, ինչպես նաև պատվարի կայունության մանրակրկիտ գնահատման համար լրացուցիչ հետազոտությունների կատարման առաջարկներ: Փորձագետների առաջարկությունները նպատակ ունեն հետագայում բարելավել պատվարի անվտանգությունը և կայունությունը:

ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ՝ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎՆԱՍՈՒՄԻՑ ԽՈՒՆԱՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ

GRI 3-3, GRI 304-1, GRI 304-2, GRI 304-3, GRI 304-4

Ընկերությունը հանձն է առել պահպանել կենսաբազմազանությունը, հատկապես խոցելի կենսամիջավայրերի կամ պահպանվող տարածքների մերձակայքում: Շրջակա միջավայրի պահպանման մեր պլանները ներառում են մանրակրկիտ գնահատումներ՝ապահովելու, որ մեր գործունեությունը բացասական ազդեցություն չունենա կարևորագույն էկոհամակարգերի վրա:

Կենսաբազմազանության մեր նպատակներն ուղղված են տեղական էկոհամակարգերի բարելավմանը՝ տեղական տեսակների պոպուլյացիաների ավելացման, ինվազիվ տեսակների վերահսկման և խախտված կենսամիջավայրերի վերականգնման միջոցով: Կանոնավոր գնահատումները և նպատակային միջոցառումներն օգնում են մեզ մեղմել հնարավոր ազդեցությունները՝ համապատասխանեցնելով մեր ջանքերը կայունության և շրջակա միջավայրի պահպանման սկզբունքներին:

Այս գործողություններն իրականացվում են Կենսաբազմազանության կառավարման պլանի համաձայն, որոնք համապատասխանեցված են ազգային և միջազգային բնապահպանական ստանդարտներին[32]:

Այս նախաձեռնությունները ղեկավարում է բնապահպանական բաժինը, որը վերահսկում է տեղում իրականացվող պահպանման գործողությունները՝ համագործակցելով արտաքին փորձագետների հետ: 2023 թվականին Ընկերությունն ընդլայնել է մոնիտորինգի միջոցառումները՝ հայտնաբերելով տեղական և նոր գրանցված տեսակներ, միաժամանակ ուժեղացնելով ինվազիվ տեսակների, այդ թվում՝ Երկնածառ բարձավունու (Ailanthus altissima) դեմ պայքարը՝ տեղական էկոհամակարգերը պաշտպանելու համար:



Տեղական կենսաբազմազանության պահպանմանը Ընկերությունը նպաստում է կենսամիջավայրերի վերականգնման ծրագրերի միջոցով: 2023 թվականին մենք վերականգնել ենք 5.2 հեկտար տարածք Արծվանիկի պոչամբարի մոտակայքում և նախաձեռնել ենք ավելի մեծ՝ 40 հեկտար տարածքի վերականգնում՝ տնկելով ավելի քան 10,700 ծառ՝ պաշտպանիչ անտառային շերտեր ստեղծելու համար: Նախաձեռնողական այս մոտեցումն ապահովում է էկոհամակարգերի դիմակայունությունը Ընկերության օբյեկտներում և դրանց շրջակայքում:

Մեր մոնիտորինգի ծրագիրը արժեքավոր տվյալներ է տրամադրում հազվագյուտ և անհետացող տեսակների առկայության վերաբերյալ: 2023 թվականին մենք փաստագրել ենք այնպիսի տեսակներ, ինչպիսիք են Զանգեզուրի զանգակը (Campanula zangezura)



և Բոշխ սակավածաղիկը (Carex oligantha Steud), ինչպես նաև խոցելի կենդանատեսակներ, այդ թվում՝ Կովկասյան կատվաձագը (Telescopus fallax) և Հայկական իժը: Այս բացահայտումները ընդգծում են տեղական էկոհամակարգի զգայունությունը և զգուշավոր կառավարման անհրաժեշտությունը:

Նախատեսում ենք 2024 թվականին ընդլայնել ռեկուլտիվացման մեր գործողությունները՝ վերականգնելով 10 հեկտար Արծվանիկի տարածքում: Ընկերության երկարաժամկետ նպատակները ներառում են կենսաբազմազանության ընդլայնում՝ կենսամիջավայրերի վերականգնման միջոցով, տեսակների մոնիտորինգի և բնապահպանական կազմակերպությունների հետ համագործակցության խորացում:

Ընկերության այս մոտեցումը նպատակ ունի մնայուն դրական բնապահպանական ժառանգություն թողնել՝ բարելավելով էկոհամակարգի դիմակայունությունը և միաժամանակ նպաստելով էկոլոգիական կայունության մեր ավելի ընդարձակ նպատակների իրականացմանը:

[32] Նշված ստանդարտների թվում են ՎԶԵԲ-ի բնապահպանական և սոցիալական կատարողական պահանջները և ՄՖԿ/ՀԲ-ի Կատարողական ստանդարտները (մասնավորապես՝ ԿՍ6):

ՀԱՆՔԻ ՓԱԿՈՒՄ, ՀՈՂԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԵՎ ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑԻԱ. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՀԱՍՑՆԵԼՈՒ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ

GRI 3-3

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՐ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՄԵՆ ՏԱՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ԵՆՔ ՊՈՂԱՄԲԱՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑՈՒՄ՝ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՎ Ի ՍԿԶԲԱՆԵ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՀԱՆՎԱԾ ՀՈՂԻ ՎԵՐԻՆ ՇԵՐՏԸ:



Ռեկուլտիվացիոն այս աշխատանքներն իրականացվում են Ընկերության միջոցների: Բնապահպանական պատասխանատվությունը մեր առօրյա գործունեության մեջ ներառելով՝ մենք երաշխավորում ենք վերականգնման գործողությունների իրականացումը ակտիվ հանքարդյունահանմանը զուգահեռ:

2016 թվականին մշակված Հանքի փակման և ռեկուլտիվացման մեր պլանն թարմացվում է՝ վերջին զարգացումներն արտացոլելու համար: Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհրդի (ICMM) առաջարկություններին հետևելով՝ Ընկերությունը գնահատել է Արծվանիկի պոչամբարի ներկայիս ռեկուլտիվացիոն շերտը: 2024 թվականին ավարտվող ուսումնասիրության հիման վրա կազմել ենք ընթացիկ փակման օպտիմալացված նախագիծ՝ օգտագործելով 0.5 մետր հաստությամբ հողային շերտ կապիլարային միջնաշերտի վրա՝ ջրաթափանցելիությունը զգալիորեն նվազեցնելու համար՝ ապահովելով երկարաժամկետ կայունություն տարբեր կլիմայական պայմաններում:

Ընկերությունը մոտավորապես 7.6 մլն ԱՄՆ դոլար է հատկացրել հանքի և հարակից օբյեկտների փակման և վերականգնման այս աշխատանքների իրականացմանն աջակցելու նպատակով: Այս միջոցները ծածկում են տարբեր գործողությունների, այդ թվում՝ հողերի վերականգնման, ենթակառուցվածքների հեռացման և մշտական բնապահպանական մոնիտորինգի ծախսերը: Վերականգնման մեր ռազմավարությունը ներառում է տեղանքի ռելիեֆի սահմանների փոփոխություն, բնական բուսականության վերականգնում, ջրահոսքի կառավարում և հողի ու ջրի որակի մոնիտորինգ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները արդյունավետ կերպով մեղմելու համար:

2023 թվականին Ընկերությունը զգալի առաջընթաց է արձանագրել փակման ու վերականգնման մեր աշխատանքներում, ներառյալ խախտված տարածքների հաջող ռեկուլտիվացումը, բուսականության վերականգնման ծրագրերը և լանդշաֆտի կայունացումը՝ էրոզիան կանխելու համար: Այս նախաձեռնությունները կարևոր են տեղական էկոհամակարգերի վերականգնմանն աջակցելու և մեր օբյեկտների անվտանգ փակումն ապահովելու համար:

Վերականգնողական մեր գործողությունների արդյունավետությունը գնահատելու համար մենք հետևում ենք հիմնական կատարողական ցուցանիշներին, ինչպիսիք են վերականգնված հողատարածքը, բուսածածկույթը, ջրի որակը և կենսաբազմազանության մակարդակները: Կանոնավոր մոնիտորինգը թույլ է տալիս մեզ հասնել մեր շրջակա միջավայրին ուղղված նպատակներին և հետևել ոլորտի չափանիշներին համապատասխանությանը՝ ապահովելով մեր առաջընթացի թափանցիկություն:

Տարիների ընթացքում մենք հաջողությամբ փակել և վերականգնել ենք երեք պոչամբար՝ Դարազամի, Ողջի և Փուխրուտ, հետևելով շրջակա միջավայրի պատասխանատու կառավարման մեր հանձնառությանը և ամուր հիմքեր ստեղծելով ապագա փակման ծրագրերի համար:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԱՅՍ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

GRI 2-2, GRI 2-3, GRI 2-4, GRI 2-5

Կայուն զարգացման այս հաշվետվությունը նախատեսված է շահագրգիռ կողմերի լայն լսարանին ծանոթացնելու ԶՊՄԿ-ի գործունեության արդյունքներին: Այն ներկայացնում է երկրի տնտեսական և սոցիալական բարօրության մեջ մեր ներդրման ընդհանուր պատկերը և մանրամասն նկարագրում է շրջակա միջավայրի վրա Ընկերության գործունեության ազդեցության աստիճանը:
Շահագրգիռ կողմերի հետ բարձր մակարդակի և արդյունավետ հաղորդակցություն պահպանելու մեր հանձնառության մասին վկայում է կայուն զարգացման ոլորտում հաշվետվողականության առաջատար համաշխարհային չափանիշներին հետևելու մեր հանձնառությունը:

Սույն հաշվետվությունը պատրաստվել է Գլոբալ հաշվետվողականության նախաձեռնության (GRI)-ի կայուն զարգացման ոլորտում հաշվետվողականության ստանդարտների և Կայուն զարգացման ոլորտում հաշվապահական հաշվառման չափանիշների խորհրդի (SASB) կայուն զարգացման մասին հրապարակման սկզբունքների և մոտեցումների համաձայն:

Ոչ ֆինանսական տեղեկատվության հրապարակման սահմաններն ընդգրկում են «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի տարածքը և չեն ներառում նրա դուստր ընկերությունները, իսկ ֆինանսական տեղեկատվությունը, ընդհակառակը, ներառում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն և «Լեռ-Էքս» ՍՊԸ-ն, ինչպես նշված է աուդիտի ենթարկված միասնական ֆինանսական հաշվետվություններում:

ԶՊՄԿ-ի կայուն զարգացման հաշվետվությունները հրապարակվում են ամեն տարի, հաշվետու ժամանակաշրջանը համընկնում է ֆինանսական հաշվետվությունների ժամանակաշրջանի հետ: Սույն զեկույցը ներկայացնում է ԶՊՄԿ-ի տվյալների ամփոփումը 2023 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար: Զեկույցի հրապարակման ամսաթիվը՝ 2024-ի դեկտեմբերի 6-ն է:

Նախորդ հաշվետու ժամանակաշրջանների տվյալների փոփոխություններ չեն կատարվել, եթե հաշվետվությունում այլ բան նշված չէ: Այս հաշվետվության արտաքին վերլուծություն դեռ չի իրականացվել. այնուամենայնիվ, Ընկերությունը գիտակցում է ստուգման կարևորությունը և ուսումնասիրում է մեր հետագա հաշվետվությունների համար արտաքին վերլուծության հնարավորությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԷԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

GRI 3-1

2023 թվականին մենք մանրակրկիտ վերլուծել ենք էական թեմաները և Ընկերության գործունեությունում, ինչպես նաև ներքին և արտաքին միջավայրերում էական փոփոխություններ չենք հայտնաբերել: Ուստի, էական թեմաները, որոնք արտացոլում են տնտեսության, շրջակա միջավայրի և մարդկանց վրա Ընկերության ամենաէական ազդեցությունները (ներառյալ մարդու իրավունքների վրա ազդեցությունները) բացահայտված կայուն զարգացման նախորդ հաշվետվության պատրաստման ընթացքում, նույնպես համարվում են կարևոր 2023թ. հաշվետվության կազմման համար:

Էական թեմաների բացահայտման համար իրականացված էականության գնահատման գործընթացը ներառում է հետևյալը.

- Հնարավոր էական ազդեցությունների ցանկի կազմում,
- Ազդեցությունների նշանակալիության գնահատում ներքին հարցման միջոցով,
- Էական թեմաների վերջնական ցանկի մշակում:

Հնարավոր էական ազդեցությունների ցանկ

Որպես կայուն զարգացման հաշվետվության անբաժանելի բաղադրիչ, մենք բացահայտել ենք Ընկերության և շահագրգիռ կողմերի համար փոխշահավետ էական թեմաները: Հավանական այս էական թեմաները հստակեցնելու համար մենք վերլուծել ենք ԶՊՄԿ-ի գործունեությունը ու ավելի լայն համատեքստով միաժամանակ հաշվի ենք առնել կայուն զարգացման հաշվետվության ներկայացման գործում ոլորտի առաջատար փորձը:

Համեմատական վերլուծություն է իրականացվել խոշորագույն միջազգային հանքարդյունաբերական ընկերությունների հետ, որի արդյունքում բացահայտվել է նրանց կողմից ընդգրկված թեմաները: Այնուհետև բացահայտված թեմաները համապատասխանեցվել են ԶՊՄԿ-ի կողմից բացահայտված էական թեմաներին: Համեմատական վերլուծության արդյունքները համադրվել են ԶՊՄԿ-ի գործունեության վերլուծության հետ՝ հաշվի առնելով ինչպես բացասական, այնպես էլ դրական ազդեցությունները:

Գնահատման արդյունքում բացահայտվել է 26 նախնական ոլորտ: ԶՊՄԿ-ի դեպքում այս ոլորտները ներկայացնում էին Ընկերության գործունեությամբ պայմանավորված կայուն զարգացման վրա փաստացի կամ հնարավոր ազդեցություն:

Ազդեցությունների նշանակալիության գնահատում. ներքին հարցում

ԶՊՄԿ-ի կայուն զարգացման վրա ազդեցությունների նշանակալիությունը գնահատելու նպատակով իրականացվել է ներքին հարցում, որին մասնակցել է ԶՊՄԿ-ի կառավարչական անձնակազմը, ներառյալ Ընկերության ղեկավարությունը, դեպարտամենտների ղեկավարները և բաժինների ղեկավարները, որոնք պատասխանատու են ԶՊՄԿ-ի գործունեության կարևորագույն ցուցիչների համար, ինչպիսիք

են արտադրությունը, բիզնեսի զարգացումը, կայուն զարգացումը, ֆինանսները, էներգիայի օգտագործման կառավարումը և անվտանգությունը:

Հարցման մասնակիցները գնահատել են ԶՊՄԿ-ի ներկայիս և հնարավոր ազդեցությունները կայուն զարգացման վրա՝ ելնելով հետևյալ չափորոշիչներից.

- Ազդեցության մասշտաբը (որքան լուրջ է կամ կարող է լինել ազդեցությունը). օրինակ՝ կյանքի որակի բարելավման և շրջակա միջավայրի դեգրադացիայի մակարդակները:
- Ազդեցության շրջանակը (որքան տարածված է կամ կարող է լինել). օրինակ՝ անձանց թիվը կամ ազդակիր տարածքը:

Օգտագործվել է 0-ից 3 գնահատման սանդղակ, որտեղ 0-ն նշանակում է ազդեցության բացակայություն, իսկ 3-ը ներկայացնում է նշանակալիության բարձր մակարդակը:

Էական թեմաների վերջնական ցանկը

Եզրափակիչ փուլում վերլուծվել են հարցման արդյունքները, և հաշվարկվել են չափանիշների համար ավելի վաղ նշված գնահատականները, ինչի արդյունքում կազմվել է ազդեցությունների առաջնահերթությունների ցանկը: Հարցման արդյունքներով միջին ազդեցության գնահատականը (3,0-ից) կազմում է 1,8՝ մասշտաբի համար, և 1,7՝ շրջանակի համար: Միջինից բարձր գնահատական ունեցող ազդեցությունները, թե՛ շրջանակի, և թե՛ մասշտաբի առումով, ձևավորել են էական թեմաների նախնական ցանկը, որը հետագայում ընդլայնվել է՝ ներառելով այն թեմաները, որոնք էական են համարվել հաշվետվության պատրաստման համար պատասխանատու ընկերության փորձագետների կողմից: Արդյունքում բացահայտվել են 19 էական թեմաներ, որոնք ներկայացված են հաջորդ բաժնում:

ԷԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿ

GRI 3-2

- Վճարումներ կառավարման մարմիններին
- Անձնակազմի կառավարում
- Տնտեսական ազդեցություն
- Կոռուպցիայի դեմ պայքար
- Համայնքների ներգրավվում
- Ջուր և կեղտաջրեր
- Կրիտիկական միջադեպերի կառավարում
- Հանրային քաղաքականություն
- Փակում և վերականգնում
- Պատասխանատվություն մատակարարման շղթայում
- Աշխատակիցների անվտանգություն
- Միավորման ազատություն և կոլեկտիվ բանակցություններ
- Պոչամբարային տնտեսություն
- Արտանետումներ մթնոլորտ
- Կլիմայի փոփոխության հարմարվողականություն և դիմակայունություն
- Թափոններ
- Կենսաբազմազանություն
- Խտրականության բացառում և հավասար հնարավորություններ
- Ջերմոցային գազերի արտանետումներ

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐ

Ջերմոցային գազերի արտանետումներ

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ, ԲԵՆԶԻՆԻ և ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ CO_2, CH_4, և N_2O ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԸ (ՏՈՆՆԱ)[33]

	Բնական գազ	Բենզին	Դիզել	Ընդամենը
CO_2	11,547.748[34]	2,552	61,221.115	75,320.86
CH_4	15.7276	8.032	5.998	29.76
N_2O	6.1418	7.363	853.589	867.09

2022-2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԳԼՈԲԱԼ ՏԱՔԱՑՄԱՆ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (GWP) ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ[35]

Ցուցանիշ	Չափման միավոր	GWP
Ածխածնի երկօքսիդ (CO_2)	տ CO_2	1
Մեթան (CH_4)	տ CO_2-համարժեք/ տ CH_4	28
Ազոտի օքսիդ (N_2O)	տ CO_2-համարժեք/ տ N_2O	265

Թափոնների կառավարում

GRI 306-3, SASB EM-MM-150A.4, SASB EM-MM-150A.7

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԳՈՅԱՑԱԾ ՈՉ ՀԱՆՔԱՅԻՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐ

Թափոնի տեսակը	Տոննա	Վտանգավորության դաս
Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան	9.84	2-nd
Բանեցված շարժիչների յուղերի թափոններ	7.75	3-rd
Բանեցված դիզելային շարժիչի յուղեր	116.52	3-rd
Բանեցված արդյունաբերական յուղեր	48.59	3-rd
Հալոգեններ չպարունակող բանեցված հիդրավլիկ յուղեր	52.16	3-rd
Ջտիչ գործվածքներ և պարկեր՝ վնասակար (անօրգանական) աղտոտվածությամբ	140.93	3-rd
Չտեսակավորված պղնձի ջարդոն	1.37	3-rd
Յուղերով աղտոտված ավազ (յուղի պարունակությունը 15%-ից պակաս)	0.10	4-rd
Այլ լաբորատոր թափոններ և քիմիական նյութերի մնացորդներ	3.97	4-rd
Ձուլման արտադրության լեռնաավազ	70.00	4-rd
Եռակցման խարամ	0.10	4-rd
Բանեցված օդաճնշիչ դողեր	485.08	4-rd
Չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ (այդ թվում թուջի և/կամ պողպատի փոշի)	1,331.45	4-rd
Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ	1,091.00	4-rd
Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	239.10	4-rd
Աղտոտված տեքստիլի այլ թափոններ	0.00	4-rd
Յուղերով ներծծված փայտաթեփ	0.27	4-rd
Յուղոտված լաթեր (յուղոտ կտորներ)	0.00	4-rd
Թափոնների ընդհանուր ծավալը	**3,598.23**	

[33] Թափոններից և կենսազանգվածից ստացված վառելիքները չեն օգտագործվում, հետևաբար դրանց վերաբերյալ տվյալներ չկան: Ոչ այրումից առաջացող արտանետումները չեն վերահսկվում կամ կառավարվում, հետևաբար դրանց վերաբերյալ տվյալներ չկան:

[34] Այս աղյուսակում ներկայացված արժեքները հաշվարկված են որպես սպառված վառելիքի ծավալի և յուրաքանչյուր վառելիք-ջերմոցային գազ զույգին բնորոշ գործակցի արտադրյալ:

[35] 100 տարվա ժամանակահատվածի համար GWP-ի արժեքները CO_2-ի դեպքում վերցվել են ԿՓՓՄԽ-ի Գնահատման հինգերորդ զեկույցից (2014թ.):

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԳՈՅԱՑԱԾ ՈՉ ՀԱՆՔԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ և ՍՊԱՌՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐ

Թափոնի տեսակը	Տոննա
Կտորների տեսքով պողպատ պարունակող թափոններ	1,758.84
Չաղտոտված պողպատե խարտուք	19.77
Մաքուր բնական փայտանյութից փայտե թափոններ	178.01
Մաքուր բնական փայտաթեփ	0.96
Մաքուր բնական փայտաթեփ	0.99
Սպառողական հատկությունները կորցրած չաղտոտված պլաստմասե տարա	78.58
Իրենց սպառողական հատկությունները կորցրած չաղտոտված ռետինե իրեր	1.26
Օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված ալյումինե հաղորդալար	3.33
Չաղտոտված ստվարաթղթե փաթեթավորման թափոններ	5.15
Թափոնների ընդհանուր ծավալը	**2,046.89**

SASB EM-MM-150A.5, SASB EM-MM-150A.6

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԳՈՅԱՑԱԾ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐ

Թափոնի տեսակը	Տոննա	Լրացուցիչ տեղեկատվություն
Վտանգավոր թափոններ	21,228,591	Հարստացուցիչ ֆաբրիկաների շլամներ և պոչանքներ
Արտադրության և սպառման թափոններ	15,150,289	Ժայռային մակաբացման ապարներ
Ընդերքօգտագործման թափոնների ընդհանուր ծավալը	**36,378,880**	

GRI 306-4

ՀԵՌԱՑՄԱՆ ՉՈՒՂՂՎԱԾ ԹԱՓՈՆՆԵՐ (ՏՈՆՆԱ)

Թափոնի տեսակը	2022 թ.	2023 թ.	Տոկոսային փոփոխություն
Վտանգավոր թափոններ	**787.62**	**1,733.55**	**120.10**
Վերաօգտագործման նախապատրաստում	766.93	137.27	-82.10
Վերաօգտագործում	20.69	1,596.28	7615.22
Արտադրության և սպառման թափոններ	**298.08**	**1,879.24**	**530.45**
Վերաօգտագործման նախապատրաստում	148.93	278.99	87.33
Վերաօգտագործում	149.15	1,600.25	972.91
Ընդամենը	**1,085.70**	**3,612.80**	**232.76**

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԵՌԱՑՄԱՆ ՉՈՒՂՂՎԱԾ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Հեռացման չուղղված թափոնների տվյալներ	Տոննա
Տեղում	9.87
Տեղամասի սահմաններից դուրս	1,723.68
Վտանգավոր թափոնների ընդհանուր ծավալը	**1,733.55**
Տեղում	0.30
Տեղամասի սահմաններից դուրս	1,878.94
Արտադրության և սպառման թափոնների ընդհանուր ծավալը	**1,879.24**

GRI 306-5

ՀԵՌԱՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԹԱՓՈՆՆԵՐ (ՏՈՆՆԱ)

Թափոնի տեսակը	2022 թ.	2023 թ.	Տոկոսային փոփոխություն
Վտանգավոր թափոններ	**20,505,331.97**	**21,229,993.08**	**3.53**
Այրում (էներգիայի վերականգնմամբ)	0.00	0.00	-
Այրում (առանց էներգիայի վերականգնման	1.91	1.98	3.66
Տեղափոխում աղբավայրեր	675.10	1,400.10	107.39
Թափոնների հեռացման այլ գործողություններ	20,504,654.96	21,228,591.00	3.53
Արտադրության և սպառման թափոններ	**15,726,253.95**	**15,150,305.11**	**-3.66**
Այրում (էներգիայի վերականգնմամբ)	0.00	0.00	-
Այրում (առանց էներգիայի վերականգնման	0.00	0.00	-
Տեղափոխում աղբավայրեր	0.00	16.11	-
Թափոնների հեռացման այլ գործողություններ	15,726,253.95	15,150,289.00	-3.66
Ընդամենը	**36,231,585.92**	**36,380,298.19**	**0.41**

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԵՌԱՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐ

Հեռացվող թափոն	Տոննա
Տեղում	21,228,591.00
Տեղամասի սահմաններից դուրս	1,402.08
Վտանգավոր թափոնների ընդհանուր ծավալը	**21,229,993.08**
Տեղում	15,150,289.00
Տեղամասի սահմաններից դուրս	16.11
Արտադրության և սպառման թափոնների ընդհանուր ծավալը	**15,150,305.11**

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԵՌԱՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ

Թափոնի տեսակը	Տոննա
Վտանգավոր թափոններ	**21,229,993.08**
Լաբորատոր այլ թափոններ և քիմիական մնացորդներ	1.98
Ձուլման արտադրության լեռնաավազ	70.00
Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ	1,091.00
Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	239.10
Հարստացուցիչ ֆաբրիկաների շլամներ և պոչանքներ	21,228,591.00
Արտադրության և սպառման թափոններ	**15,150,305.11**
Մաքուր բնական փայտանյութից փայտե թափոններ	16.11
Ժայռային մակաբացման ապարներ	15,150,289.00
Հեռացման ուղղված թափոնների ընդհանուր ծավալը	**36,380,298.19**

SASB EM-MM-150A.8

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՎԵՐԱՄՇԱԿՎԱԾ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ

Թափոնի տեսակը	Տոննա
Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան	13.670
Բանեցված շարժիչային յուղերի թափոններ	6.280
Բանեցված դիզելային յուղեր	108.690
Հալոգեններ չպարունակող բանեցված հիդրավլիկայի յուղեր	44.795
Բանեցված արդյունաբերական յուղեր	22,96
Զտիչ գործվածքներ և պարկեր՝ վնասակար (անօրգանական) աղտոտվածությամբ	139.570
Յուղով աղտոտված ավազ (յուղի պարունակությունը 15%-ից պակաս)	0.100
Բանեցված օդաճնշական դողեր	744.570
Չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ (այդ թվում թուջի և/կամ պողպատի փոշի)	515.340
Յուղոտված լաթեր	0.300
Թափոնների ընդհանուր ծավալը	**1,596.275**

SASB EM-MM-140A.2

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ և ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՆԵՐԸ [27,36]

Եռամսյակ	ԱՄՆ դոլար	Տոննա
Առաջին եռամսյակ	3,903	3,924.24
Երկրորդ եռամսյակ	3,702	3,264.05
Երրորդ եռամսյակ	3,131	423.58
Չորրորդ եռամսյակ	6,588	852.87
Ընդամենը՝ տարի	**17,323**	**8,464.74**

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐ

Մարդկային կապիտալ

ԱՆՈՐՈՇ և ՈՐՈՇԱԿԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿԱԶՄԸ ԸՍՏ ՍԵՌԻ[37]

Ցուցանիշ	2022 թ. Ընդամենը	2022 թ. Անորոշ ժամկետով աշխատողներ	2022 թ. Որոշակի ժամկետով աշխատողներ	2023 թ. Ընդամենը	2023 թ. Անորոշ ժամկետով աշխատողներ	2023 թ. Որոշակի ժամկետով աշխատողներ
Աշխատողների թիվը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,587**	**4,556**	**31**	**4,666**	**4,638**	**28**
Տղամարդ	3,574	3,552	22	3,640	3,621	19
Կին	1,013	1,004	9	1,026	1,017	9

[36] Ջրաքանակի նորմերի և հրամանների խախտումների վերացմանն ուղղված պաշտոնական իրավակիրառ միջոցառումները, որոնք հանգեցնում են վարչական տուգանքների, կապված են Արծվանիկի պոչամբարից Աճանան գետ կեղտաջրերի շարունակական արտահոսքի հետ:

[37] Ընկերության աշխատակից չհանդիսացող անձանց թիվը հաշվարկվում է աշխատողների փաստացի թվի հիման վրա, որն ապահովում է ճշգրիտ և ստուգելի տվյալներ: Տվյալները ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանի տարեվերջի դրությամբ ստացված տվյալների հիման վրա, ինչը հստակ պատկերացում է տալիս կոնկրետ ժամանակահատվածում Ընկերության աշխատակից չհանդիսացող անձանց ներգրավվածության մասին:

ԱՆՈՐՈՇ և ՈՐՈՇԱԿԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿԱԶՄԸ, ԸՍՏ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ

Ցուցանիշ	2022 թ. Ընդամենը	2022 թ. Անորոշ ժամկետով աշխատողներ	2022 թ. Որոշակի ժամկետով աշխատողներ	2023 թ. Ընդամենը	2023 թ. Անորոշ ժամկետով աշխատողներ	2023 թ. Որոշակի ժամկետով աշխատողներ
Աշխատողների թիվը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,587**	**4,556**	**31**	**4,666**	**4,638**	**28**
